



Զիաց Մեր Հանապազորդ

ԱՊՐԻԼ | ՄԱՅԻՍ | ՅՈՒՆԻՍ 2025

(April | May | June 2025)

ԼՁ. ՏԱՐԻ
Բ. ԵՌԱՄՍԵԱՅ

Անձնական եւ Ընտանեկան
Ամենօրեայ Աստուածաշունչի Ընթերցումներ
եւ Հոգեւոր Խորհրդածութիւններ

Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք
Our Daily Bread Ընկերակցութեան որուն
թոյլատուութեամբ *Our Daily Bread* գրքոյկէն
թարգմանուած են յաջորդ էջերու
խորհրդածութիւնները

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն
Armenian Missionary Association of America
31 West Century Road
Paramus, New Jersey 07652
U.S.A.

Բայց երբ մեր Փրկչին Աստուծոյ քաղցրութիւնն ու մարդասիրութիւնը երեւցաւ, ան փրկեց մեզ: [Տի. 3. 4-5]

ՔԱՂՅՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ՝ ՔՐԻՍՏՈՍՈՎ

Երբ ձեքի Ռօպինսոնը (*Jackie Robinson*), ժամանակակից Պէյսպօլի Գլխաւոր Լիկայի առաջին Սեւամորթ խաղացողը, խաղցաւ Ֆիլատէլֆիայի Շայպ (*Shibe*) դաշտին մէջ՝ 9 Մայիս 1947-ին, տասը տարեկան Տօրիսը՝ իր հօրը հետ վերեւը եղող նստարաններուն վրայ նստած էր: Երբ տարեց Սեւամորթ մարդ մը անցաւ միջանցքէն՝ դէպի իրենց կողքի նստարանը, հայրը առաջնորդեց ծանօթացումի խօսակցութեան ընթացքը: Տօրիս ըսաւ, որ խաղի հաշուեցուցակի մասին իրենց խօսակցութիւնը՝ ստիպած էր գինք մեծահասակ զգալ: Յետոյ՝ աւելի ուշ ան ըսաւ. «Ես՝ երբեք չեմ մոռցած այդ մարդը եւ իր ժպտուն դէմքը»: Տօրիսի երիտասարդ սպիտակամորթ աղջկան եւ բարի տարեց մարդուն, որ ստրուկներու զաւակ էր, խօսակցութիւնը՝ շատ հաճելի էր այդ օր:

Սակայն՝ սա՛՛ բացարձակ հակադրութիւն էր, այն ատեն-ընթեան կեցուածքին, որ Ռօպինսոնը զգացած էր այդ մրցաշրջանի մէկ այլ խաղի մը ընթացքին: Ան պատմեց, որ «ցեղային առումով՝ անոնք ամէն ինչ գոռացին իր վրայ. այդ մէկը վատ վարմունք էր»:

Վատ վարմունքը՝ չի սահմանափակուիր միայն մարզադաշտերու: Տուները, թաղերը, աշխատավայրերը եւ նոյնիսկ մեր եկեղեցիները՝ կրնան ըլլալ այնպիսի վայրեր, ուր տգեղութիւնը կը յաղթէ: Սակայն անոնք, որոնք կը հաւատան Աստուծոյ, որ բարութիւն դրսեւորեց իր Որդիին միջոցով (տե՛ս Տիտ. 3. 4), կանչուած են՝ նոյնը ընելու: Պետրոս կը գրէ. «Բոլորդ եղէք համախոհ, կարեկից, եղբայրասէր, գթած ու բարեսիրտ: Զարիքի փոխարէն՝ չարիք մի՛ հատուցանէք» (Ա. Պետ. 3 & 9): Քաղցրութիւնը կը յաղթէ, երբ անոնք որոնք ստացած են զա՛յն Հօր Աստուծոյ, առատաձեռնօրէն կը բաժնեկցին՝ ուրիշներուն հետ, քանի որ Հոգին կ'օգնէ անոնց:

Աղօթք - Սիրելի Հայր, երախտապարտ եմ՝ այն քաղցրութեան համար, որ Դո՛ւն տուած ես մեզի՝ Յիսուսի միջոցով: Ամէն:
Ե՛րբ փորձուած էք՝ ո՛չ քաղցր ու ո՛չ բարիացակամ ըլլալու:
Ինչպե՛ս քաղցրութիւն ստացած էք՝ ուրիշներէն:

Այս որդիս մեռած էր՝ եւ վերապրեցաւ, կորսուած էր՝ ու գտնուեցաւ: [Ղուկ. 15. 24]

ԱՄԷՆ ԻՆՉ ՆԵՐՈՒԱԾ Է

Իր պատմուածքներէն մէկուն մէջ, Ըրնէսթ Հէմինկուէյ (*Ernest Hemingway*) հէքիաթ մը կը պատմէ՝ Սպանացի հօր մը մասին, որ կը ցանկար վերամիանալ իր օտարացած որդիին հետ: Տեղական օրաթերթի մը մէջ՝ կը ղնէ ծանուցում մը. «ՓԱԲՕ (PACO), ՀԱՆԴԻՊԷ ԻՆՇԻ ՀԵՏ ՄՕՆԹԱՆԱ ՀԻՒՐԱՆՈՅԸ՝ ԵՐԵՔՇԱԲԹԻ ԿԷՍՕՐԻՆ: ԱՄԷՆ ԻՆՉ ՆԵՐՈՒԱԾ Է»: Երբ հայրը կուգայ, կը տեսնէ՝ որ մեծ ամբոխ մը կը սպասէ: Ութը հարիւր Փաքօներ պատասխանած էին՝ իր ծանուցումին, ցանկալով որ իրենց ծնողները՝ ներե՛ն իրենց:

Սա՛ յուզիչ պատմութիւն մըն է, որ կը խօսի ներումի մեր խոր ցանկութեան մասին, եւ ինծի կը յիշեցնէ Յիսուսի պատմած պատմութիւնը: Հո՛ն, երիտասարդ մը՝ կը ձգէ իր հայրը փնտռելով «գելի կեանք» մը, բայց շուտով կը յայտնուի դժուարութիւններու մէջ (Ղուկ. 15. 13-14): Երբ ան «ուշքի կուգայ» եւ կը վերադառնայ տուն (հմ. 17), անոր օտարացած հայրը կը շտապէ գրկելու գինք՝ առաջ որ ան ներողութիւն խնդրելու առիթը ունենայ (հմ. 20): Իր ուրախութենէն՝ հայրը կը բացազանչէ. «Այս որդիս մեռած էր՝ եւ վերապրեցաւ, կորսուած էր՝ ու գտնուեցաւ» (հմ. 24): Այս պատմութեան մէջ, հայրը կը ներկայացնէ Աստուած, որդին մեզ եւ երկիրքի ուրախութիւնը՝ կ'երեւի, երբ մենք ալ նոյնպէս կը վերադառնանք մեր Երկնաւոր Հօր մօտ:

Ներողամտութիւնը՝ ծանրութիւնը կը վերցնէ մեղաւորին հոգիէն: Սակայն՝ նուէրի նման, ինչ որ մեզի կ'առաջարկուի, պէտք է ստացուի: Հէմինկուէյ բնաւ մեզի չըսեր, թէ արդեօ՞ք հայրը՝ այս պատմութեան մէջ՝ կը գտնէ իր Փաքօն՝ թէ ո՛չ: Արդեօ՞ք՝ Յիսուսի պատմութեան մէջ՝ Հայրը կը տեսնէ իր որդիներուն եւ դուստրերուն վերադարձը: Ան՝ Իր ձեռքերը պարզած՝ կը սպասէ մեր պատասխանին:

Աղօթք - Դա՛յր, գիտակցելով իմ գոծած սխալներուս, Ընւ ներումիդ առաջարկը՝ յուզիչ է: Կ'ուզե՛մ ընդունիլ շնորհակալութեամբ: Ամէն:

Ի՞նչ պիտի զգայիր՝ եթէ ըլլայիր Փաքօի հայրը: Ի՞նչ բանը՝ կրնայ քեզ հեռու պահել Աստուծոյ տունած ներումը ստանալէ:

Մովսես Տերոզը աղաղկեց: [Ել. 15. 25]

ՉՏՐՏՆՁԵ՛Լ ԱՍՏՈՒԾՈՅ ԴԷՍ

Որպէս աղօթքի պատասխան՝ Ալէքսի ապահովագրութեան ընկերութիւնը՝ անակնկալ վճարած էր իր ատամնաբուժի ծախսերը: Այժմ անհրաժեշտ էր՝ մէ՛կ այլ բուժում մը: Ալէքս՝ տրտնջեց ու ըսաւ. «Ուրկէ՞ պիտի ճարեմ ատոր համար պէտք եղած գումարը»: Ծախսերու ծանր բեռը՝ զայրոյթի մտքեր լեցուցին անոր գլուխին մէջ:

Սակայն՝ այն պահուն երբ ատամնաբուժին կանխավճարը պէտք էր տրուէր, յանկարծ բարեկամէ մը՝ դրամական նուէր մը եկաւ: Ալէքս ըսաւ. «Ես ամէջա՛յ: Ես արդէ՛ն տեսած էի, թէ ինչպէ՛ս Աստուած ապահովեց ապահովագրութեան ընկերութեան պէտք եղած գումարը՝ նախապէս: Ես պէտք չէ՛ տրտնջէի, այլ փոխարէնը՝ Իրմէ օգնութիւն խնդրէի»:

Երբ Իսրայէլացիները մտան Սուրի (Shur) Անապատը, զգացին Աստուծոյ ազատագրումը՝ Կարմիր Ծովէն (Ել. 14): Անոր հրաշագործ օգնութիւնը, սակայն, այժմ կարծես մոռցուած էր, քանի որ անոնք կը տրտնջէին անապատին մէջ՝ խմելու ջուրի բացակայութեան պատճառով (15. 22-24): Եբրայերէն «տրտնջել» բառը կը վերաբերէր Աստուծոյ դէմ ապստամբութեան: Իսրայէլացիներու զայրացած պատասխանը կը տարբերէր՝ Մովսէսի պատասխանէն, որով Աստուծմէ օգնութիւն կը խնդրէր (Հմ. 25): Յետագային՝ Աստուած ողորմութեամբ ջուր տուաւ իր ժողովուրդին (Հմ. 25-27):

Կարիքներու ժամանակ, մենք կրնանք խուսափիլ տրտնջելէ՝ խնդրելով Աստուծմէ օգնութիւն, ինչպէ՛ս Մովսէս ըրաւ: Անկախ անկէ, թէ Անոր օգնութիւնը կու գայ հրաշալի միջոցներով, գործնական միջոցներով, մարդոց օգնութեամբ կամ տոկայու ուժով, մենք կրնանք վստահ ըլլալ, որ Ան կը լսէ մեզ եւ հոգատար կ'ըլլայ մեզի:

Աղօթք - Հաւատարիմ Աստուած, Դուն ես ինծի պէտք եղածը տուողը: Կը խնդրեմ, օգնէ՛ ինծի վստահութեամբ՝ նայելու Զեզի եւ կարիքի ժամանակ ապաւինելու Զեզի: Ամէն:

Անցեալին՝ ի՛նչը կրնար ստիպած ըլլալ քեզի տրտնջելու՝ կարիքի ժամանակ: Ինչպէ՛ս կրնաս յիշեցնել դուն քեզի, որ միշտ դիմես Աստուծոյ՝ օգնութեան համար, ինչպէս որ Մովսէս ըրաւ:

Անոնցմէ իւրաքանչիւրը ունէր ոսկիէ սկաւառակ մը՝ ... որ սուրբերուն աղօթքներն են: [Յայտ. 5. 8]

ՄԵՐ ՀՕՐ ԳԱՆՁԵՐԸ

Ատիկա՛ պարզապէս գրպանի դանակ է՝ մաշած եւ ժամանակի ընթացքին հինցած: Շեղբը աւրուած եւ կոթը կոտրած, բայց այդ՝ հօրս գանձերէն մէկն էր, որ պահուած էր տուփի մը մէջ՝ իր հագուստի պահարանին վրայ, մինչեւ որ ան ինծի տուաւ եւ ըսաւ. «Մա՛ այն քիչ բաներէն մէկն է, որ ես ունիմ քու մեծ հօրմէջ»: Մեծ հայրս մահացաւ, երբ հայրս երիտասարդ էր, եւ հայրս՝ գանձի մը պէս կը պահէր այդ դանակը, քանի որ մե՛ծ արժէք կը ներկայացնէր իրեն համար:

Աստուածաշունչը մեզի կ'ըսէ, որ Աստուած նաեւ անհաւանական գանձ մը ունի, բան մը՝ որ մենք չէինք սպասէր: Յայտնութեան գիրքին մէջ՝ մենք կը տեսնենք գահը երկիրքի մէջ, «չորս ֆակներ» եւ «քսանչորս երէցներ» շրջապատած, որոնք կ'երկրպագէին Յիսուսի (գլ. 4-5): Անոնցմէ իւրաքանչիւրը բռնած էր «սկաւառակ մը՝ խունկով լեցուն, որոնք սուրբերուն աղօթքներն են» (5. 8): Հին ժամանակներուն՝ խունկը թանկարժէք բան մըն էր, որ կը գործածէին թագաւորները. ինչպէս Յիսուսի մատուցուած ոսկին, խունկը եւ զմուռը, նշուած Մատթէոս 2. 11-ին մէջ: Մեր աղօթքները երբեմն՝ մեզի համար այդքան ալ թանկարժէք չեն թուիր, բայց Աստուած կը ցանկա՛յ, որ ատոնք բարձրանան իր առջեւ:

Յայտնութիւն 5-ը կը շեշտէ Յիսուսի արժանաւորութիւնը՝ իր անմեղ կեանքին եւ մեզի համար սիրող մահուան պատճառով: Յիսուսի արժանաւորութիւնը ցոյց կու տայ, թէ ինչո՞ւ Աստուած կը զնահատէ աղօթքները: Մեր աղօթները արժէքաւոր են Աստուծոյ համար, քանի որ մենք արժէքաւոր ենք իրեն համար: Քանի որ Ան կը սիրէ մեզ անգին, անշահախնդիր եւ ողորմած սիրով, Ան կը փափաքի, որ մենք իր մօտ մնանք աղօթքով:

Աղօթք - Սիրող Փրկի՛չ, Դուն արժանի ես «ընդունելու զօրութիւն, հարստութիւն, իմաստութիւն, ոյժ, պատիւ, փառք եւ օրհնաբանութիւն» (Յայտ. 5. 12): Ամէն:

Ինչպե՞ս պիտի սիրես Աստուծոյ՝ քու աղօթքներով այսօր: Որո՞ւ եւ ի՞նչ կրնաս բերել իր առջեւ սիրառատ աղօթքով:

Մեծ ու յոյժ գովելի է Տէրը: [Սաղմ. 145. 3]

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԿԸՆՏՐԱՆՔ ՄԸ

Միջին հաշիւով՝ մարդիկ կը ստուգեն իրենց հեռախօսը՝ օրական 150 անգամ. նոյնիսկ եթէ սեպենք մէկ վայրկեան տեւողութեամբ: Բան մը մեր ուշադրութիւնը կը գրաւէ ու այդ կ'ըլլայ ո՛չ մեր օգտին համար: Թրիսթըն Հէրրիս (Tristan Harris) կը հաւատայ ասոր: Ան այն ֆիլմի ձայներէն մէկն է, ուր կը ներկայացուի արուեստագիտութեան լաւագոյն անունները, մարդիկ՝ որոնք մեզ ուղղած են «ընկերային համացանցի» մէջ: Սակայն գովասանքի փոխարեն՝ անոնց ձայները ահագանգ կը հնչեցնեն, կոչելով մեր իրականութիւնը (եւ ֆիլմը) «Ընկերային Երկրնտրանք»: «Մենք արդիւնքն ենք: Մեր ուշադրութիւնը այն արդիւնքն է, որ կը վաճառուի գովազդ ընողներուն»: Մենք մեր ուշադրութիւնը կը դարձնենք այն ամէն բաներուն, ինչ որ մեր կարծիքով՝ արժէքաւոր է՝ կամ արժանի: Եւ շատ իրական իմաստով, ինչ բաներու՝ որ մենք ուշադրութիւն կը դարձնենք, կրնայ մեզ անոնց երկրպագուները ընել:

Այս «երկրնտրանք» բառը՝ կը մատնանշէ իրավիճակ մը, ուր պէտք է ընտրութիւն ընել: Հաւատանք՝ կամ ո՛չ, մեր հոգեւոր կեանքին մէջ մենք կը կանգնինք այնպիսի երկրնտրանքներու առջեւ, որ պէտք է ընենք ամէն օր: Այսինքն որո՞ւ կամ ի՞նչ բանի մենք երկրպագելու ենք: Սաղմոսերգուն յստակ կերպով ըրաւ իր ընտրութիւնը. «Ամէն օր քեզ պիտի օրհնաբանեմ, եւ քու անունդ դարէ դար պիտի գովաբանեմ» (Սաղմ. 145. 2): Յաջորդ համարը՝ կու տայ անոր պատճառաբանութիւնը. «Մեծ ու յոյժ գովելի է Տէրը. Անոր մեծութիւնը անհետազօտելի է» (Հմ. 3):

Սաղմոսերգուն հաւատաց, որ ո՛չինչ չի համեմատուիր Աստուծոյ մեծութեան հետ եւ այդ պատճառով՝ ան կեդրոնացուց իր ուշադրութիւնը Անոր վրայ: Աստուած՝ եւ միայն Աստուած արժանի է մեր գովաբանութեան:

Աղօթք - Աստուած՝ միայն Դո՛ւն արժանի ես գովաբանութեան:

Ո՛չինչ կը համեմատուի քեզի հետ: Ամեն:

Ի՞նչ բան քեզ կը շեղեցնէ աղօթելէ եւ Սուրբ Գիրք կարդալէ: Ի՞նչ փոփոխութիւններ կրնանս ընել, որպէսզի արուեստագիտութիւնը՝ կուռքդ չդառնայ:

Երբ ինք եւ իր ընտանիքը մկրտուեցան, աղաչեց՝ ըսելով. «Եթէ Տէրոջ հաւատարիմ կը սեպէք զիս, իմ տո՛ւնս մտէք ու հո՛ն մնացէք»: [Գործք 16. 15]

ՀԻՐՐԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍՈՎ

Միացեալ Նահանգներու քաղաքացիական իրաւունքներու պաշտպանութեան շարժման ժամանակ, Նիու Օրլինզի (New Orleans) յայտնի խոհարար Լիի Չէյս (Leah Chase) ըրաւ՝ ա՛յն ինչ որ կրնար ընել: Ան կերակուր պատրաստեց ու կերակրեց անոնց, որոնք կը տողանցէին՝ բոլոր մարդոց հաւասար իրաւունքներու համար: Ան ըսաւ. «Ե՛ս պարզապէս կը կերակրէի մարդոց: Անոնք կը պայքարէին բանի մը համար ու չէին գիտեր, թէ ի՞նչ պիտի գտնեն, երբ դուրս գացին հոն: Անոնք չէին գիտեր՝ թէ ի՞նչ կրնայ պատահիլ իրենց՝ փողոցներուն մէջ: Բայց երբ անոնք այստեղ էին, գիտէին, որ ես պիտի կերակրեմ զիրենք: Ըրի՛ այն, ինչ որ կրնայի ընել»:

Հիւրընկալութեան պարզեւր՝ երբեմն կրնայ անտեսուիլ, բայց կրնայ նոյնքան կարեւոր ըլլալ, որքան Քրիստոսով զիրար ծառայելու ձեւերը: Լիտիա անունով՝ գործարար կին մը «ծիրանի գոյն կերպաս վաճառող» (Հմ.14), Հիւրընկալութիւն ցուցաբերեց Պօղոսի եւ միւս քարոզիչներուն, որոնք Յիսուսի մասին բարի լուրը կը տարածէին Մակեդոնիայի ժողովուրդին մէջ (Գործք 16. 11-14): Ան գործածեց՝ այն ինչ որ ունէր, իր տունը, օգնելու ճամբորդող մարդերուն: Աւետարանի պատգամը ընդունելէ ետք, Լիտիա պնդեց քարոզիչներուն հանգստանալու տեղ յատկացնել ըսելով. «Եթէ Տէրոջ հաւատարիմ կը սեպէք զիս, իմ տո՛ւնս մտէք ու հո՛ն մնացէք» (Գործք 16. 15): Քաղաքացիական իրաւունքներու համար աշխատողներուն նման, Պօղոս եւ իր գործընկերները՝ պէտք չունէին մտահոգուելու ճաշի մասին Լիտիայի հիւրընկալութեան պատճառով:

Հիւրընկալութեան պարզեւները՝ կրնան օգնել բոլոր անոնց որոնք Յիսուսի կարիքը ունին: Եկէ՛ք ծառայենք ուրիշներուն:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ Զեզի՝ անոնց համար, որոնք հիւրընկալեցին զիս: Կը խնդրեմ՝ ցո՛յց տուր ինձի, թէ ինչպէ՛ս կրնամ սիրով ծառայել ուրիշներու: Ամէն:
Ե՛րբ՝ մէկու մը հիւրասիրութիւնը օգնած է քեզի: Ինչպէ՛ս կրնամ այսօր ծառայել ուրիշներուն եւ օգնել բաւարարել անոնց գործնական կարիքները:

Որովայն էն ի վեր կը շալկեմ եւ արգանդէն ի վեր կը կրեմ:
Մինչեւ ձեր ալեւորութիւնը ես ձեզ պիտի կրեմ: [Ես. 46. 3-4]

ԱՍՏՈՒԱԾ ՄԵԶԻ ՅԵՏ Է՝ ԴԱՐԷ ԴԱՐ

Դանիական (Danish) ուսումնասիրութիւն մը՝ հետազօտեց այն երեւոյթը, որ մեզմէ շատեր փորձառաքար ունեցած են. մեզ ընկալել աւելի երիտասարդ ըլլալ, քան մեր իսկական տարիքը: Հետազօտութիւնները կ'առաջարկեն հաստատ՝ որ անկախ մեր ներկայ տարիքէն, մենք բոլորս մեզ 20 տոկոսով աւելի երիտասարդ կը տեսնենք: Յիսուն տարեկանը՝ հակումը ունի ինքզինք պատկերացնելու որպէ՛ս քառասուն տարեկան: (Սա՛ կ'աղերսէ զաւելջտական ուրուագիծ մը, ուր երեխան կը մտածէ. «Օ՛, ես հինգ տարեկան եմ, բայց կը զգամ թէ ունիմ չորս տարեկան երեխայի ուժը եւ արտաքինը»):

Ակնյայտը նշելու համար գիտական ուսումնասիրութիւն չի՛ պահանջուիր. մենք բոլորս ալ կը մեծնանք: Եւ Սուրբ Գիրքը շատ բան ունի ըսելիք ատոր մասին: Եսայիի խօսքերը ուղղուեցան Իսրայէլի մը, որ ծերացած եւ յոգնած էր, բայց կ'ըսէ մեկնաբաններէն մէկը. «Այս խոստումը Իսրայէլին, որ թուլցած եւ ծերացած էր որպէս ազգ, կիրառելի է Քրիստոսի իւրաքանչիւր տարեց հետեւորդի համար»:

Մարգարէն կը յիշեցնէ մեզի Աստուծոյ տրամադրութեան մասին՝ իւրաքանչիւրին կեանիքին ընթացքին, որ հաւատարիմ եղած է Անոր: «Որովայն էն ի վեր կը շալկեմ եւ արգանդէն ի վեր կը կրեմ» (Ես. 46. 3):

Այսպիսով, երբ մենք կը տագնապինք ու կ'անհանգստանանք մեծնալու համար, Սուրբ Խօսքը կը յիշեցնէ մեզի, որ Աստուած տակաւին մեզի հետ է: Ան կը խոստանայ. «Մինչեւ ձեր ալեւորութիւնը ես ձեզ պիտի կրեմ» (Հմ. 4): Ի՛նչ տարիքի որ ալ ըլլանք (կամ 20 տոկոսով աւելի երիտասարդ տարբերակը, որ դուք կը պատկերացնեք), այսօր ընդունինք Աստուծոյ խոստումը:

Աղօթք - Տէր Աստուած, ես տկար ու յոգնած կը զգամ: Կը խնդրեմ, տո՛ւր ինձի Զու ուժը, աջակցիր ինձի եւ կրէ՛ գիս: Ամէն:
Եթէ կը պայքարիս ծերութեան հետ կապուած մտահոգութեան դէմ, թո՛ղ Եսայի մարգարէին խօսքերը մխիթարէ քեզ:

Լման խոնարհութեամբ ու հեզութեամբ, համբերատարութեամբ, սիրով իրարու հանդուրժելով: [Եփ. 4. 2]

ԶԻՐԱՐ ՀԱՆԴՈՒԹԵԼ

Անցեալ օրը՝ կարմիր լոյսին տակ կանգնեցայ՝ ինքնաշարժի մը ետին եւ ետեւի ապակիին վրայ նկատեցի՝ վառ գոյներով կաչուն թուղթ մը, որու վրայ գրուած էր. «Նոր Վարորդ: Կը խնդրեմ համբերատար ըլլալ»: Նկատի առնելով ճանապարհի ցատուժը, որու մասին մենք կը լսենք կամ փորձառաբար գիտենք, ի՞նչ հիանալի յիշեցում է՝ համբերատար ըլլալը՝ այլ վարորդներու հետ:

Երբ նայեցայ կաչուն թուղթին, մտածեցի՝ թէ ի՞նչ կ'ըլլայ, եթէ մարդիկ ցուցանակներ վերցնեն մեր առջեւ, որոնք կը զգուշացնեն մեզ, որ անոնք «Նոր Ծնողներ» են կամ «Նոր Բրիստոնեաներ»: Եթէ մենք գիտնայի՞նք թէ ինչ բանի մէջէն կ'անցնին մեր հարեւանները, գործընկերները կամ ուրիշներ, որոնց հանդիպած ենք մեր օրուան ընթացքին, աւելի համբերատար պիտի ըլլայի՞նք եւ նոյնիսկ օգնէի՞նք անոնց յաղթահարելու համար իրենց դժուարութիւնները:

Հնարաւոր է, որ կը շտապենք մեր օրերու ընթացքին՝ փորձելով խուսափիլ ուրիշներու կողմէ ընդհատուելէ, բայց եկէ՛ք տեսնենք՝ թէ ինչպէ՞ս Յիսուս կը վերաբերէր մարդոց հետ: Ան չէ՛ր շտապեր: Ան կը կարեկցէր մարդոց եւ ժամանակ կը յատկացնէր մխիթարելու, սորվեցնելու եւ սէր ցոյց տալու անոնց, որոնց հանդիպէր:

Որպէս Յիսուսի հաւատացեալներ, մենք կանչուած ենք «ապրելու կեանք մը, որ արժանի է մեր ստացած կոչումին» Եփ. 4. 1): Պօղոս առաքեալ կ'ըսէ, որ այդ կը ներարէ «լիովին խոնարհ եւ հեզ ըլլալ. (ըլլալով) համբերատար, սիրով իրարու հանդուրժելով» (Հմ. 2). եւ բոլոր ջանքերը գործադրելով իրարու հետ խաղաղութեան եւ միասնութեան մէջ ապրելու համար (Հմ. 3):

Եկէ՛ք Յիսուսի սիրոյ արտայայտութիւնը ըլլանք բոլորին հանդէպ, որու որ հանդիպինք մեր ամէնօրեայ ճանապարհին վրայ:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինձի՝ ըլլալ սիրող եւ համբերատար անոնց հետ, որոնց Դուն կը դնես իմ ճանապարհին վրայ: Ամէն: **Ինչպէ՞ս կարելի է աւելի համբերատար ըլլալ ուրիշներու հանդէպ:**
Որո՞ւ համար կրնաք օրհնութիւն ըլլալ այսօր:

Ե՛ս եմ, ե՛ս եմ որ քու յանցանքների կը շնչեմ՝ ինծի համար:
[Ես. 43. 25]

ՍՈՒՆԱԼ ՄԵՐ ՅԱՆՑԱՆՔՆԵՐԸ

Ճ ուլի (*Julie*) եւ իր ամուսինը տխրեցան ու ափսոսացին, երբ իմացան՝ որ իրենց դուստրը խանութէն գողութիւն ըրած էր: Բայց Աստուծոյ օգնութեամբ, երբ ան տրտմութենէն ծանրացած եկաւ անոնց մօտ, անոնք ներեցին անոր եւ օգնեցին անոր փոխհատուցանել եւ ստանալ խորհրդատուութիւն: Բացայատուութենէն քանի մը ամիսներ ետք, երբ անոնց դուստրը՝ անհիմն մեկնաբանութիւն ըրաւ այդ մասին, թէ ինչպէ՛ս կրնան այլեւս չվստահիլ իրեն, ճոլիին զարմացաւ թէ ի՞նչ ըսել կ'ուզէ: Ան անմիջապէս չմտածեց իր դուստրին վիրաւորանքին մասին, քանի որ Աստուած հանած էր անոր միտքէն՝ անոր խայթոցը: Ան որոշած էր չմնալ անցեալին մէջ, բայց խնդրել Աստուծմէ, որ օգնէ իրեն ներելու:

Այդ պահուն Աստուած ճոլիին տուաւ իր բարութեան եւ շնորհքին համը, երբ ան զգաց այն սէրը, որ Ան կու տայ իր ժողովուրդին: Աստուած ըսաւ իր ժողովուրդին, որ «հին բաներուն վրայ չմտածեն: Ահա՛ Ան նոր բան մը պիտի ընէ» (Ես. 43. 18-19): Ան նաեւ ըրաւ գեղեցիկ յայտարարութիւնը. «Ե՛ս եմ, ե՛ս եմ որ քու յանցանքներդ կը ջնջեմ՝ ինծի համար, ու քու մեղքերդ ա՛լ պիտի չյիշեմ» (Հմ. 25): Աստուած կրնայ ընտրել՝ մեր մեղքերը մեր դէմ պահել, բայց իր սիրոյ եւ ողորմածութեան պատճառով՝ Ան չ'ըներ: Երբ մենք զղջանք, Ան կը մաքրէ մեր մեղքերուն գրառումը:

Թէեւ մեր ներուած սխալը կրնայ բացասական ազդեցութիւն ունենալ մեր եւ ուրիշներու կեանքին վրայ, Աստուած երբէ՛ք չ'ըներ մեր դէմ ա՛յդ վիրաւորանքը: Ան կը պարփակէ մեզ՝ իր ողորմութեամբ եւ շնորհքով:

Աղօթք - Ներող Յայր, շնորհակալ եմ, որ սիրով կը վազես դէպի ինձ: Կը խնդրե՛մ, օգնէ ինծի՝ շրջիլ իմ մեղաւոր ճանապարհներէն եւ վերդառնալ քեզի: Ամէն:

Ե՞րբ զգացած ես Աստուծոյ զարմանալի սէրը: Ինչպէ՞ս Անոր շնորհքը կը փոխէ եւ փոխակերպէ քեզ:

Փիթե քոյրը ... շատերու հոգատար եղաւ, նաեւ ինծի: [Ես. 42. 6-7]

ՌԱՅԹ (Wright) ՔՈՅՐԸ

Մարդոց մեծ մասը գիտէ Ռայթ (Wright) եղբայրներուն մասին՝ Օլիվըր եւ Ուիլբըր (Oliver and Wilbur), որոնք 1900-ականներու սկիզբները ստեղծեցին, կառուցանեցին եւ վարեցին առաջին յաջող ինքնաթիռը: Սակայն քիչեր գիտեն՝ Գէթրին Ռայթի (Katherine Wright) անունը: Իր եղբայրներուն թռչող մեքենայի ստեղծումի պատմութեան մէջ՝ Գէթրին կարեւոր դեր ունեցաւ՝ անոնց յաջողութեան համար: Մինչ անոր եղբայրները կեդրոնացած էին անհամար մանրամասնութիւններու վրայ, որոնք յանգեցան իրենց գիւտին, Գէթրին նախընտրեց հանգիստ եւ սիրով օգնել անոնց: Ան կը շարունակէր աշխատիլ իրենց եկամուտի աղբիւրը եղող հեծանիւներու խանութը, ձգելով իր դասախօսական գործը՝ հոգատար դառնալու Օրվիլին՝ ապաքինումին ինքնաթիռի արկածէ ետք եւ տնօրինեց իր եղբայրներուն աճող համբաւին անվերջ մանրամասնութիւնները:

Ուրիշներու աջակցութեան արժէքը նոյնպէս՝ կ'երեւնայ Աստուածաշունչին մէջ: Օրինակներէն մէկը՝ Փիթէն է, որ Պօղոս կը յիշատակէ որպէս «շատերու հոգատար» (Հռոմ. 16. 2): Եւ Պրիսկէն եւ Ակիլղասը՝ Պօղոսի գերութեան մէջ ներկայացուած օգտակար զոյգը, հիւրընկալեցին եկեղեցիներ, ուր Պօղոս ծառայեց եւ նոյնիսկ «վտանգի մէջ դրին իրենց վիզերը անոնց համար» (Հմ. 4): Բացի այդ, առաքեալը հաճոյախօսեց Մարկոսին՝ ըսելով, որ ան «պիտանի է իրեն սպասարկութեան համար» (Բ. Տիմ. 4. 11):

Մենք կրնանք ըլլալ ճիշդ եղբայրներ եւ քոյրեր՝ Քրիստոսով՝ ծառայելու ուրիշներուն: Աստուծոյ շարունակական աշխատանքին անհրաժեշտ են այնպիսի օգնականներ, ինչպիսին էր Փիթէ, եւ անոնք, որոնք Անոր կողմէ կ'առաջնորդուին այս ճանապարհով ծառայելու:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ, ցոյց տուր ինծի՝ թէ ինչպէ՞ս խոնարհաբար ծառայեմ ուրիշներուն՝ Ըու փառքիդ համար: Ամէն:

Որո՞ւ պետք է մեր օգնութիւնը: Ի՞նչ կրնանք ընել՝ Յիսուսի անունով՝ ուրիշներուն ծառայելու համար:



Տերը կ'ապրի՛, ու քու անծոյ կ'ապրի՛. ես քեզ չեմ թողուր: [Դ. Թագ. 2. 2]

ԲԱՐԻ ՎԻՇՏ

Հայտնապուրօ Ուէնօ (Hidesaburo Ueno) անունով մարդ մը՝ 1920-ական թուականներուն կը դասաւանդէր Թոքիոյի Կայսերական Համալսարանին (Tokyo Imperial University) մէջ: Ամէն օր՝ կէսօրէ ետք՝ ան կը վերադառնար տուն՝ ժամը 3-ի գնացքով, գտնելու իր շունը՝ Հաչիկօն (Hachiko), որ կը սպասէր իրեն գնացքի կայարանը: Օր մը՝ դասախօս Ուէնօն՝ դասի ժամանակ սիրտի կաթուածով մը մեռաւ ու երբ ան իր սովորական ժամուն չյայտնուեցաւ գնացքի կայարանը, Հաչիկօն որոշ ժամանակ մը սպասեց, ապա տուն գնաց: Շունը՝ յաջորդ օրը վեարադարձաւ ժամը 3.00-ին, նոյնպէս յաջորդ օրը եւ յաջորդ օրը: Հաչիկօյին հաւատարմութիւնը՝ յուզեց շատ ձաբոնցիներու սիրտերը, որոնք եկան իր հետ նստելու:

Եղիսէ՛ նոյնպէս նուիրուած էր իր տիրոջ՝ Եղիային: Այն օրը, երբ Եղիսէ իմացաւ, որ կրնայ կորսնցնել զինք, չուզեց իր տեսութենէն դուրս ձգել: Յետոյ՝ հրեղէն կառք մը Եղիային երկինք տարաւ: Եղիսէ տեսնելով պատահածը՝ աղաղակեց. «Իմ հա՛յրս, իմ հա՛յրս, Իսրայէլի կառքն ու անոր ձիււորները» (Դ. Թագ. 2. 12): Ան վերցուց Եղիայի վերարկուն՝ մարգարէի գօրութեան խորհրդանիշը, որ քանի մը վայրկեան առաջ՝ Յորդանան գետին ջուրերը բաժնած էր (Հմ. 8), եւ հարցուց. «Ո՛ր է Տէրը, Եղիայի Աստուածը» (Հմ. 14): Ան գարկաւ ջուրին, որ բաժնուեցաւ այնպէս՝ ինչպէս բաժնուած էր իր տիրոջ համար: Ի՛նչ դառն ու քաղցր օր մը:

Դուն կորսնցուցա՞ծ ես սիրելի մը: Ո՛չ մէկ խօսք կրնայ ամոքել քու ցաւը: Իւրաքանչիւր արցունք կը ներկայացնէ՛ քու բաժնեկցած սիրոյ յիշատակները: Դո՛ւն խորապէս կը ցաւիս, որովհետեւ խորապէս սիրած էիր: Ի՛նչ դառն ու քաղցր է: Փառք Աստուծոյ՝ այս սիրելի մարդուն եւ սիրելու քու կարողութեանդ համար: Եղիսէն վերցուց Եղիայի վերարակուն: Դո՛ւն ի՞նչ կրնաս ընել:

Աղօթք - Սիրելի Յայր, շնորհակալ եմ, որ սիրելու համար մարդիկ տուիր ինծի: Ամէն:

Ի՛նչ 2021-ի սկզբի նշան մը կամ ծես մը՝ կը յարգէ սիրելի մը յիշատակը: Ինչպէ՞ս Յիսուս կ'օգնէ, որ կրե՛ս քու բռնդ:

Բայց Մխիթարնչը՝ Սուրբ Յոզիս, ... ինչ որ ըսի ձեզի՝ պիտի յիշեցնէ ձեզի: [Յովհ. 14. 26]

ՅՈՋԻՆ ՕԳՏԱԿԱՐ ՅԻՇԵՑՈՒՄՆԵՐԸ

Տարի մը՝ համաձայնեցայ երգ մը երգել՝ որդիիս մարզական միջոցարուձէն առաջ: Շաբաթներով պատրաստուեցայ, բայց երգը գոց գիտէի: Ուստի, երբ դաշտ ելայ երկու կողմս շարուած խումբերը, փակեցի աչքերս եւ աղօթեցի: Սկսայ երգել առաջին քանի մը տողերը. յետոյ քարացա՛յ: Այդ պահուն չկրցայ յիշել յաջորդ տողը: Ետեւէս մէկը՝ շնջեց այն բառերը, որոնք ես մոռցած էի: Երբ լսեցի օգտակար յիշեցումը, վստահօրէն շարեցի մնացած բառերը:

Մենք բոլորս ալ երբեմն քիչ մը օգնութեան պէտք ունինք: Յոհաննու 14-ին մէջ, Յիսուս բացատրեց, որ մենք կը սիրենք գինք՝ Իրեն հնազանդելով (հմ. 15), եւ Ան խոստացաւ խնդրել Հօրը, որ մեզի Օգնական մը տայ՝ «Ճշմարտութեան Հոգին» (հմ. 17): Յիսուս ըսաւ. «Այս աշխարհը չի կրնար ընդունիլ, որովհետեւ չի տեսներ զայն ու չի ճանչնար զայն. բայց դուք կը ճանչնաք զայն, որովհետեւ կը բնակի ձեր քով եւ պիտի ըլլայ ձեր մէջ» (հմ. 17): Թէեւ Յիսուս շատ բան սորվեցուց Իր աշակերտներուն երբ իրենց հետ էր (հմ. 25), Ան ըսաւ. «Բայց Մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը պիտի զրկէ իմ անունովս, անիկա՛ պիտի սորվեցնէ ձեզի ամէնը, եւ ինչ որ ըսի ձեզի՛ պիտի յիշեցնէ ձեզի» (հմ. 26):

Երբ մենք աղօթքով կը կարդանք Աստուածաշունչը, Սուրբ Հոգին կ'օգնէ մեզի մեկնաբանել, հասկնալ եւ կիրառել Աստուծոյ իմաստութիւնը: Անոր առաջնորդութիւնը միշտ կը համընկնի Սուրբ Գիրքին՝ առաջնորդելով, մխիթարելով եւ փոխակերպելով մեզ սիրոյ մէջ, որ միաժամանակ օգտակար յիշեցում մըն է:

Աղօթք - Սուրբ Յո՛գի, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինծի ճանչնալու Քու ձայնդ եւ հնազանդելու Քեզի, քանի որ Դո՛ւն զիս անելի շատ կը նմանցնես Յիսուսի, միաժամանակ օգտակար յիշեցում մը ընելով: Ամէն:
Ի՞նչ կրնաս ընել, որպէսզի անելի լաւ ճանչնաս Սուրբ Յոգիին ձայնը: Ինչպէ՞ս կ'ընդունիս Սուրբ Յոգին ամէն օր:

Ան ալ պատասխանեց անոնց. «Կը յայտարարեմ ձեզի. Եթէ ատոնք լռեն՝ քարե՛րը պիտի աղաղակեն»: [Ղուկ. 19. 40]

ՔԱՐԵՐՈՒՆ ՄՏԻՎ ԸՐԷ

Մեր ընտանիքը՝ Նորս յիշատակի արարողութիւնը կատարելէ ետք զետափին, մեզմէ իւրաքանչիւրը ընտրեց քար մը, օգնելու մեզի յիշելու զինք: Անոր կեանքը յաղթանակներու եւ պարտութիւններու հաւաքածոյ մըն էր, բայց մենք գիտենք, որ ան մեզ կը սիրէր: Մատներս զգացին քարիս հարթ մակերեսը եւ օգնեցին ինձի յիշելու, որ զինք մօտս պահեմ:

Ղուկաս 19-ին մէջ՝ Յիսուս յաղթական մուտք գործեց Երուսաղէմ, մինչ ամբողջը կը թափառարէր արմաւենիի ճիւղեր ու գորայով կը բացագանչէր՝ Ովսանաներ. «Օրհնեա՛լ է այդ Թագաւորը, որ կու գայ Տէրոջ անունով» (Հմ. 38): Փարիսեցիները արհամարհանքով ըսին թէ այդ աղաղակները՝ հայհոյանք են Մեսիային եւ հրամայեցին Յիսուսի ըսելով, որ աշակերտները լռեն: Յիսուս պատասխանեց. «Եթէ ատոնք լռեն, քարե՛րը պիտի աղաղակեն» (Հմ. 40):

Քարերը շատ արուամներով կ'աղաղակեն: Աստուած օգտագործած է քարեր՝ մեր հանդէպ Իր սիրոյ պատմութեան ընթացքին: Երկու կոպիտ տաշած քարեր՝ կը կրէին տասը փորագրուած պատուիրանները՝ ըսելու, թէ ինչպէ՞ս ապրելու ենք (Ել. 34. 1): Յորդանան գետի մօտ կուտակուած յիշատակի քարերը՝ Իսրայէլացիներու սերունդներուն յիշեցում էին Աստուծոյ տրամադրութեան եւ հաւատարմութեան մասին (Յես. 4. 8-9): Եւ այն մէկը՝ որ գլորուած էր, որպէսզի պահէ Յիսուսի մարմինը, նոյնն է, որ գլորուած է, որպէսզի ցոյց տայ, որ Ան յարութիւն առած է (Մատթ. 27. 59-66, Ղուկ. 24. 2): Մենք «կը լսենք» այս քարը, քանի որ ան կը յիշեցնէ մեզի Յիսուսի խօսքերը. «Ես եմ յարութիւնը եւ կեանքը» (Յովհ. 11. 25):

Ըսէ՛ որ մտի՛կ ըրէ՛ քարերուն եւ բաճրացուր քու ճայնդ՝ անոնց հետ միասին, փառաբանելով մեր սիրող Հայրը:

Աղօթք - Սիրելի Յայր, շնորհակալ եմ քու սիրոյդ մասին խօսելու համար՝ նոյնիսկ քարեր օգտագործելուդ համար: Ամեն: **Ինչպէ՞ս Աստուծոյ գործերուն քարերը մեր աշխարհին մէջ «աղաղակած են» քեզի: Աստուած ի՞նչ պատգամ կրնայ նախատեսած ըլլալ, որ քու սրտիդ մէջ դնես:**

Արդարեւ ես ամօթ չեմ սեպեր աւետարանը: [Յոթ. 1. 16]

ԱԲՏԱՐԱՆԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԲԱԺՆԵԿՑԻԼ

Շիգակոյ (*Chicago*) քաղաքի կեդրոնը եղող առաջնորդներու հանդիպումի վայրը եւ յարմարութիւններ՝ կտրուկ կերպով կը հակասէին այն կարիքներուն, որոնց ես հանդիպեցայ դէպի հոն տանող ճանապարհին. կարիքներ, որոնք կը ներառէին այն անհատները, որոնք չունէին սնունդի եւ ապաստանարանի հիմնական կարիքները: Տարբերութիւնները օգնեցին ինծի պատկերացնելու եւ ձեւակերպելու այն բաները, որոնք մենք պէտք է ներառէինք քաղաքին մէջ եւ այլուր ծառայելու մեր տեսլականի ծրագրումին մէջ. տանիլ աւետարանին միջոցները (Աստուծոյ կողմէ տրուած որեւէ բան, որ կ'օգնէ տարածելու իր սիրոյ եւ փրկութեան պատգամը) այն վայրերուն մէջ, ուր անոնք ամենէն աւելի անհրաժեշտ են:

Այն ժամանակ երբ Պօղոս գրեց Հռոմի մէջ եղող Յիսուսի հաւատացողներուն, ան տակաւին չէր այցելած գիրենք, բայց կ'ուզէր: Ան գրեց. «Որովհետեւ կը տենչամ տեսնել ձեզ՝ որ փոխանցեմ ձեզի հոգեւոր շնորհ մը, որպէսզի ամրանաք. այսինքն ես ալ մխիթարուիմ ձեզի հետ՝ ձեր եւ իմ հաւատքին միջոցով» (Հռոմ. 1. 11-12): Առաքեալը անհամբեր կը սպասէր «նուէրներու փոխանակումին», որ օգտակար կ'ըլլայ իրեն եւ ուրիշներու, երբ անոնք կը ձգտէին ապրիլ հանուն Յիսուսի եւ ծառայել ուրիշներուն: Մեր ունեցած միջոցները կը ներառեն՝ Աստուծոյ կողմէ մեզի տրուած հոգեւոր պարգեւները եւ նիւթական միջոցները: Թոյլ տանք, որ Ան գործածէ մեզ՝ աւետարանի պատգամով մարդոց կարեկցաբար հասնելու համար: Եւ երբ Աստուած գորացնէ, եկէ՛ք բանանք մեր սիրտերը, ձեռքերն ու շրթունքները՝ ուրիշներուն ծառայելու համար: Թող որ մենք այդպէս ընենք «ամօթ չսեպենք աւետարանը, քանի որ ան Աստուծոյ գորութիւնն է ամէն հաւատացեալի փրկութեան համար» (Հմ. 16):

Աղօթք - Սիրելի Յիսուս, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինծի առանց ամօթ սեպելու՝ բաժնեկցիմ Քու ներումի բարի լուրը: Ամէն:
Ինչպէ՞ս պիտի բաժնեկցիս ներման բարի լուրը ուրիշներու հետ:
Ինչպէ՞ս կրնաս բաւարարել ուրիշներու ֆիզիքական կարիքները՝ բաժնեկցելով Քրիստոսի սերը:

Ո՛ր որ երթաս՝ հոն պիտի երթամ, եւ ո՛ր որ գիշերես՝ հոն պիտի գիշերեմ: [Քրիստոս 1. 16]

ԱՍՏՈՒԾՈՅ ԶԵՏ ԵՐԹԱԼ

Իրական իրադարձութիւններով ոգեշնչուած՝ Գուրյըրը (*The Courier*) ֆիլմին մէջ՝ հերոս՝ Կրէւիլ (*Greville*) կանգնած է դժուար որոշումի մը առջեւ: Ան կ'իմանայ, որ մտերիմ ընկեր մը պիտի ձեռքակալուի եւ հաւանաբար պիտի ստանայ ծանր բանտարկութիւն: Կրէւիլ կրնայ փրկել ինքզինք նոյն ճակատագրէն, եթէ անմիջապէս փախչի երկրէն եւ ուրանայ իր ընկերոջ հետ ընկերակցութիւն ըրածը: Կարեկցութենէ մղուած՝ Կրէւիլ հաւատարմօրէն կը հրաժարի հեռանալ եւ կը բանտարկուի՝ կրելով նոյն տանջանքները, ինչ որ իր ընկերը կրեց: Ո՛չ մէկը՝ դաւաճանեց միւսը: Վերջաւորութեան՝ Կրէւիլ ազատ կ'արձակուի որպէս կոտորած, բայց իսկական եւ հաւատարիմ ընկերակից մը:

Նոյեմիին՝ այդպիսի ընկերակից մը պէտք էր: Երբ անոր ամուսինն ու որդիները մեռան, Նոյեմի դիմագրաւեց աղքատութիւն եւ դէպի իր հայրենիքը երթալու երկար ճամբայ: Նոյեմի ըսաւ իր այրի հարսին՝ Հոուլթին, որ մնայ Մովաբի մէջ եւ նոր կեանք գտնէ իրեն համար (Հռ. 1. 8-9): Հոուլթ պատասխանեց. «Ինձի մի՛ դիմեր որ քեզ թողում ու քեզմէ հեռանամ, որովհետեւ ո՛ր որ երթաս հոն պիտի երթամ» (Հմ. 16): Հոուլթ հաւատարմօրէն ուղեկցեցաւ Նոյեմիին դէպի օտար երկիր եւ օգնեց ապահովել իրենց ընտանիքը: Հոուլթի հաւատարմութիւնը՝ անոնց կոտորած ընտանիքը վերածեց անհաւանական աւանդի մը: Շատ աւելի ուշ, անոր ծոռը՝ Դաւիթ պիտի ըլլար Իսրայէլի թագաւոր եւ պիտի կոչուէր՝ Աստուծոյ սիրտով մարդ:

Ուրիշներու հետ տառապանք դիմակալել՝ սարսափելի է: Բայց եթէ մենք յանձնենք մեր սեփական կամքը եւ խնդրենք Աստուծոյ զօրութիւնը, Ան հնարաւորութիւնը կու տայ մեզի սիրելու մարդոց՝ արտասովոր ձեւերով: Անոր զօրութեամբ՝ մենք կրնանք ըսել. «Ո՛ր որ երթաս, հոն պիտի երթամ»:

Աղօթք - Տէր Յիսուս, շնորհակալ եմ, որ գիս երբէ՞ք չես լքեր: Ամէն: Ո՞վ կայ քու շուրջդ, որ կը քալէ դժուար ճանապարհով: Ինչպէ՞ս կրնաս ընտրել քալել այդ անձին կողքին:

Մի՛ արտորար հոգիովդ բարկանալու, քանի որ գրգռութիւնը անմիտներուն ծոցին մէջ կը հանգչի: [Ժող. 7. 9]

ՔԱՂՅՐ ԽՄՈՐԵՂԷՆԻ ՊԱՏԵՐԱԶՍ

Բոլոր յիմարութիւններէն, որոնք պատճառ դարձած են ազգերու պատերազմներուն, կրնա՞յ քաղցր խմորեղէնի պատերազմը ամենավատը ըլլալ: 1832-ին, Ֆրանսայի եւ Մեքսիքոյի միջեւ եղած լարուածութեան մէջ, Մեքսիքական բանակի խումբ մը սպաններ այցելեցին Մեքսիքո Քաղաքին մէջ գտնուող Ֆրանսական քաղցր խմորեղէնի խանութ մը եւ փորձեցին բոլոր խմորեղէնները, առանց վճարումի: Թէեւ մանրամասնութիւնները բարդացան (եւ այլ սաղբանքները աւելցուցին անախորժութիւնները), արդիւնքը եղաւ՝ առաջին Ֆրանքո-Մեքսիկական պատերազմը (1838-39), որը յայտնի է որպէս Քաղցր Խմորեղէնի Պատերազմը, որու ընթացքին զոհուեցան աւելի քան երեք հարիւր զինուորներ: Ցաւալի է, թէ ի՛նչ կարող է առաջացնել զայրոյթի պահ մը:

Մարդկային հակամարտութիւններու մեծ մասը՝ փլուզուած ամուսնութիւններ եւ կործանուած բարեկամութիւններ, հաւանաբար արմատաւորուած են չկառավարուող զայրոյթի ձեւի մը վրայ: Եսասիրութիւնն ու ուժային խաղերը, չլուծուած անհասկացողութիւնները, քամահրանքները եւ հականախայարձակումերը՝ յիմարութիւն են: Շատ յաճախ, մեր չարամիտ ընկալումները կամ արձագանքները կը հանգեցնեն կործանարար զայրոյթի: Տակաւին, Ժողովողը՝ կ'առաջարկէ իմաստութիւն. «Մի՛ արտորար հոգիովդ բարկանալու, քանի որ գրգռութիւնը անմիտներուն ծոցին մէջ կը հանգչի» (7. 9):

Յիմարութիւն է՝ շուտով բարկանալ, յատկապէս՝ երբ Աստուած կ'առաջարկէ աւելի լաւ ճանապարհ մը, գուցէ «աւելի լաւ է իմաստունին սաստը լսելու» միջոցը (Հմ. 5): Մենք կրնանք ապրիլ իմաստութեան եւ ներման մէջ, երբ թոյլ տանք որ Ան օգնէ մեզի:

Աղօթք - Սիրելի Աստուած, չեմ ուզեր թոյլ տալ, որ յիմար զայրոյթը կառավարէ ինձի կամ վնասէ ուրիշներուն: Կը խնդրե՛մ, օգնէ ինձի հրաժարիլ իմ բարկութենէս եւ ստանալ Զուխաղաղութիւնդ: Ամէն:

Ո՞ր եւ ե՞րբ տեղի տուած ես բարկութեան: Ինչպէ՞ս այդ բանը վնասած է քեզի կամ ուրիշներուն:

Եթէ ցորենին հատիկը հողին մէջ իյնալով չմեռնի՝ ինք միևակ կը մնայ. բայց եթէ մեռնի՝ շատ պտուղ կը բերէ: [Յովհ. 12. 24]

ԿԵԱՆՔ ՈՒ ՄԱՅ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՋ

Տիոտօր Տօսթօիովսկի (*Fyodor Dostoevsky*), դիմագրաւելով գնդակոծման խուճապ մը, լուռ կը հաշուէր իր կեանքի վերջին պահերը: Յիսուսի հաւատացող Տօսթօիովսկին կը համարուի ամբողջ գրականութեան մեծագոյն գրողներէն մէկը: Անոր «Գարամագով Եղբայրներ» (*The Brothers Karamazov*) յիշատակի արժանի վէպը՝ կը հետազօտէ Աստուծոյ, կեանքի եւ մահուան նիւթերը: Տօսթօիովսկիի մասին կ'ըսեն. «Ան խանդավառութեամբ կը խօսէր Քրիստոսի մասին»: Հրաձանները բարձրացուցին: «Պատրաստ: ... Նշան առ ...»:

Յիսուս ակնարկելով իր իսկ մահապատիժին մասին, կը խօսի իր աշակերտներուն եւ մեզի հետ՝ կեանքի եւ մահուան յաւիտենական արժէքին մասին, երբ Ան ըսաւ. «Ժամը հասաւ» (Յովհ. 12. 23): Պատկերը սերմ մըն է (մեր կեանքը), որ իր զոհաբերութեամբ մեծ բերք կու տայ (Հմ. 24): Յիսուս կ'ըսէ մեզի, որ շատ չսիրենք այս կեանքը, քանի որ անոնք, որոնք պատրաստ են զոհաբերելու այս կեանքը, պիտի գտնեն «յաւիտենական կեանք» (Հմ. 25):

Անոր աշակերտը ըլլալը՝ զոհաբերութիւն կը պահանջէ: Բայց մենք մեր յոյսը կը գտնենք իր խօսքերուն մէջ. «Եթէ մէկը սպասարկէ ինձի, Հայրը պիտի պատուէ զինք» (Հմ. 26):

Տիոտօր մահուան երեսին նայեցաւ: Բայց՝ Յարէն նամակը վերջին պահուն հասաւ եւ Տօսթօիովսկիի կեանքը խնայուեցաւ, սակայն այս փորձառութիւնը ներթափանցեց անոր բոլոր յետագայ ստեղծագործութիւններուն մէջ: Իսկապէս, Գարամագով Եղբայրներ մակագիրը՝ այս հատուածն է՝ Յովհաննու 12. 24-ը. «Եթէ ցորենին հատիկը հողին մէջ իյնալով չմեռնի՝ ինք միևակ կը մնայ. բայց եթէ մեռնի՝ շատ պտուղ կը բերէ»:

Աղօթք - Դայր Աստուած, կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի ընդունելու՝ աշակերտութեան մարտահրաւերը եւ հասկնալ կեանքի իմաստը՝ մահուան միջոցով: Ամէն:

Ի՞նչպէ՞ս քու հաւատքդ կ'ազդէ կեանքի եւ մահուան մասին քու մտքերուդ վրայ: Ի՞նչն է՝ քու ուրախութիւնդ՝ ապագայի համար:



Ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, յիշէ՛ զիս՝ երբ գաս քու թագաւորութեամբ»:
[Ղուկ. 23. 42]

ՈՂԲԷՆ՝ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Քանի մը աւանդութիւններ կան՝ գեղեցիկ հինգ թերթիկով անմոռուկ կոչուած ծաղիկին մասին: Այդ պատմութիւններու թիւին մէջ է՝ Գերմանական աւանդութիւններէն մէկը: Ըստ պատմութեան, երբ Աստուած՝ իր ստեղծած բոլոր բոյսերը անուանեց, փոքրիկ ծաղիկ մը՝ անհանգստացաւ, որ ինք պիտի մոռցուի: Այսպիսով ծաղիկը բացագանչեց. «Մի մոռնար զիս, ո՛վ Տէր»:

Եւ այդ էր անունը, որ Աստուած տուաւ ատոր: Թէեւ սա՛ միայն պատմութիւն է, բայց անմոռուկը՝ դարձած է սիրոյ եւ յիշողութեան խորհրդանիշ: Տակաւին՝ բոլորս ալ զգացած ենք, թէ ի՞նչ զգացում կու տայ մոռցուած ըլլալը: Յիշուիլը, յատկապէս մեր Աստուծոյ կողմէ, մեր սիրտին իսկական ցանկութիւնն է: Ընդհանրապէս պատմութիւն մը կը գտնենք Տէր Յիսուսի խաչելութեան պատմութեան մէջ: Ղուկաս մեզի կ'ըսէ. «Երկու ուրիշներ ալ՝ չարագործներ՝ տարին անոր հետ, որպէսզի մեռցուին» (23. 32): Երբ անոնց կը խաչէին, Քրիստոսի կողքին գտնուող չարագործ մը յանկարծ հասկցաւ: Ան ըսաւ. «Տէ՛ր, յիշէ՛ զիս՝ երբ գաս քու թագաւորութեամբ» (Հմ. 42): Քրիստոսի տուած պատասխանը անմոռանալի է. «Ընչմա՛րտապէս կը յայտարարեմ քեզի. 'Դուն ա՛յսօր ինծի հետ պիտի ըլլաս զբախտի մէջ'» (Հմ. 43):

Ի՞նչ հիանալի պահ: Իր ամենամութ ժամին մէջ՝ այդ չարագործը իմացաւ, թէ ի՞նչ կը նշանակէ յիշուիլ Աստուծոյ Որդիին կողմէ:

Մենք ալ նոյնպէս յիշուած ենք՝ կարիքի ժամանակ: Աստուած՝ այնքան սիրեց մեզ, որ մեռաւ մեզի համար՝ երբէք պիտի չմոռնայ

Աղօթք - Հա՛յր, այն պահերուն, երբ ես կրկամ ինձ մոռցուած զգալ, յիշեցո՛ւր ինծի Քու մշտական սիրարատ ներկայութիւնդ՝ իմ կեանքիս մէջ եւ քաջալերէ զիս Քու շնորհքով: Ամէն:

Ե՞րբ դուն քեզ մոռցուած զգացած ես: Ինչպէ՞ս այսօր պիտի դիմես Յիսուսի եւ թոյլ տաս, որ Ան քու ողբդ՝ վերածէ զովաբանութեան:

Արդարեւ ինձի փրկութեան հազուստներ հազցուց, զիս արդարութեան պարեգօտով ծածկեց: [Ես. 61. 10]

ՔՐԻՍՏՈՍՈՎ ՀԱԳՈՒԱԾ

Ռօզ Թըրնըրը (Rose Turner)՝ Լոնտոնի նորաձեւութեան Գոլէճի մէջ եղող հոգեբան մը, կ'ուսումնասիրէ հագուստի ունեցած ազդեցութիւնը՝ մարդկանց մտածելակերպին վրայ. թէ ինչպէ՞ս կը վարուին եւ նոյնիսկ ինչպէ՞ս հագուստը կ'ազդէ իրենց տրամադրութեան վրայ: Հագուստը, որպէս մեր մարմինին ամենամօտ բանը, կը ձեւաւորուի որպէս «երկրորդ մաշկի» տեսակ մը եւ կը գօտեպնդէ մեզ՝ այն ամէն բանին համար, ինչ որ կրնայ ըլլալ օրուան ընթացքին: Օրինակ՝ մասնագիտական հագուստ հագնելը՝ կրնայ «օգնել մղուձի եւ կեդրոնացումի» աշխատանքի, իսկ զգացական արժէք ունեցող վաղեմի կտորներով կարուած հագուստ մը հագնելը՝ կրնայ մխիթարութիւն բերել ճնշուածութեան իրավիճակներու մէջ:

Այս հոգեբանական երեւոյթը՝ պատկերացում կու տայ Եսայիի մարգարէական խօսքերուն՝ Յիսուսի զոհաբերական արարքին մասին: Ան կ'արձանագրէ Հրեաներու ապագայի ազատագրումը Բաբելոնի գերութենէն՝ վստահեցնելով անոնց, որ օր մը անոնք «Հնադարեան աւերակները պիտի կառուցանեն, նախապէս կործանուածները պիտի կանգնեցնեն» (Ես. 61. 4): Այդ օրը՝ անոնք պիտի հագնին «արդարութեան պարեգօտը» (Հմ. 10):

Եսայիի մարգարէութիւնը կատարուեցաւ՝ նախ ժողովուրդին Երուսաղէմ վերադառնալու ժամանակ, իսկ յետոյ ամբողջութեամբ, երբ «Աստուած մեզի համար մեղաւոր համարեց՝ ան (Յիսուսը)՝ որ մեզք չէր գիտեր, որպէսզի մենք Աստուծոյ արդարութիւնը ըլլանք անով» (Բ. Կորնթ. 5. 21): Արդարութիւնը կը նկարագրէ Աստուծոյ Հետ մեր ունեցած ճիշդ յարաբերութիւնները, երբ մենք կը վստահինք Քրիստոսի զոհաբերութեանը: Աստուած մեզի չի տեսներ՝ մեր մեղքին պատճառով՝ ամօթի կամ անարգանքի մէջ. փոխարէնը՝ Ան կը տեսնէ մեզ՝ հազած Յիսուսը՝ յարատեւ արդարութեամբ:

Աղօթք - Յիսուս, շնորհակալ եմ Զեզի, որ հազցուցիր զի՛ս Զու արդարութեամբ: Ամէն:
Ի՞նչ ամօթայի հազուստ «կը հագնինք» ամէն օր: Ինչպէ՞ս կրնանք աւելի լաւ յիշել մեծ արդարութեան զգեստները:

Աստուած այս Յիսուսը յարուցանեց, որուն մենք բոլորս վկայ ենք:
[Գործք 2. 32]

ԼԱԻԱԳՈՅՆ ԱՊԱՑՈՅՑԸ

Լին (Lee) չէր հաւատար Աստուծոյ եւ Յիսուսի յարութեան:
Բայց ան վերլուծական միտք ունեցող լրագրող մըն էր:
Երբ անոր կինը՝ հաւատա՛ց Յիսուսի, ան որոշեց անոր նոր
հաւատքը ուսումնասիրել՝ իրեն համար: Երկու տարիներու
հետազոտութենէ ետք, ան յանձնուեցաւ Աստուծոյ, յարութեան
եւ հաւատքի առ Քրիստոս:

Անոր մէջ եղած փոփոխութիւնը նկատելի էր: Քանի մը
ամիսներ ետք՝ անոր հինգ տարեկան դուստրը ըսաւ իր կնոջ.
«Մայրիկ, կ'ուզեմ՝ որ Աստուած ինծի համար ընէ ա՛յն, ինչ
որ ըրաւ հայրիկին համար»: Եւ Լի Սթորպէլի (Lee Storbel)
դուստրը՝ նոյնպէ՛ս հաւատաց Յիսուսի:

Շատեր կը հրաժարին հաւատալու յարութեան: Սակայն
հեղինակաւոր ականատեսները տեսան յարութիւն առնող
Յիսուսը: Այդ ականատեսներէն մէկը՝ Պետրոս աշակերտը,
ըսաւ մեծ բազմութեան մը, որ Դաւիթ թագաւորը, անշո՛ւշտ՝
վախճանած եւ թաղուած է (Գործք 2. 29): Յետոյ՝ Պետրոս
մատնանշեց Դաւիթի ըրած մարգարէութիւն մը: Ան ըսաւ.
«Ինք կանխատեսութեամբ խօսեցաւ Քրիստոսի յարութեան
մասին» (Հմ. 31): Պետրոս եզրափակեց. «Աստուած այս Յիսուսը
յարուցանեց, որուն մենք բոլորս վկայ ենք» (Հմ. 32):

Յարութեան լաւագոյն ապացոյցը՝ ականատեսներուն, մէջ
ըլլալով Պետրոս, անոնց փոխուած կեանքն է: Խաչելութեան
ժամանակ աշակերտները թաքնուած էին: Պետրոս փաստօրէն
ուրացաւ Քրիստոսի (Յովհ. 18. 15-17, 25-27): Երբ անոնք
տեսան Յիսուսը՝ կենդանի, ամէն ինչ փոխուեցաւ: Քաջութեամբ
լեցուած՝ անոնք սկսան բաժնեկցիլ՝ աշխարհի մէկ մեծ յոյսին՝
յարութիւն առած Քրիստոսի՝ ճշմարտութիւնը:

Աղօթք - Հա՛յր, այնքան երախտապարտ եմ՝ Յիսուսի յարութեան
իրականութեան համար, որ կը փոխէ կեանքը եւ ինծի իսկական
յոյս կու տայ: Ամէն:

**Ի՞նչ կը կարծե՛ս Յիսուսի յարութեան մասին: Ինչպե՞ս այդ
հաւատքը կ'ազդէ կեանքիդ վրայ:**



Յիսուս ըսաւ. «Նախ մաքրէ՛ գաւաթին ու պնակին ներսի՛ կողմը»: [Մատթ. 23. 26]

ԽՈՐ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

Նոյեմբերի ցուրտ օր մը, մեր եկեղեցին մեծ յոյս ունէր՝ երկու հարիւր պարկ լեցնել անօթեւաններուն համար: Պատրաստուելով օգնելու լեցնելու զանոնք, ես դասաւորեցի տրուած նուէրները՝ աղօթելով գտնել նոր ձեռնոցներ, գլխարկներ, գուլպաներ եւ ծածկոցներ: Ուտելիքները՝ նոյնպէս բաժնուելու էին անոնց, որոնք նուէրներ պիտի ստանային: Յետոյ՝ նկատեցի անձեռոցիկներ, որոնք զարմացուցին զիս: Ես կեղբոնացած էի օգնելու մաղոց տաք պահելու եւ սնուցանելու վրայ: Սակայն մէկը՝ յիշած էր նաեւ օգնել՝ ծրարները ստացողներուն՝ որ մաքուր զգան:

Աստուածաշունչը կը խօսի մէկ այլ «մաքրութեան» մասին: Յիսուս մատնանշեց այդ, երբ Ան կը դատապարտէր Օրինականներուն եւ Փարիսեցիներուն կեղծաւորութիւնը: Անոնք կը պահէին օրէնքին ամենափոքր պահանջները, բայց «կը թողէին Օրէնքին աւելի ծանր բաները՝ իրաւունքը, կարեկցութիւնը ու հաւատքը» (Մատթ. 23. 23): Յիսուս ըսաւ անոնց. «Կը մաքրէք գաւաթին ու պնակին դուրսի՛ կողմը, բայց ներսէն լեցուն են յափշտակութեամբ եւ անիրաւութեամբ: Նախ մաքրէ՛ գաւաթին ու պնակին ներսի՛ կողմը, որպէսզի անոնց դուրսի կողմն ալ մաքուր ըլլայ» (Հմ. 25-26):

Գործելով այնպէս, կարծես մենք հոգեւորապէս անբիծ ենք, պարզապէս ցուցադրութիւն է, եթէ մենք չփնտռենք Քրիստոսի մէջ յայտնաբերուած մաքրութիւնը: Հին հոգեւոր երգի մը բառերը կը հարցնեն. «Ի՞նչը կրնայ մաքրել իմ մեղքս: Ո՛հինչ, բացի Յիսուսի արիւնը»: Նոր անձեռոցիկ մը կրնայ նուէր ըլլալ մեզ դուրսէն լուալու եւ մաքրելու համար: Յիսուս կը մաքրէ մեզ ներսէն՝ մաքրելով մեր մեղքերէն նոյնիսկ ամենաձանրը:

Աղօթք - Սիրելի Յիսուս, կը խնդրեմ հոգեպէս մաքրէ զիս՝ ներսէն: Ամէն:

Քեզի համար ո՞ր պետք է հոգեւոր խոր մաքրութիւն: Ինչպէ՞ս կրնաս աղօթել, որ Քրիստոս մաքրէ քեզի այսօր:



Ուրեմն սիրեցէ՛ք գաղթականը, քանի որ դո՛ւք ալ պանդուխտ էիք Եգիպտոսի երկրին մէջ: [Բ. Օր. 10. 19]

ՍԻՐԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԸ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԻՐՈՎ

Տրանսական՝ Լէ Շամպօնի (*Le Chambon*) բնակիչները՝ Նացիներու գրաւումի ժամանակ՝ ամէն ինչ վտանգի ենթարկեցին՝ օգնելու համար փրկելու հինգ հազար անհատներու կեանքը, որոնցմէ շատերը՝ Հրեայ մանուկներ էին: Իրենց տուներէն փախած գաղթականները, թաքնուած էին համայնքի տուներուն եւ ագարակներուն մէջ: Քաղաքի բնակիչները՝ ոգեշնչուած էին հովիւ՝ Անտրէ Թրօգմէէն (*Andre Trocme*), որ կո՛չ ըրաւ իր ժողովուրդին օգնել՝ մղուած Բ. Օրինաց 10. 19-ի խօսքերէն. «Ուրեմն սիրեցէ՛ք գաղթականը, քանի որ դո՛ւք ալ պանդուխտ էիք Եգիպտոսի երկրին մէջ»:

Իսրայէլացիներուն տրուած այս պատուիրանը՝ կու գայ այն հատուածէն, որ կը սկսի յիշեցումով, որ ամբողջ երկիրը կը պատկանի Աստուծոյ, որ նաեւ «զօրաւոր ու ահեղ է» (Հմ. 17): Տակաւին՝ Աստուած սիրեց Իսրայէլացիները (Հմ. 15): Ան նաեւ հոգ կը տանի խոցելի եւ անծանօթ իրավիճակներու մէջ յայտնուած մարդոց (Հմ. 18), ներառեալ՝ օտարազգիները, որոնք Իսրայէլի ժողովուրդին մաս չեն կազմեր: Երբ Իսրայէլացիները հաստատուեցան իրենց նոր տան մէջ, անոնք պէտք էր ընդօրինակէին Աստուծոյ սէրն ու հոգատարութիւնը եւ անոնց հանդէպ, որոնք օգնութեան կարիքը ունին, յատկապէս որովհետեւ գիտէին օտար ըլլալու եզակի դժուարութիւնները (Հմ. 19):

Եթէ մենք երկար ժամանակ աշխատած ենք կամ քանի մը տարիներ ապրած ենք նոյն տան մէջ, Աստուած կրնայ մեզի հնարաւորութիւնը տալ՝ բարութիւն դրսեւորելու մէկու մը հանդէպ, որ կը զգայ «օտարական», գուցէ օգտակար խորհուրդներ տալով նոր գործընկերոջ մը կամ օգնութիւն՝ վերջերս տեղափոխուած ընտանիքի մը: Երբ մենք այդ բանը կ'ընենք, ցոյց կու տանք Աստուծոյ սէրը՝ անոնց հանդէպ, որոնք կը գտնուին անծանօթ եւ յաճախ խոցելի իրավիճակներու մէջ:

Աղօթք - Երկնաւոր Յայր, կը խնդրեմ՝ օգնէ ինձի որ տարածեմ Ըու հոգատարութիւնդ եւ սերդ ուրիշներուն: Ամէն
Ե՞րբ մէկը քեզի բարութիւն ցուցաբերեց: Ինչպե՞ս կրնաս դուն հոգատար ըլլալ ուրիշի մը:

Ուրեմն պէտք չէ՞ր որ դո՛ւն ալ ողորմէիր ծառայակիցիդ, ինչպէս ես ողորմեցայ քեզի: [Մատթ. 18. 33]

ԴԷՊԻ ԱՆՍԱՀՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԴԻՆ

«*Խաղալիքներու Պատմութեան»* գծագրական ֆիլմին մէջ, երեսայի մը խաղալիքները կը կենդանան, երբ ան սենեակէն դուրս կու գայ կամ կը քնանայ: Հերոսներէն մէկը՝ Պագ Լայթյըր (*Buzz Lightyear*) անունով տիեզերական շրջիկ ոստիկանը, կը գոռայ իր նշանաւոր արտայայտութիւնը՝ ցուցադրելով իր թռչելու կարողութիւնը. «Դէպի անսահմանութիւն եւ անկէ անդին»:

Արտայայտութիւն մը, որը շփոթեցուցած է շատերուն: Միթէ՞՞ անսահմանութիւնը այնքան հեռու չէ, որքան կրնաս երթալ: Ինչպէ՞ս կրնայ որեւէ բան մը ըլլալ անսահմանութենէն անդին: Թուաբանագէտ՝ Իեան Սթիուըրդ (*Ian Stewart*), հիմնուելով հին Յոյն փիլիսոփաներու իմաստութեան վրայ՝ կ'ենթադրէ, ինչ որ անսահմանութենէն անդին է, տակաւին աւելի մեծ անսահմանութիւն է: Անընդհատ եւ շարունակ:

Կը թուի թէ Յիսուս ներողամտութեան ոլորտին մէջ՝ նման բացայայտ ջանքեր կը գործադրէ: Երբ Պետրոս հարցուց Յիսուսի՝ ուրիշի մը ներելու մասին. «Տէ՛ր, եթէ եղբայրս մեղանչէ ինձի դէմ՝ քանի՞ անգամ ներեմ անոր. մինչեւ եօ՞թը անգամ»: Յիսուս ըսաւ անոր. «Քեզի չեմ ըսեր՝ մինչեւ եօթը անգամ, հապա՛ մինչեւ եօթանասուն անգամ եօթը» (*Մատթ. 18. 21-22*): Յիսուս կը շարունակէ՝ առակ մը պատմելով, ուր կը համեմատէ ողորմած եւ անողորմ ծառային՝ նշելով, որ եթէ մէկը իսկապէս կը զզջայ իր սխալին համար, մեր ներելու քանակին սահմանափակում չկայ: Մենք պէտք է ներենք ուրիշներուն՝ այնպէս, ինչպէս Աստուած կը ներէ մեզի (*Հմ. 33*): Դարձեալ ու դարձեալ:

Այդ՝ մեզի համար կրնայ անհնարին թուիլ: Ահա՛ թէ ինչու մենք անընդհատ կարիքը ունինք Աստուծոյ խնդրելու իր օգնութիւնը: Միայն Անոր զօրութիւնով՝ մենք կրնանք այդ բանը ընել: Ներուած մարդիկ կը ներեն ուրիշներու: Դէպի անսահմանութիւն եւ անկէ անդին:

Աղօթք - Հայր, կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի ըլլալու նոյնքան առատաճեռն եւ իմաստուն ներողամտութեամբ, որքան որ Դուն ես: Ամէն: Ո՛վ կը տեսջայ՝ քու ներողամտութեանդ: Ի՞նչ կը նշանակէ ներել մէկ ուրիշին՝ այնպէս, որ պատուէ անոնց եւ Աստուծոյ:

Որպես Աստուծոյ ընտրեալներ՝ սուրբ ու սիրելի, հազէ՛ք գուրծ, կարեկցութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեգութիւնը, համբերատարութիւնը: [Կող. 3. 12]

ԳՅՈՒԹԵԱՆ ՈՍԿԻ ՇՂԹԱՆ

Օգոստոս 2024-ին, Ման Պատկերներ (Man Pictures) ընկերութիւնը հրատարակեց վաւերագրական ֆիլմ մը՝ «Գթութեան Ոսկի Շղթան» (The Golden Chain of Mercy) խորագիրով: Ֆիլմը երրորդն էր «Երախտագիտութեան Քարտէս» ծրագրին: Ֆիլմերը կը ներկայացնեն մարդասիրական ծառայութիւնները Եւրոպացի, Ամերիկացի, Աւստրալացի եւ Նիու Զիլանտացի մարդասէրներու, որոնք որեւէ ջանք չի խնայեցին օգնութեան սիրոյ ձեռք երկարելու քսաներորդ դարու առաջին ցեղասպանութենէն՝ 1915 թուականին ճողովորած ու մօտակայ դրացի երկիրներու մէջ ապաստան գտած հայերու: Նպատակը՝ հեռաւոր ծայրագոյն արեւելքէն՝ գթութեան շղթայ մը կազմել էր երկրագունդին վրայ՝ օղակ առ օղակ ու հասնիլ դժբախտին ու տառապող ժողովուրդին:

Պօղոս առաքեալ Կողոսայի եկեղեցիին իր գրած նամակին մէջ, յստակ կոչ մը կ'ընէ, որ հաւատացեալները սիրոյ կապով՝ իրենց վրայ հազնի՛ն գուրծը, ողորմութիւնը եւ քաղցրութիւնը, իրենց կարեկցութիւնը ցոյց տալու եւ օգնելու անոնց, որոնք օգնութեան կարիքը ունին: Աստուածաշունչը յստակ պատուէր ունի մեզի ու բոլոր անոնց, որոնք կը հաւատան Քրիստոսի, որ իրենց պարտականութիւնը սեպն կարօտեալներուն օգնելու: Մինչ կը յիշենք ու որպէս Հայեր կը ոգեկոչենք Ապրիլեան Եղերնը ու կը շարունակենք մեր պահանջատիրութեան երթը, կ'արժէ անդրադարձաւ ու յիշել երախտապարտ զգացումներով բոլոր անոնց, որոնք գթութեան ոսկի շղթային վրայ օղակ մը աւելցուցին իրենց նուիրական սրբազան պարտականութիւնը կատարելու՝ Աստուծոյ շնորհքով եւ իր փառքին համար:

Եկէ՛ք մենք ալ օղակ որ մը աւելցնենք շղթային՝ մեր վրայ հազնելով գուրծն ու սէրը:

Աղօթք - Տէր Աստուած, այսօր երախտապարտ սիրտերով կը յիշենք՝ բոլոր անոնք, որոնք գուրծ կը հազնին ու կարեկցութիւն կը ցուցաբերեն՝ տկարին ու կարօտեալին: Ամէն:

Դուն ալ այսօր կրնաս գուրծ հազնիլ եւ մատուցած աղօթքներուդ հետ մեկտեղ՝ Աստուծոյ ստեղծած շղթային մէկ մասը ըլլալ:

Գիտնալով թե ձեր հաւատքին փորձը համբերութիւն կ'իրագործէ: [Յակ. 1. 3]

ՀԱՒԱՏՔԻ ՔԱՅԼԵՐ

Մեր չորսը՝ քալեցինք Նիու Եօրքի Ուաթթըրնզ Կլէն Կիրճին (Watkins Glen George) միջով: Որոշ ատեններ՝ մենք ալիւնաձանքով կանգ առինք միասին, երբ զարմացած կը նայէինք ջրվէժներուն եւ երկու հարիւր ոտնաչափ ժայռերուն: Ուրիշ ատեններ՝ մենք ստիպուած էինք կանգ առնելու՝ շունչ քաշելու եւ ցաւած ոտքերը հանգստացնելու համար, երբ կը բարձրանայինք թաց ժայռերը եւ անվերջանալի աստիճանները: Երբ մենք մօտեցանք գագաթին, ուրիշ արշաւող մը, որ ետ կը դառնար ըսաւ. «Դուք միայն ունիք 10 աստիճան եւս բարձրանալիք՝ ձեր 832-էն: Գուցէ՛ ամենալաւը ա՛յն էր, որ մենք չէինք գիտեր, թէ որքա՛ն դժուար պիտի ըլլար, քանի որ մենք կրնայինք ետ մնալ եւ չտեսնէինք ամբողջ գեղեցկութիւնը:

Կեանքի ճամբորդութիւնը նոյնպէս ունի դժուար աստիճաններ: Տէր Յիսուս եւ Պօղոս՝ զգուշացուցին հաւատացեալներուն՝ դժուարութիւններու եւ հալածանքներու մասին (Յովհ. 16. 33, Բ. Տիմ. 3. 12), եւ այդ մէկը որոշ հեռանկար կը պահանջէ: Յակոբոս ըսաւ. «Բոլորովին ուրախութի՛ւն համարեցէք՝ երբ զանազան փորձութիւններու մէջ իյնաք» (Յակ. 1. 2): Ինչո՞ւ ուրախութիւն՝ տառապանքի փոխարէն: Աստուած գիտէ եւ մենք՝ «թէ հաւատքին փորձը համբերութիւն կ'իրագործէ» (Հմ. 3): Բայց ինչի՞ համար: Որպէսզի մենք ըլլանք «կատարեալ եւ ամբողջ» (Հմ. 4):

Եթէ մենք կանգ առնենք եւ նայինք, հակառակ ցաւին, մենք կրնանք տեսնել նկարագիրի գեղեցիկ ուժը, որը Աստուած կ'արտադրէ մեր եւ մեր շրջապատին մէջ: Եւ մենք կը սորվինք գնահատել այն ճշմարտութիւնը, որ օր մը՝ մենք կը ստանանք «կեանքի պսակը, որ Տէրը խոստացաւ զինք սիրողներուն» (Հմ. 12): Եկէ՛ք շարունակենք բարձրանալ միասին:

Աղօթք - Աստուա՛ծ, շնորհակալ եմ Ձեզի, որ կը հասկնաս այն ամէն բաները, ինչ որ կը կատարուին իմ կեանքիս մէջ եւ լաւ ծրագիրներ ունիս ինձի համար: Ամէն:

Ի՞նչ հարցեր կը դիմագրաւես դուն այսօր: Գուցէ՛ դուն տակաւին տեսած չես, բայց նկարագիրի ո՞ր գիծերը Աստուած կը ցանկայ աճեցնել քու մէջը:

Միայն թե ուժովցի՛ր եւ շա՛տ քաջ եղիր, որպէսզի իմ ծառայիս՝ Սովսէսի քեզի պատուիրած ամբողջ Օրէնքը զգուշութեամբ գործադրես: [Յեւ. 1. 7]

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ... ՈՉ ՇԵՂՈՒՄ

Դպրոցական պատի վարորդը՝ ղեկին նստած ուժքը կորսնցուց եւ վաթսուն աշակերտով լեցուն մեծ պասը կարելի չէր կառավարել: Եօթներորդ դասարանի աշակերտ՝ Տիրըն Ռիվզ (Dillon Reeves) ցատկեց իր աթոռէն, շտապեց դէպի պասին առջեւը եւ ճիշդ ժամանակին՝ կամաց մը կոխեց արգելակին ու պասը կանգնեցուց: Մինչ աշակերտներուն մեծ մասը՝ զբաղ էին հեռախօսով հաղորդագրութիւններ ուղարկելով կամ խաղեր խաղալով, Տիրըն՝ որ հեռախօս չունէր, քաջաբար ըրաւ պէտք եղածը: Ան գիտէր՝ կամաց սեղմել արգելակը, որովհետեւ բազմաթիւ անգամներ տեսած էր թէ վարորդը այդպէս կ'ընէ: Խոհեմ ըլլալը եւ ուշադրութիւնը չչեղելը՝ օգնեց անոր՝ փրկելու պասին վրայ եղողներուն կեանքը, ներառեալ վարորդինը, որ յետոյ վերակենդանացաւ:

Յեսու ստիպուած էր քաջաբար քայլ առնելու իր առաջնորդէն՝ իրեն համար օրինակ եղող Մովսէսէն, որովհետեւ ան այլեւս «վարորդի աթոռին վրան չէ՛ր՝ առաջնորդելու Իսրայէլի ժողովուրդը: Աստուած ըսաւ. «Իմ ծառաս՝ Մովսէս մեռաւ. հիմա կանգնէ՛ եւ անցի՛ր այս Յորդանանէն» (Յես. 1. 2): Աւելին, Ան հրահանգեց ըսելով. «Ուժովցի՛ր եւ շա՛տ քաջ եղիր, ... Օրէնքը զգուշութեամբ գործադրես. անկէ աջ կողմ կամ ձախ կողմ մի՛ շեղիր» (Հմ. 7): Աստուած Յեսուին կ'ըսէր, որ չչեղի եւ իր կեդրոնացումը պահէ եւ իր աչքերը պահէ Աստուծոյ տուած հրահանգներուն վրայ՝ խորհրդածելով անոնց վրայ «գիշեր եւ ցերեկ» (Հմ. 8):

Մենք կրնանք շեղիլ մեր առջեւ պարզուած պաստարներով եւ այլ բաներով, որոնք կը ստիպեն մեզ մեր հայեացքը հեռացնել Աստուծմէ եւ Աստուածաշունչին մէջ յայտնաբերուած իմաստութենէն (Բ. Տիմ. 3. 16-17): Փոխարէնը, երբ մենք զգօն կը մնանք «նայելով Յիսուսի, մեր հաւատքի ռահուիրային եւ իրագործողին» (Եբ. 12. 2), մենք կրնանք գործի լծուիլ՝ երբ Աստուած մեզ կանչէ:

Աղօթք - Սիրելի Յիսուս, կը խնդրեմ՝ օգնէ ինձի խուսափիլ շեղումներէ, մինչ կը հետեւիմ Զեզի: Ամէն:

Ինչո՞ւ համար կարելոր է մեր հայեացքը պահել Յիսուսի վրայ:
Ինչպե՞ս կրնանք պատրաստ ըլլալ՝ Անոր կոչին այսօր:

Տերոջ կարեկցութեա՛մբ անհետացած չենք: [Ողբ 3. 22]

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ՝ ԵՐԲԷ՛Ք ՉԻ ՍՊԱՌԻՐ

Երբ ձօզիի (Josie) հիւանդ եւ ծեր հայրը տեղափոխուեցաւ իր մօտ, ծանրաբերնուած զգաց՝ անոր հոգ տանելու ամէնօրեայ կարիքներով: Դեղորայքը, որ ան պէտք էր գնէր՝ սուղ էին: Խնամակալութեան առաջադրանքները եւ իմաստութիւնը, որ անհրաժեշտ էր անոր առողջական վիճակի վատթարացման համար որոշումներ կայացնելու, բացի իր միւս «լման ժամանակով» գործը, կը մաշեցնէր զինք: Ան ըսաւ. «Ինչպէ՞ս կրնամ շարունակել հաւաքել եւ տալ ուժ, գործնական միջոցներ, իմաստութիւն եւ սէր:

ձօզին յոյս գտաւ Ողբի գիրքին մէջ, որ կը պատմէ Երեմիայի եւ Աստուծոյ ժողովուրդին վիշտին մասին: Երուսաղէմը ակերուած էր Բաբելոնացիներու ձեռքով եւ Հրեաներուն կը սպասէր աքսորի անորոջ օրեր: Տառապանքը ճնշող էր, բայց Աստուած խոստացաւ, որ «Տէրոջ կարեկցութեա՛մբ անհետացած չեն» (Ողբ 3. 22): Անոր ուխտի սէրը կը մնար իրենց հետ, նոյնիսկ եթէ անոնք այլեւս չըլլային խոստացուած երկրին մէջ. «Որովհետեւ իր կարեկցութիւնը չի սպառիր»:

Իր զաւակներուն հանդէպ Աստուծոյ ունեցած սէրը՝ սահմաններ չունի: ձօզի այս իրողութեան անդրադարձաւ արձագանգելով 24-րդ համարը. «Տէ՛րն է իմ բաժինս. հետեւաբար անոր պիտի յուսամ»: Ան ըսաւ. «Ես կրնամ ամէն օր հաւաքել եւ տալ, այն ինչ որ անհրաժեշտ է, որովհետեւ ես իմ ուժս կը ստանամ Անկէ, որուն սէրը երբէ՛ք չի սպառիր»:

Երբ մենք կ'ապրինք Աստուծոյ հնազանդելով, մենք կրնանք յոյս ունենալ, անկախ անկէ, թէ ի՞նչ կը սպասէ մեզի: Իր կատարեալ իմաստութեամբ՝ Ան գիտէ, թէ ինչ բանի կարիքը ունինք եւ կ'ապահովէ մեզի այնպէս՝ ինչպէս Ինք լաւագոյնը կը տեսնէ:

Աղօթք - Սիրելի Աստուած, իմ յոյսս Զո՛ւ վրադ է. ես կը սպասեմ Զեզի: Ամէն:

Ինչպէ՞ս Աստուծոյ կատարեալ սէրը քեզի կու տայ մխիթարութիւն եւ վստահութիւն: Ինչպէ՞ս կրնաս վստահիլ Անոր իմաստութեանը՝ քու կարիքներդ ապահովելու հարցին մէջ:



Ինծի՛ նմանեցեք, ինչպես ես ալ՝ Զրիստոսին: [Ա. Կորնթ. 11. 1]

ԻՆԾԻ՛ ՆՄԱՆԻՐ

Երբ իր հայրը ձուկ որսալու թեւը նետեց լիճին մէջ, երկու տարեկան Թամբսը (Thomas) ընդօրինակեց՝ իր հօր գործողութիւնը՝ իր սեփական ձկնորսական եղէգով: Աւելի ուշ, երբ ան կայնած էր լիճին ծանծաղ եզերքը, Թամբս նաեւ փորձեց ընդօրինակել հօր բրածը, երբ ձուկը ետ նետեց ջուրին մէջ՝ իր եղէգը ջուրին մէջ մխրճելով եւ մոլախոտ բռնելով: Իւրաքանչիւր անգամ մոլախոտ բռնելէ ետք, Թամբս կը բարձրացնէր զայն, որպէսզի հայրիկը տեսնէ ու հիանայ, առաջ որ ետ ձգէ զանոնք լիճին մէջ:

Մենք հակումը ունինք սորվելու, թէ ի՞նչն էլաւն ու օգտակարը, եւ այն՝ ինչ որ հաստատօրէն չէ՛, ուրիշներուն դիտարկելու եւ ընդօրինակելու միջոցով: Հաւանաբար՝ այդ է պատճառը, որ Նոր Կտակարանին մէջ՝ Յիսուսի հետեւողները յաճախ կը խրախուսեն աւետարանին հաւատարիմ ծառաներուն, որպէս տիպար օրինակներ (տե՛ս Բ. Թես. 3. 9, Եբ. 13. 7, Գ. Յովհ. 1. 11):

Բ. Թեսաղոնիկեցիս 3-ին մէջ, Պօղոս տուաւ այնպիսի վարքագիծի օրինակներ, որոնք պէտք չէ ընդօրինակել (ծոյլ, խանգարող, անկարգ եւ միջամտող ապրելակերպ. Հմ. 6, 11) եւ իր ընթերցողներուն ըսաւ, որ ընդօրինակեն իր եւ միւս առաջնորդներուն մէջ յայտնաբերուած անարատութեան օրինակները (Հմ. 7-10): Եւ ան խրախուսեց անոնց «չի ձանձրանալ բարիք գործելէ» (Հմ. 13):

Բայց Պօղոս գիտէր, որ ի վերջոյ՝ կ'արժէ իր օրինակը ընդօրինակել՝ միայն այնքանով, որքանով որ այդ կը մատնանչէ Քրիստոսի (Ա. Կորնթ. 11. 1): Միայն մեր կեանքը արմատաւորելով Քրիստոսի հաւատքի եւ զօրութեան մէջ, մենք կրնանք աճիլ շնորհքով եւ իմաստութեամբ:

Աղօթք - Սիրելի Երկնաւոր Յայր, շնորհակալ եմ քեզի՝ այն սիրելի մարդերուն համար, որոնք Դուն դրած ես իմ կեանքիս մէջ, որոնք ինծի ուղղած են դէպի քեզ եւ կ'օգնեն ինծի սորվելու, թէ ի՞նչ կը նշանակէ ապրիլ քու զօրութիւնովդ եւ սիրով: Ամեն:

Ո՞վ եղած է քու կեանքիդ մէջ աստուածավախ օրինակելի անձ մը: Ո՞վ կրնայ իր հերթին ազդել քու վրայդ:

Ելլե՛նք, բարձրանա՛նք եւ տիրանա՛նք անոր, քանի որ մենք անշուշտ կրնանք անոր յաղթել: [Թու. 13. 30]

ԱՆՅՈՅՄ՝ ԹԷ ՅՈՒՄԱԼԻ

Ամէն աշուն, կարգ մը բոյսեր՝ կը գրգռեն որդիիս գիթը՝ ու շնչարութեան խողովակներն եւ կուրծքը: Գիշեր մը անոր ախտանիշները այնքա՛ն ուժեղացան, որ ես մտածեցի թէ պէտք է զինք բժիշկի տանիլ: Մեր ընտանիքը նոր ապաքինած էր՝ ամիսներ շարունակ լուրջ առողջական խնդիրներէ, եւ ես այնքան յուսահատած էի, որ նոյնիսկ չէի ուզեր աղօթել: Ամուսինս՝ սակայն, յոյս գտաւ՝ այն ամէն բաներուն մէջ, ինչով Աստուած արդեն օգնած էր մեզի: Ան աղօթեց իմաստութիւն եւ ուղղութիւն խնդրելով: Կարճ ժամանակ մը ետք՝ դեղերու օգնութեամբ՝ մեր որդիին վիճակը բարելաւուեցաւ:

Թէեւ անոնց ուղեկիցներէն ոմանք յուսահատած էին, Քաղէբն ու Յեսուն՝ յոյս եւ լաւատեսութիւն դրսեւորեցին Քանանի երկիրը հետխուզելէ ետք (Թու. 14. 6-9): Աստուած՝ այդ տարածաշրջանը խոստացած էր տալ Իսրայէլի եւ Քաղէբ ըսաւ. «Ելլե՛նք, բարձրանա՛նք եւ տիրանա՛նք անոր, քանի որ մենք անշուշտ կրնանք անոր յաղթել» (13. 31): Միւսները կը կարծէին, որ անհնար է՝ որովհետեւ Քանանացիները հզօր են, իսկ անոնց քաղաքները չափազանց լաւ ամրացուած են (Հմ. 28, 31-33):

Աստուծոյ լուրջ մարտահրաւէրներ էին. բայց Քաղէբի հաւատքը հիմնուած էր Աստուծոյ՝ անցեալին ցոյց տուած հաւատարմութեան վրայ՝ Իր ժողովուրդին իրենց պայքարին մէջ: Աստուծոյ ժողովուրդը, ի վերջոյ, նուաճեց Քանանը եւ Քաղէբ ստացաւ անոր բաժինը, քանի որ ան հետեւած էր Անոր «ամբողջ սրտով» (Յես. 14. 9):

Շատ իրավիճակներ այնոյս ըլլալու զգացումը կու տան, բայց անոնց համար, որոնք կը ճանչնան Աստուած եւ կը հաւատան Անոր հաւատարմութեան, միշտ յոյսի պատճառ կայ, քանի որ մենք կը վստահինք Անոր զօրութեան եւ շնորհքին, որ մեզի պիտի տանի առաջ:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ թող քաջութիւն եւ յոյս բխի Զեզի հետ իմ ունեցած յարաբերութիւններէն, որպէսզի ոգեշնչե՛մ ուրիշներուն, որ դիմեն Զեզի, երբ կեանքը դժուար թուի ըլլալ: Ամէն: **Երբ յուսահատ, ճնշուած եւ վախցած կը զգաս, աղօթէ Աստուծոյ՝ խնդրելով օգնութիւն: Յոյսդ դի՛ր Իր վրայ միայն:**

Զեզի պիտի սորվեցնեմ ... պիտի ցուցնեմ երթալիք ճամբադ. ...
իմ աչքս քու վրադ պիտի ըլլայ: [Սաղմ. 32. 8]

ԻՐԱՊԷՍ ՎՍՏԱՅԻԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Թափառող կատուն ողորմելի մլաւեց՝ զիս կանգնեցնելով ճամբուս վրայ: Ես տակաւին նոր անցած է ուտելիքի մը կոյտին քովէն, որ մէկը անպատասխանաբար կերպով նետած էր գետին: Ի՛նչ լա՛ւ, Աստուծոյ տուած կերակուրը այս անօթի կատուն: Ես ինծի մտածեցի: Կերակուրը պահուած էր մօտը եզող սիւնի մը ետին, ուստի փորձեցի կատունն հրապուրել որ մօտենայ: Ան վստահութեամբ շարժեցաւ դէպի ինձ, յետոյ կանգ առաւ եւ չուզեց հետեւիլ ինծի: Կ'ուզէի հարցնել, ինչո՞ւ չես վստահիր իմ տուած ուղղութեանս: Քեզի համար լեցո՛ւն ճաշ կը սպասէ:

Յետոյ՝ անդրադարձայ: Միթէ՞ ես ալ նոյն կերպով չեմ վարուիր Աստուծոյ հետ՝ իմ ունեցած յարաբերութիւններուս մէջ: Որքա՛ն յաճախ պատասխանած եմ Իր տուած պատուէրներուն՝ մտածելով, որ կը վստահիմ Քեզի՝ Աստուած, բայց չեմ կարծեր, որ Քու պատուէրներդ վստահելի են՝ չհասկնալով, որ Անոր աստուածային ապահովումը կրնայ սպասել ճիշդ հոն՝ անկիւնը:

Աստուծոյ ճամբաները վստահելի են, քանի որ Ան կը սիրէ մեզ եւ մեր լաւագոյն շահը կը մտածէ: Ան մեզի կ'ըսէ. «Քեզի պիտի սորվեցնեմ, ու քեզի պիտի ցուցնեմ երթալիք ճամբադ. քեզ պիտի խրատեմ, իմ աչքս քու վրադ պիտի ըլլայ» (Սաղմ. 32. 8): Ու տակաւին՝ Ան մեզի հետ չի վերաբերիր՝ կենդանիներու նման, որոնց պէտք է վերահսկել (Հմ. 9): Ան կը ցանկայ, որ մենք պատարաստակամ հետեւինք Իրեն եւ կը խոստանայ Իր յաւիտենական ներկայութիւնը, երբ մենք այդ մէկը կ'ընենք. «Կարեկցութիւնը պիտի շրջապատէ Տէրոջ վստահողը» (Հմ. 10): Մեզի միայն անհրաժեշտ է շարունակել հետեւիլ Իրեն՝ իմանալով, որ Ան մեզի հետ կ'ըլլայ ամէն քայլափոխին:

Աղօթք - Սիրելի Յայր, կը խնդրե՛մ՝ սորվեցուր ինծի լիովին Զեզի վստահիլ, որովհետեւ ես գիտեմ թէ Դուս կը սիրես զիս եւ ոչի՛նչ կը ցանկաս, բացի լաւագոյնը ինծի համար: Ամեն:

Վախեր եւ մտահոգութիւններ կը խանգարեն մեզի՝ լիովին վստահելու Աստուծոյ: Սակայն Իր տուած խոստումը կը խրախուսէ մեզի՝ որ վստահինք Իրեն:

Կրակէն ետք՝ մեղմ, թեթեւ՝ ձայն մը լսուեցաւ: [Գ. Թագ. 19. 12]

ԼՍԵ՛Լ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԶԱՅՆԸ

Քսաներորդ դարուն սկիզբը՝ Նիու Եօրք (New York) քաղաքը եղաւ աղմկոտ տեղ մը: Բարձրէն սուրացող գնացքներով, ինքնաշարժներով, բեռնատար կառքերով, թերթ վաճառող տղոց գոռումով եւ անապարող մարդոցմով՝ կեանքը աղմկոտ էր: Տակաւին՝ օր մը՝ Պրօտուէյ (Broadway) եւ 34-րդ փողոցին վրայ՝ Չարլզ Գէլլօկկ (Charles Kellogg) անունով մարդ մը՝ յայտարարեց իր ընկերոջ. «Լսէ՛, ես ծղրիթ (cricket) մը կը լսեմ»:

«Ա՛նկարելի է». պատասխանեց անոր ընկերը: «Այս ամբողջ ժխորին մէջ դուն չե՛ս կրնար լսել անոր փոքր ձայնը»: Սակայն՝ Պր. Գէլլօկկ պնդեց եւ ի վերջոյ գտաւ ծղրիթը, որ կը ճռուողէր՝ հացատունին պատուհանին մէջ: «Ի՛նչ զարմանալի լսողութիւն ունի՛ս», ըսաւ ընկերը: «Ո՛չ՝ երբէ՛ք». պատասխանեց Պր. Գէլլօկկ: «Խնդիրը այն է, թէ ո՛ւր կը դարձնես քու ուշադրութիւնդ»:

Եղիա՛ն՝ Աստուծոյ մարգարէն էր, որ հենց նոր տեսաւ Անոր զօրութեան զարմանալի դրսեւորումը, բայց հիմա՛ մարգարէն կը թաքնուէր քարայրին մէջ՝ վախնալով հեթանոս թագուհիէն (Գ. Թագ. 19. 1-9): Այս անգամ՝ սակայն, Աստուած չուզեց հզօր կերպով հաղորդակցիլ: Թէեւ Ան ղրկած էր սաստիկ հով, երկրաշարժ եւ նոյնիսկ՝ կրակ (Հմ. 11-12), այժմ ժամանակն էր Եղիայի համար՝ որ ան անձամբ եւ հանգիստ կերպով հաղորդակցի Աստուծոյ հետ: Աստուած ուզե՛ց խօսիլ մարգարէին հետ «մեղմ փսփսուքով» (Հմ. 12):

Այսօր մեր կեանքին մէջ՝ աղմուկի յաւելում կայ, սակայ՛ն Աստուած տակաւին կը խօսի հանգիստ ձայնով՝ Սուրբ Գրութիւններու եւ Իր Սուրբ Հոգիին միջոցով: Աղօթքով՝ մեր ուշադրութիւնը Աստուծոյ վրայ կեդրոնացնելու համար, ժամանակ յատկացնելը՝ կ'օգնէ մեզի՝ լսելու Անոր մխիթարող եւ առաջնորդող ձայնը:

Աղօթք - Սիրելի Յայր, շնորհակալ եմ՝ որ կրնա՛մ լսել Քու Հոգիիդ՝ հանգի՛ստ խօսելու ինծի հետ: Ամէն:

Ի՛նչ տեսակի աղմուկներ կը կուտակուին քու կեանքիդ մէջ: Ինչպէ՞ս կրնաս լսել՝ Աստուծոյ ձայնը՝ քու բազմազբաղ աշխարհին մէջ:



Ձեր խօսքը ամեն ատեն շնորհքով թող ըլլայ, աղով համեմուած, որ գիտնաք թէ ի՞նչ պէտք է պատասխանէք իւրաքանչիւրին:

[Կող 4. 6]

ԱՂԻ՝ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Պըրթ (Bert) իր դրամատան քարտը դրաւ ճաշարանին ներկայացուցած հաշուեցուցակին վրայ: Սպասարկող երիտասարդը՝ առաւ եւ ապա՝ կա՛նգ առնելով հարցուց. «Սպասէ՛, ո՞վ է այն մարդը որ ըսէ այս այնքա՛ն ինքնահաւան խօսքը. նա եմ ճամբան եւ ճշմարտութիւնը եւ կեանքը »: Պըրթ անդրադարձաւ, որ ան կ'ականարկէր իր Քրիստոնէական տնտեսական ընկերութեան կողմէ քարտին վրայ տպագրուած, Յովհաննոս 14. 6-էն առնուած՝ Յիսուսի խօսքին: Սպասարկողին պատասխանէն գոլարճացած՝ Պըրթ բացատրեց «այս մարդուն» ինքնութիւնը եւ Անոր գոհաբերութիւնը՝ մեզ Աստուծոյ մօտ բերելու համար:

Երբ մենք կը հանդիպինք մարդոց, որոնք ոչինչ գիտեն մեր հաւատքին մասին, մենք կրնանք պատասխանել ծաղրական կամ նոյնիսկ դատողութեամբ: Բայց Պետրոս առաքեալը՝ մարտահրաւէր տուաւ մեզի՝ նոյն ատեն զգուշացնելով. «Միշտ պատրա՛ստ եղէք հեզութեամբ ու երկիւղածութեամբ ջատագովական ներկայացնելու ամէն մէկուն որ կը խնդրէ ձեզմէ ձեր մէջ եղած յոյսին պատճառը» (Ա. Պետ. 3. 15): Կողոսացիս 4. 6-ին մէջ, Պօղոս բացատրեց նման պատասխանի մը ուժը. «Ձեր խօսքը ամէն ատեն շնորհքով թող ըլլայ, աղով համեմուած, որ գիտնաք թէ ի՞նչ պէտք է պատասխանէք իւրաքանչիւրին»: Ճի՛շդ այնպէս, ինչպէս մեր ճաշին վրայ եղած աղը՝ համ կու տայ, աղի պատասխանները կը հրաւիրեն ուրիշներուն, որ աւելի մօտենան հաւատքով:

Հարցումները՝ կրնան զարմանալի կերպով գալ՝ անոնց կողմէ, որոնք ամբողջովին անծանօթ են Յիսուսի: Երբ մենք կը պատասխանենք հեզութեամբ եւ շնորհքով, մեր պատասխանները կ'ըլլան աղով համեմուած, որ կը հրապուրեն հարցնողներուն աւելի շատ ցանկալու:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ պատրաստե՛ գի՛ս այն հարցումներուն, որոնք Դուն կը դնես ճամբուս վրայ, որպէսզի կարենամ շնորհքով պատասխան տալ: Ամէն:

Ինչպե՞ս զարմացած ես՝ Աստուծոյ մասին տրուած հարցումը մը: Ինչպե՞ս կրնաս պատրաստուիլ պատասխանելու՝ քեզի տրուած հարցումներուն:

Կ'ուզեմ որ գիտնաք, եղբայրներ՛ր, թե ինչ որ պատահեցաւ ինծի՝ առաւելապէս պատճառ եղաւ աւետարանի յառաջդիմութեան: [Փիլ. 1. 12]

ԱՍՏՈՒԾՈՅ ՏԵՍԱԿԵՏԸ

2018-ին, Հովիւ՝ Թէն Ֆիլիպպին (Tan Filippin) հեծանիւի արկածի հետեւանքով, հիւանդանոց փոխադրուեցաւ՝ ազգրի կոտորուածքներով: Երբ բժշկները ուզեցին CT քննութիւն ընել՝ ստուգելու ուղեղի ցնցումը, անոնք յայտնաբերեցին՝ մեծ ու վատ որակով ուռ մը իր ուղեղին յառաջամասին: Այդ բացայայտութեան հետեւանքը եղաւ՝ երկար բժշկական ճամբորդութիւն մը, աւելի շատ թիւով զանգուածներու յայտնաբերում եւ լայնածաւալ բուժումներ, անոնց մէջ ըլլալով՝ ոսկորածուծի փոխպատուաստութիւն: Ֆիլիպպին կը հաւատայ, թէ «Աստուած թոյլ տուաւ արկածին, որ իր ուղեղի ուռը յայտնաբերուի»:

Պօղոս ըսաւ Փիլիպպեցիներուն, որ Աստուած կրնայ դժբախտ պատահարներ ու այլ դժուարութիւններ՝ օգտագործել իր փառքին համար: Առաքեալը՝ կը գտնուէր Հռոմի մէջ տնային բանտարկութեան մէջ՝ Ներօն կայսրին առջեւ ըրած ծանր յանձազործութեան համար՝ դատաւարութեան սպասելով: Պօղոս տխուր ըլլալու փոխարէն՝ ուրախացաւ: Ինչպէ՞ս կրնար ուրախ ըլլալ: Պօղոս «Քրիստոսի համար կրած կապերը» (Փիլ. 1. 13), համարեց՝ որպէ՞ս առանձնաշնորհում (Հմ. 29): Ապա, նայելով իր դժուարութեան՝ Աստուծոյ տեսանկիւնէն, ըսաւ. «Թէ ինչ որ պատահեցաւ ինծի՝ առաւելապէս պատճառ եղաւ աւետարանի յառաջդիմութեան» (Հմ. 12): Ան օգտագործեց իր բանտարկութիւնը, որպէս հնարաւորութիւն՝ բաժնեկցելու աւետարանը՝ զինք շղթայող պահակներուն հետ: Ի վերջոյ, երբ ան քարոզեց Յիսուսի մասին եղած բարի լուրը, երբ ստրկութեան մէջ էր, իր օրինակը քաջալերեց միւս հաւատացեալներուն «քարոզելու Աստուծոյ խօսքը առանց վախի» (Հմ. 14):

Երբ դժբախտութիւն կու գայ, եկէ՛ք վստահինք Աստուծոյ տեսակէտին եւ հաւատանք, որ նոյնիսկ՝ ա՛յն ինչ որ դժուար է, Ան կրնայ լաւ բան մը դուրս բերել:

Աղօթք - Երկնաւոր Յայր, կը խնդրեմ, գործածէ իմ դժուար պահերս՝ Զու կամքդ իմ մէջս յայտնաբերելու համար: Ամէն: **Երբ մարտահրաւերներու առջեւ գտնուինք, փորձենք տեսնել Աստուծոյ տեսակետը ու իր կամքը մեր կեանքերուն համար:**

Կեանքի ուղին պիտի ցուցնես ինձի. երեսիդ առջեւ ուրախութեան յագեցում կայ: [Սաղմ. 16. 11]

ԳՈՅԱՏԵՒՈՂ ՍԷՐ

2014-ին, Նորվեկիայի գիւղերէն մէկուէն բնակիչները՝ ճանապարհի ցուցանիչ մը կանգնեցուցին, որ կը խրախուսէր մարդիկ՝ փողոցէն անցնելու՝ անմիտ կերպով: Նպատակը՝ քանի մը վայրկեան զուարճալի պահ մը ստղծել էր՝ «անմտութեամբ քալողներուն» եւ նոյնպէս դիտողներուն համար, որպէսզի լուսաւորեն միմիանց օրերը: Անմտութեան այս հպանցիկ ակնարկները՝ վայրկեանական խրախուսանք էին՝ նուաստ հոգիներուն համար:

Աստուածաշունչը՝ կ'ընդունի, որ կ'ունենանք դժուարութիւններու եւ նեղութիւններու եղանակներ, որոնց հետեւանքով՝ մենք բարոյալքուած եւ տխուր կը զգանք: Նման ցաւերու կը ձայնակցի Ողբի գիրքը եւ բազմաթիւ Սաղմոսներ: Սակայն՝ նոյն ատեն Սուրբ Գրութիւնները նաեւ կը մատնաչեն մեզի, ա՛յն ինչ որ կրնայ մեզի յարատեւ ուրախութիւն պատճառել՝ ամէն պարագաներու մէջ. Աստուծոյ ներկայութիւնը: Դաւիթ գրեց Սաղմոս 16-ի խօսքերը՝ ակնարկելով յաւիտենական ապագայի մը՝ Իր հետ: Մեզմէ անոնք, որոնք այսօր ողջ են, Յիսուսի մահէն ու յարութենէն ետք, գիտե՛ն Աստուծոյ ներկայութիւնը՝ նոյնիսկ հիմա, Սուրբ Հոգիին միջոցով:

Թէեւ անոնք կրնան տեսել միայն կարճ ժամանակ մը, սակայն զուարճութիւնը կրնայ բարձրացնել մեր տրամադրութիւնը՝ դժուարութեան ժամանակ: Սակայն տակաւին, զգալու համար տեւական ուրախութիւնը, որ մեզի կ'աջակցի մեր կեանքի ամենէն ցաւալի եղանակներուն մէջ, մենք պէտք է «ապաստան գտնենք» Աստուծոյ մօտ (Հմ. 1), որ մեզի խորհուրդ կու տայ եւ կը խրատէ (Հմ. 7): Ան երբէ՛ք չի լքեր մեզ. փոխարէնը՝ Ան «կեանքի ուղին կը ցուցնէ մեզի» ու մեզ «ուրախութիւնով կը յագեցնէ» (Հմ. 11):

Աղօթք - Սուրբ Յոգի, շնորհակալ եմ, որ ինձի հետ կ'ըլլաս՝ թէ՛ լաւ եւ թէ՛ վատ օրերու մէջ: Դո՛ւն ես իմ ուրախութեանս աղբիւրը: Ամեն **Դժուար ժամանակներ ու կեանքի եղանակներ մի՛շտ ալ պիտի ունենանք, սակայն Աստուծոյ ներկայութիւնը՝ կը բարձրացնէ մեր տրամադրութիւնը:**

Երբ անոր աղօթեց, Տէրն ալ իր թախանձանքը ընդունեց:
[Բ. Մաց. 33. 13]

ՆՈՐ ՍԿԻԶԲԻ ՍԸ ԱՍՏՈՒԱԾԸ

«Մահուան Վաճառականը՝ Մեռած է»: Այդ էր՝ մահախօսականի մը խորագիրը, որ կրնար ստիպել Ալֆրէտ Նօպլին (*Alfred Nobel*), տինամիտ՝ ուժանակ ուռմբը ստեղծողին, ճշդումի ուղղութիւն մը ընելու իր կեանքին մէջ: Բայց օրաթերթը՝ սխալ մը ըրաւ. Ալֆրէտ տակաւին ողջ էր: Իր եղբայրը Լուտվիկ (*Ludvig*) մեռած էր: Երբ Ալֆրէտ հասկեցաւ, որ գինք կը յիշեն՝ վտանգաւոր գիւտի մը համար, որ խլեց բազմաթիւ կեանքեր, ան որոշեց նուիրաբերել իր նշանակալի հարստութեան մեծ մասը՝ մրցանակ մը հաստատելու՝ անոնց համար, որոնք օգտակար եղած են մարդկութեան: Այդ յայտնի դարձաւ որպէս Նոպլեան Մրցանակ:

Աւելի քան երկու հազար տարիներ առաջ՝ ուրիշ հզօր մարդ մը՝ սրտի փոփոխութիւն ունեցաւ: Յուդայի թագաւոր Մանասէ ապստամբեցաւ Աստուծոյ դէմ: Որպէս արդիւնք, ան աքսորուեցաւ Բաբելոն: Բայց «երբ տազնապի մէջ էր, Տէրոջ իր Աստուծոյն պաղատեցաւ եւ հայրերուն Աստուծոյն առջեւ մեծապէս խոնարհեցաւ», եւ «երբ անոր աղօթեց», Աստուած «գինք Երուսաղէմ՝ իր թագաւորութեան վերադարձուց» (Բ. Մնաց. 33. 12-13): Մանասէն իր իշխանութեան մնացած մասը անցո՛ւց խաղաղութեան մէջ, ծառայելով Աստուծոյ եւ իր լաւագոյնը ընելով՝ իր անցեալին ըրած սխալները վերցնելու համար:

«Տէրը թախանձանքը ընդունեց» (Հմ. 13): Աստուած կը պատասխանէ խոնարհութեան: Երբ մենք կը գիտակցինք, որ պէտք է փոփոխութիւն մը ընենք մեր ապրելակերպին մէջ եւ դիմենք Իրեն, Ան երբէ՛ք մեզի ետ չի դարձներ: Ան մեզի կը հանդիպի շնորհքով, որուն մենք արժանի չենք եւ կը նորոգէ մեզ՝ անձնատուր սիրով, որ թափեց խաչին վրայ: Նոր սկիզբը կը սկսի Իրմով:

Աղօթք - Ներող Յայր, շնորհակալ եմ՝ որ երբէ՛ք զիս չես մերժեր: Կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի, որ դիմե՛մ Զեզի իմ ամբողջ սրտովս՝ այն ամէն բաներուն համար, ինչ որ կ'ընեմ այսօր: Ամէն:

Ո՛ր՝ քու կեանքիդ մէջ պէտք ունիս սիրտի փոփոխութեան: Ինչպէ՛ս պիտի դիմես Աստուծոյ այսօր:

Ո՛վ որ կը բարձրացնէ ինզիկսք՝ պիտի խոնարհի, իսկ ո՛վ որ կը խոնարհեցնէ ինզիկսք՝ պիտի բարձրանայ: [Ղուկ. 14. 11]

ԽՈՆԱՐՀ ՊԱՏԻ

Որպէս նախակրթարանի ուսուցչուհի, ընկերուհիս յաճախ կ'ուղեկցէր աշակերտներուն տարբեր դասարաններ՝ երաժշտութեան կամ արուեստի դասերու համար: Երբ անոնցմէ խնդրուեցաւ՝ հերթի կենալ մէկ այլ սենեակ երթալու համար, հինգերորդ դասարանի աշակերտները կ'աճապարէին լաւ դիրք մը ունենալու շարքին մէջ, եւ ոմանք կը փորձէին հասնիլ շարքին գլուխի բաղձալի տեղը: Օր մը, Ճէննի (Jenni) գարմացուց անոնց ստիպելով բոլորին, որ չըջին եւ առաջնորդեց անոնց այն տեղէն, որ քանի մը վայրկեաններ առաջ՝ շարքին վերջին տեղն էր: Անոնց ցնցումը լսելի էր. «Ի՞րիիինչ»:

Երբ Յիսուս նկատեց ընթրիքի սեղանին շուրջ դիրքի համար նման նպատակ մը, Ան պատասխանեց՝ առակով մը, որ անկասկած գարմացուց հիւրերուն: Օգտագործելով հարսանեկան խնճոյքի մասին պատմութիւն մը, ցուցմունք տուաւ անոնց, որ «չնստին առաջին բազմոցին վրայ» (Ղուկ. 14. 8-10): Քրիստոս շփոթեցուց իրենց ընկերային սովորութիւնները՝ ըսելով, «ո՛վ որ կը բարձրացնէ ինքզինք՝ պիտի խոնարհի, իսկ ո՛վ որ կը խոնարհեցնէ ինքզինք՝ պիտի բարձրանայ» (հմ. 11):

Թագաւորութեան այս սկսզբունքը՝ որդեգրելը կրնայ դժուար ըլլալ, որովհետեւ մեր մարդկային փորձութիւնը տակաւին պիտի կեդրոնանալ մէկը «չահելու» վրայ, ընտրել վերջին դիրքը, որպէսզի յետոյ առաջին ըլլանք: Բայց Յիսուս կը յորդորէ մեզ՝ հետեւիլ իր օրինակին եւ օգնութիւն ակնկալել իրմէ՝ վերակողմնորոշելու մեր մտածումը, որպէսզի տեսնենք թէ խոնարհ, վերջին եւ հեզ ըլլալը՝ իսկապէ՛ս համարենք պատիւի տեղը ըլլալ:

Աղօթք - Տէր Յիսուս, կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի որ ցուցաբերեմ խոնարհութեան բոլոր հանգամանքները: Ամէն:
Քու կեանքիդ մէջ՝ ո՛վ կը մարմնաւորէ այն խոնարհութիւնը, որու կը հրաւիրէ Յիսուս: Ե՞րբ կը պայքարիս՝ քու սեփական պատուաւոր տեղը զիջելու համար:



Դուն շարունակ իմ սեղանս հաց պիտի ուտես: [Բ. Թագ. 9. 7]

ՍԻՐԵԼ ՈՒՐԻՇՆԵՐԸ՝ ՅԻՍՈՒՍՈՎ

Երկրորդական դպրոցի մարզական նոր խաղ մը կայ, որ մեր երբեւէ տեսած ամենէն հիասքանչ փորձառութիւններէն մէկն է:

Ունի խաղի մը նոյն տարրերէն շատերը, որ ծանօթ է ջերմեռանդ խանդաւորողներու, իրաւարարներու եւ ցուցատախտակի մը: Բայց՝ կայ էական մէկ շրջում մը. խաղի դաշտին վրայ հինգ հոգիներէ բաղկացած իւրաքանչիւր խումբ՝ ունի երկու ո՛չ հաշմանդամ եւ երեք հաշմանդամ խաղացողներ: Խաղի դաշտին վրայ եղած գործունէութիւնը կը ջերմացնէ մեզ, քանի որ խաղացողներուն կ'օգնէ, կը խրախուսէ եւ գիրար կ'ուրախացնէ, անկախ անկէ, թէ ո՞ր խումբին հետ անոնք կը ներկայանան: Խաղը ուղղուած է այն ուսանողներուն, որոնք այլ կերպ չէին ապրէր մրցակցութեան խաղի ուրախութիւնը:

Դպրոցներու համար պէտք է՝ դիտաւորեալ, իմաստուն ղեկավարութիւն՝ ուսանողներուն այսպէս յարգելու համար: Եւ անոնց ջանքերը կ'արտացոլան՝ Դաւիթ Թագաւորի օրինակը, որ մեզի համար դրուած է Աստուածաշունչին մէջ:

Դաւիթի օրերուն տարածուած ասացուածքը այն էր թէ «կոյրն ու կաղը տունը պիտի չմտնեն» (Բ. Թագ. 5. 8), որ կ'օգտագործուի փոխաբերական իմաստով՝ կապուած իր թշնամիներուն հետ: Սակայն Դաւիթ՝ որոշեց իր պալատը տանիլ՝ Յովնաթանի որդին՝ Մեմփիբոսթէն, որ երկու կաղ ոտքեր ունէր եւ պատուելի զինք, որ «շարունակ իր սեղանէն հաց պիտի ուտէր» (9. 7):

Պօղոս յատակ ուղեցոյց մը կը ներկայացնէ, թէ ինչպէ՞ս պէտք է վերաբերուինք ուրիշներու հետ: «Իրարու հանդէպ գորովալից եղէք՝ եղբայրական սիրով. պատուելու մէջ՝ գիրար՝ գերադասեցէք» (Հռոմ. 12. 10):

Եկէ՛ք՝ կիրառենք միասնական ապրիլը՝ վստահ ըլլալով, որ Յիսուսի սիրով՝ պիտի յարգենք բոլորին, որու որ հանդիպինք:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրե՛մ, օգնե՛ ինձի շնորհք եւ բարութիւն ցուցաբերելու՝ անոնց, որոնք իմ սիրտիս եւ օգնութեանս կարիքը ունին: Ամէն:

Ինչպէ՞ս կարելի է խրախուսել ձեր շուրջը եղող մարդոց՝ քաջալերով անոնց:

Կ'աղօթեմ՝ որ դուք՝ սիրոյ մէջ արմատանալով ու հիմնուելով՝
գորութեամբ ուժովկաք: [Եփ. 3. 17-18]

ԽՈՐԱՊԷՍ ԱՐՄԱՏԱԻՈՐՈՒՄԾ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՋ

Սիրուած հովիւ՝ Էնտրու Մըրէյ (*Andrew Murray*) (1828-1917) պատմեց թէ ինչպէ՛ս իր հայրենի՝ Հարաւային Ափրիկէի մէջ տարբեր տեսակի հիւանդութիւններ, կ'ազդեն այդտեղի նարինջի ծառերուն վրայ: Վարժութիւն չունեցող աչքերուն՝ ամէն ինչ կրնայ լաւ թուիլ, բայց մասնագէտ ծառագէտը կրնայ նկատել փտտումը, որ կ'ազդարարէ ծառին դանդաղ մահը: Հիւանդ ծառը փրկելու միակ միջոցը՝ ցօղունն ու ճիւղերը արմատէն հեռացնելն ու նորի վրայ պատուաստելն է: Յետոյ ծառը կրնայ ծաղկիլ՝ պտուղ տալով:

Մըրէյ այս օրինակը կապեց Պօղոս առաքեալի Եփեսացիներուն ուղղած նամակին հետ: Հռոմի բանտէն՝ Պօղոս նամակ գրեց, որ հրաշալի կերպով՝ կ'ամփոփէ Յիսուս Քրիստոսի աւետարանը: Անոր հովուական սիրտը կը փայլի, երբ ան կ'աղօթէ, որ հաւատացեալները զօրանան Քրիստոսի Հոգիին միջոցով՝ իրենց ներքին հուլթեան մէջ, որպէսզի Ան բնակի անոնց սիրտերուն մէջ՝ հաւատքով (Եփ. 3. 16-17): Պօղոս փափաքեցաւ, որ անոնք «սիրոյ մէջ արմատանալով ու հիմնուելով զօրութեամբ ուժովնան» եւ ըմբռնեն Աստուծոյ առատ սիրոյ ամբողջ չափը (Հմ. 17-18):

Որպէս Յիսուսի հաւատացողներ, մեր արմատները խորապէս կը սուզուին Աստուծոյ սիրոյ հարուստ հողին մէջ, ուր սննունդանիւթերը կ'ամրացնեն մեզ եւ կ'օգնեն մեզի աճելու: Եւ երբ մենք պատուաստուած ենք Յիսուսի վրայ, Անոր Հոգին կ'օգնէ մեզի պտուղ տալու: Հնարաւոր է, որ մենք ստիպուած ըլլանք դիմագրաւելու փոթորիկներ, որոնք այս կամ այն կողմ կը ծռեն մեզ, բայց մենք կրնանք հաստատ կենալ, երբ արմատացած ըլլանք կեանքի եւ սիրոյ աղբիւրին մէջ:

Աղօթք - Սիրող Աստուած, կը խնդրե՛մ՝ հաստատե՛ գիս Զու սիրոյդ մէջ, որպէսզի պտուղ տամ եւ փառք բերեմ Զեզի: Ամէն:
Եթէ պատուաստուած ըլլանք Յիսուսի որթատունկին վրայ, կ'ապահովենք Աստուծոյ հետ մեր կեանքին մէջ բաւականաչափ սննդանիւթեր՝ ծաղկելու համար:

Ինք տեսաւ Տէրը: [Յովհ. 20. 18]

ՍԻՐՈՅ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՆԱԿՆԿԱԼԸ

Դասական մարզական երեւակայական՝ Երազներու Դաշտ Ֆիլմին մէջ, կերպարը՝ Ռէյ Գինսէլլան (Ray Kinsella) կը հանդիպի իր հանգուցեալ հօրը, որպէս մարզական երիտասարդ տղամարդ: Առաջին անգամ տեսնելով անոր՝ Ռէյ կը մեկնաբանէ իր կնոջ՝ Էնի. «Ես տեսայ անոր՝ միայն տարիներ ետք, երբ ան մաշած էր կեանքէն: Նայէ՛ իրեն ... Ի՞նչ ըսեմ անոր»: Տեսարանը՝ հարց մը կ'առաջացնէ. թէ ինչպէ՞ս կ'ըլլայ տեսնել մէկը՝ որու սիրած ենք, բայց հիմա մեռած է, բայց հիմա կենդանի է եւ ուժեղ:

Մարիամ Մագդաղենացին՝ այդ փորձառութիւնը ունեցաւ, երբ առաջին անգամ հանդիպեցաւ Յիսուսի, երբ Ան յարութիւն առաւ մեռելներէն: Մարիամ կու լար պարապ գերեզմանին մօտ, երբ դարձաւ «եւ տեսաւ Յիսուսը՝ որ կայնած էր, ու չէր գիտեր թէ Յիսուսն է» (Յովհ. 20. 14): Ինչո՞ւ ան չի՛ ճանչցաւ Անոր: Գուցէ՛ իր աչքերուն արցունքներուն պատճառով կամ այն պատճառով, որ տակաւին մութ էր (Հմ. 1): Աւելի հաւանական է այն պատճառը, որ երբ ան վերջին անգամ տեսաւ գինք, արիւնյուտայ վիճակի մէջ էր, ծեծուած ու տանջուած էր մինչեւ մահ: Ան երբէ՛ք չէր սպասեր, որ կրկին կենդանի տեսնէ գինք. Ան այնքան կենդանի էր, որ ժամանակ պահանջեց, որպէսզի հոյակապ ճշմարտութիւնը հասկնալի դառնայ:

Տակաւին, այնտեղ Յիսուս կայնած էր, «յարութիւն առած անապականութեամբ» (Ա. Կորնթ. 15. 42): Եւ այդ պահուն, երբ Ան կանչեց անոր անունով, Մարիամ ճանչցաւ գինք, ո՛չ միայն որպէս իր հաւատարիմ ընկերը եւ «Վարդապետը» (Յովհ. 20. 16), այլ նաեւ որպէս յարութիւն առած՝ կեանքի Տէրը: Աստուած միշտ միջոցներ ունի՝ մեզ ապշեցնելու իր հրաշքներով: Անոր յաղթական մահը՝ մեզի համար ամենամեծ անակնկալն էր:

Աղօթք - Աբբա Յայր, կը գովաբանեմ Զեզ՝ Յիսուսի մեռելներէն յարուցանելուդ համար: Կը խնդրեմ՝ օգնէ ինծի ապրիլ այն կեանքով, որ Դուն կու տաս այսօր: Ամէն:

Աստուած շատ ձեւերով կը զարմացնէ մեզ: Եկէ՛ք բաժնեկցինք՝ Անոր մեզի ըրած բարութիւնը՝ ուրիշներու հետ:



Ցնծացէ՛ք անով, թեպէտ հիմա՝ ... կը տրտմիք բազմազան փորձութիւններով: [Ա. Պետ. 1. 6]

ԱՊՐԻԼ ԼԻԱԿԱՏԱՐ ՅԱԲԱՏՔՈՎ

Հագարաւոր մարդիկ աշխարհի շուրջ՝ աղօթեցին Սէթիի (Sethie) երեք տարեկան որդիին համար, որ ամիսներ շարունակ հիւանդանոց մնացած էր: Երբ բժիշկները ըսին, որ Շիլօն (Shiloh) «ուղեղի զգալի գործողութիւնն չունի», Սէթին հեռաձայնեց ինծի: «Երբեմն ես կը վախնամ, որ չե՛մ ապրիր լիակատար հաւատքով» ըսաւ ան. «Գիտե՛մ՝ որ Աստուած կրնայ բուժել Շիլօյին եւ թոյլ տալ, որ ան ետ մեզի դառնայ: Ես նոյնպէ՛ս խաղաղ եմ, եթէ Աստուած բժշկէ զինք՝ տանելով դրախտ»: Վստահեցնելով անոր, որ Աստուած կը հասկնայ այնպէս, ինչպէս ո՛չ մէկը կրնայ, ըսի. «Դուն յանձնուած ես Աստուծոյ: Ատիկա լիակատար հաւատք է»: Քանի մը օր ետք, Աստուած Իր թանկագին որդին՝ դրախտ տարաւ: Թէեւ Սէթի կը պայքարէր իր ունեցած կորուստի վիշտին հետ, շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ եւ բազմաթիւ մարդոց, որոնք աղօթեցին: Ան ըսաւ. «Ես կը հաւատամ, որ Աստուած տակաւին բարի է եւ տակաւին Աստուած է»:

Այս աշխարհի մէջ, մինչեւ Յիսուս նորէն գայ, մենք «կը տրտմինք բազմազան փորձութիւններով» (Ա. Պետ. 1. 6): Մենք պէտք է վերամշակենք իրական ցաւէն առաջացած՝ իրական զգացումներ: Սակայն՝ իւրաքանչիւր անձ, որ ունի Քրիստոսով «վերստին ծնունդի» փորձառութիւնը (Հմ. 3), կրնայ կեանքի մէջ խարսխուիլ՝ Յիսուսի հանդէպ սիրով եւ լեցուիլ «անպատմելի եւ փառաւոր ուրախութեամբ» (Հմ. 8): Քրիստոսի հանդէպ մեր հաւատքի վերջնական արդիւնքը «մեր անձերուն փրկութիւնն» է (Հմ. 9):

Սուրբ Հոգին մեզ կը զօրացնէ լիակատար հաւատք ունենալու՝ ապրելով մեր աղօթքներով եւ մեր իրավիճակներով՝ վստահօրէն յանձնուած Քրիստոսի:

Աղօթք - Սիրելի Յիսուս, կը խնդրե՛մ՝ օգնէ ինծի վստահելու Զեզի, մինչ ես կը սպասեմ Զու խոստացած վերադարձիդ, երբ Դուն ամէն ինչ նոր պիտի ընես: Ամէն:

Կործանարար եւ դժուար պայմաններուն մէջ՝ Աստուած կ'օգնէ մեզի ուրախանալու Յիսուսի փրկութեան յոյսով: Իրեն հանդէպ մեր ունեցած վստահութիւնը՝ թո՛ղ փոխէ մեր աղօթքի եղանակը:

«Այս անգամ շնորհակալ պիտի ըլլամ Տերոջմէն»: Ատոր համար անոր անունը Յուդա կոչեց: [ԹՆ. 29. 35]

ՄԱՅՐ ՄԸ Ե՛Տ ԿԸ ՆԱՅԻ

«**Իսկապէս՝ չի սիրեցի Մայրերու Օրը**», ըսաւ երեք երեխաներու մայր՝ Տանան (Donna): «Այդ ինծի ետ բերաւ բոլոր անատակութիւններն ու անյաջողութիւնները, որոնք կը զգամ եւ կը զգայի որպէս մայր»: Ան՝ իր ծնողական կեանքը սկսաւ մեծ ակնկալութիւններով: Իրականութիւնը՝ իջեցուց նշանաձօղը: «Մայր ըլլալը՝ իսկապէս ամենադժուար բանն էր, որ երբեւէ ըրած եմ» ըսաւ ան: Եւ մէկ յատուկ երեխայ մը՝ «սեղմե՛ց՝ իմ ունեցած իւրաքանչիւր կոճակը»:

Երբ Աստուած ընտրեց Լիային՝ որպէս Իսրայէլի մայրիշխան, անկասկած՝ ան մեծ ակնկալութիւններ ունէր իր երեխաներուն իւրաքանչիւրէն: Ան իր առաջին չորս որդիներուն անունները տուաւ՝ կապելով իր դժուար իրավիճակին հետ (Ծն. 29. 32-35): Երբ խօսքը կը վերաբերի Աստուածաշունչի մութ պատմութիւններուն, այս որդիները գլխաւոր դերեր ունէին՝ որպէս վատ ու չար մարդեր: Ոմանք մեղաւոր էին որպէս մարդասպաններ (34. 24-30) եւ ստրուկներ (37. 17-28): Լիայի որդին՝ Յուդան, Աստուածաշունչի ամենէն տգեղ պատմութիւններէն մէկուն չարագործն է (զլ. 38):

Որքա՛ն ճիշդ է՝ Աստուծոյ համար, որ Մեսիան բերէ Լիայի չարաւիղէն, անոնց մէջ ըլլալով՝ Յուդան: Ամենադժուար պարագաներուն մէջ եւ ամենէն անսպասելի մարդոց միջոցով՝ Աստուած Իր փրկագործութիւնը կ'ընէ:

Տանան նոյնպէս սորվեցաւ այդ մէկը: Երբ ան դիմագրաւեց իր ծնողական բոլոր դժուարութիւնները, ան երբէ՛ք պատասխան չգտաւ «բացի շարունակելու եւ ազօթելու»: Իսկ այն երեխան՝ որ սեղմեց անոր բոլոր կոճակները, այժմ հասակ առած է եւ կը սիրէ ու կը յարգէ իր մայրը: Ե՛տ նայելով, Տանան կ'ըսէ. «Հաւանաբար ան ինծի զրկուած էր՝ ինծի սորվեցնելու բան մը՝ իմ մասիս եւ Աստուծոյ մասին»:

Աղօթք - Երկնաւոր Հայր, կը խնդրե՛մ՝ օգնէ ինծի վստահելու Զեզի՝ ամէն բանի մէջ: Ամէն:

Յուսախաբութիւններ եւ անատակութեան զգացումներ պիտի ունենանք՝ անկասկած: Սակայն կարելի է՝ որ անոնց միջոցով մենք կը սորվինք Աստուծոյ մասին:

Ամսի՛տ, այս գիշեր անձո՞ր պիտի պահանջուի քեզմէ: [Ղուկ. 12. 20]

Ո՛Չ ՄԷԿ ԱՓՈՍԱՆՔ

Ո՛՛՛ մէկ յիշատակութիւն չկար այն իրերուն մասին, որոնց ետեւէն երթալու համար մենք յաճախ մեր կեանքը կ'անցընենք: Այդ՝ այն է, ինչ որ յայտնաբերեց սահմանափակ ժամանակով կեանք ունեցողներու հոգատար հիւանդապահուհի Պրոննի Ուէր (Bronnie Ware), երբ ան նստեցաւ մահացողի մը հետ: Ան միտումնաւոր՝ հարցուց անոր. «Դո՛ւն՝ այլ կերպով պիտի ընէի՞ր որեւէ բան, եթէ կարենայիր այդ մէկը դարձեալ ընել»: Ի՛ յայտ եկան ընդհանուր նիւթեր ու ան կազմեց մահացողներու գլխաւոր հինգ ամփոսանքներու ցուցակ մը.

1. Պիտի ցանկայի, քաջութիւն՝ ապրելու ես ինձի հաւատարիմ կեանքով:
2. Պիտի ցանկայի, այդքան շատ չաշխատիլ:
3. Պիտի ցանկայի, քաջութիւնը ունենալ արտայայտելու իմ գզացուներս:
4. Պիտի ցանկայի, կապի մէջ մնալ ընկերներուս հետ:
5. Պիտի ցանկայի, թոյլ տալ ինձի՝ աւելի երջանիկ ըլլալու:

Ուէրի ցուցակը կը յիշեցնէ Տէր Յիսուսի պատմած առակը Ղուկաս 12-ին մէջ: Հարուստ մարդ մը կը որոշէ՝ աւելի մեծ ամբարներ կառուցել՝ իր մեծ բերքը պահելու համար, որմէ ետք՝ ան ինքն իրեն կ'ըսէ, որ հանգստեան կոչուի այնպիսի ձեւով, որ նստի ու հանգստանայ եւ ապրի մինչեւ իր մահը (Հմ. 18-19): Բայց այդ պահուն, Աստուած կը պահանջէ իր կեանքը՝ բաւական կո՛չտ խօսքերով: «Անմի՛տ». որու կը յաջորդէ սարսափելի հարցում մը ըստ էութեան. «Ուստի որո՞ւ պիտի ըլլան այդ պատրաստած բաներդ» (Հմ. 20):

Հնարաւոր է մեռնիլ առանց որեւէ ամփոսանքի: Դժուար է որոշապէ՛ս իմանալ այդ: Բայց՝ ա՛յն, ինչ որ մենք գիտենք, յստակ ձեւով արտայայտուած է Աստուածաշունչին մէջ - մեզի համար բաներ կուտակելը՝ փակուղի է: Իսկական հարստութիւնը՝ կուգայ Աստուծոյ մէջ ներդրուած կեանքէն:

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, երբ ժամանակը գա՛յ, կ'ուզեմ հնարաւոր չափով քի՛չ ամփոսալ: Կը խնդրե՛մ, օգնէ ինձի ապրելու իմաստուն՝ կառուցելով քեզմով հարուստ կեանք մը: Ամէն:
Եթէ այսօ՛ր մեզմե՛ մեր կեանքը պահանջուի, արդեօ՞ք իմաստունը՝ թե՛ յիմարը՝ պիտի կիրարկուի մեզի համար:

Օգևե՛ անոր (աղքատին) գաղթականի եւ հիւրի պէս, որպէսզի քովդ ողջ մնայ: [Դեւ. 25. 35]

ՕԳՆՈՂ ՁԵՌՔ ՄԸ

1900-ականներու սկիզբը, օրէնքները կը սահմանափակէին Միացեալ Նահանգներու սեւամորթներուն եւ ներգաղթողներուն՝ կալուած վարձելու կամ գնելու Գորօնատօ, Գալիֆօրնիայի (Coronado, California) մէջ: Կաս Թամսըն (Gus Thomson) անուկով սեւամորթ մարդ մը (որ ծնած էր ստրկութեան մէջ) աւելի կանուխ գնած էր հողաչերտ մը եւ շինած էր գիշերօթիկ տուն մը Գորօնատոյի մէջ, նախ քան խտրական օրէնքները ընդունուած էին: 1939-ին, Կաս՝ վարձու տուաւ կալուածը Ասիացի ընտանիքի մը եւ ի վերջոյ հողը վաճառեց անոնց: Գրեթէ գոյքը վաճառելէ ութսուհինգ տարիներ ետք, Ասիական ընտանիքի որոշ անդամներ վաճառքէն իրենց ստացած հասոյթը նուիրեցին՝ Սեւ գոլէճի ուսանողներուն օգնելու համար: Անոնք նաեւ աշխատեցան Սէն Տիէկոյի Պետական Համալսարանին (San Diego State University) մէջ, Կասի եւ անոր կնոջ՝ Էմմայի (Emma) անուկով՝ անուանելու կեդրոնը:

Դեւտացւոց գիրքը՝ նոյնպէս կը խօսի այն մասին, թէ ի՞նչ կը նշանակէ լաւ վերաբերմունք ցոյց տալ ուրիշներու: Աստուած հրահանգեց Իր ժողովուրդին. «Օգնէ՛ անոր (աղքատին) գաղթականի եւ հիւրի պէս, որպէսզի քովդ ողջ մնայ» (25. 35): Ան յանձնարարեց ժողովուրդին լաւ եւ արդար վերաբերիլ իրարու, յատկապէս կարիք ունեցողներուն: Իրեն հանդէպ ակնածալից «վախէն» (Հմ. 36), անոնք պէտք էր օգնէին անոնց, որոնք ինկած էին դժուար ժամանակներու մէջ եւ չէին կրնար հոգ տանիլ իրենց համար: Անոնք պէտք է վերաբերուէին անոնց հետ՝ ճիշդ այնպէս, ինչպէս կը վարուէին «գաղթականին եւ հիւրին հետ» (Հմ. 35) հիւրասիրութեամբ եւ սիրով:

Կաս Թամսըն եւ իր կնոջ նման, եկէ՛ք տարածենք Աստուծոյ կարեկցութիւնը՝ անոնց հանդէպ, որոնք կարիքը ունին, քանի որ Ան կ'օգնէ մեզի բացայայտելու Իր սէրը անոնց հանդէպ:

Աղօթք - Հոգատար Հայր, կը խնդրեմ, բա՛ց աչքերս, որպէսզի կարենամ տեսնել, թէ ինչպէ՛ս օգնել ուրիշներուն: Ամէն:
Ո՛վ օգնութեան կարիք ունի ձեր շուրջիններուն մէջ: Ինչպէ՛ս կրնաս հոգատարութիւն ցուցաբերել անոնց հանդէպ:

Եզեկիա Լամակը պատգամաւորներուն ձեռքէն առաւ ... ու Տէրոջը առջեւ բացաւ: [Գ. Թագ. 19. 14]

ԲԵՐԷՔ ԶԱՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Պրայըն՝ (*Brian*) եղած էր սիրտի մասնագէտին մօտ՝ մէկ ժամէն աւելի: Անոր ընկերը մնաց սպասման սրահը աղօթելով իր հիւանդ ընկերոջ համար՝ իմաստութիւն եւ բժշկութիւն խնդրելով: Երբ Պրայըն վերջապէ՛ս վերադարձաւ սպասման սրահը, ան ցոյց տուաւ անոր իր ստացած թուղթերու ծրարը: Երբ տարածեց զանոնք սեղանին վրայ, քննարկեց իրեն սպառնացող վիճակը բուժելու համար՝ դիտարկուող բոլոր տարբերակները: Երկուքն ալ քննարկեցին աղօթելու եւ Աստուծմէ իմաստութիւն խնդրելու անհրաժեշտութիւնը՝ յետագայ քայլերուն համար: Եւ յետոյ Պրայըն ըսաւ. «Ի՛նչ որ ալ ըլլայ, ես Աստուծոյ ձեռքերուն մէջն եմ»:

Եզեկիա Թագաւորը «Տէրոջը առջեւ տարածեց (նամակ մը)» (Բ. Թագ. 19. 14): Նամակին խօսքերը կը վերաբերէր՝ ո՛չ թէ սպառնացող առողջական վիճակին, այլ հզօր թշնամիի՝ Ասորեստանի սպառնալիքին, որ գրաւած էր Յուդայի բոլոր ամրացուած քաղաքները եւ կը պատրաստուէին յարձակիլ Երուսաղէմի՝ Յուդայի մայրաքաղաքին վրայ: Եզեկիան աղօթեց. «Երկրի բոլոր թագաւորութիւններուն Աստուածը դուն ես: ... Ուստի հիմա կ'աղերսե՛մ ո՛վ Տէր, մեր Աստուածը՝ ազատե՛ մեզ» (Հմ. 15, 19): Շուտով Եսայի մարգարէն լուր դրկեց Եզեկիային՝ ըսելով անոր. «Տէրը ... կ'ըսէ. ես լսեցի քու աղօթքդ (Հմ. 20): Եւ «այդ գիշեր Աստուած ոչնչացուց Ասորեստանցիներուն բանակը (Հմ. 35):

Ի՛նչ բանի ալ հանդիպինք այսօր, բերե՛նք Աստուծոյ առջեւ: Մինչ մենք «կը գիտցնենք մեր խնդրանքը Աստուծոյ» (Փիլ. 4.6), Ան կը լսէ մեզ եւ մեզի հետ է: Մենք կրնանք հանգչիլ Անոր ձեռքերուն մէջ՝ զգալով Անոր իմաստութիւնը, սէրը եւ յոյսը:

Աղօթք - Սիրող Աստուած, շնորհակալ եմ Զեզի, որ կը լսես զիս՝ երբ կը բերեմ իմ մտահոգութիւններս Զեզի: Ամէն:
Աստուծոյ առջեւ տա՛ր քու բոլոր մտահոգութիւններդ ու պիտի հանգչիս Անոր զօրութեան եւ ներկայութեան մէջ:

Ուրեմն մեծ հաճոյքով պիտի պարծենամ առաւելապէս իմ տկարութիւններովս, որպէսզի Քրիստոսի զօրութիւնը հանգչի իմ վրաս: [Բ. Կորնթ. 12. 9]

ԱՅՄՊԻՍԻ ՓԱՌԱԲՈՐ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Միջնադարեան աստուածաբան՝ Թամարս Էքուայնըս (*Thomas Aquinas*) շատ տառապեցաւ ինքզինք նուիրելու՝ Աստուած փնտռելու կեանք մը ունենալու համար: Իր ընտանիքը՝ բանտարկեց զինք մէկ տարի, փորձելով զինք ետ պահել միանալու Տօմինիքեան Կարգի (*Dominician*)՝ վանական խումբին, որ նուիրուած էր պարզութեան, ուսումնասիրութեան եւ քարոզչութեան: Իր ամբողջ կեանքը ուսումնասիրելով Աստուածաշունչը եւ ստեղծագործութիւնը եւ գրելով մօտաւորապէս հարիւր հատոր, Էքուայնըս այնպիսի բուռն փորձառութիւն ունեցաւ Աստուծոյ մասին, որ գրեց. «Ես՝ այլեւս չեմ կրնար գրել, որովհետեւ Աստուած ինծի տուած է այնպիսի փառաւոր գիտութիւն մը, որ այն ամենը՝ ինչ որ կը պարունակուի իմ ստեղծագործութիւններուս մէջ, յարդի պէս է»: Ան մեռաւ այս խօսքը գրելէն միայն երեք ամիսներ յետոյ:

Պօղոս առաքեալ ալ՝ նկարագրեց Աստուծմէ ստացած այնքա՛ն հիանալի փորձառութիւն մը, որ կարելի չէր սովորական բառերով արտայայտել, երբ ան «յափշտակուեցաւ զբախտ ու լսեց անճառելի խօսքեր, որոնց մասին մարդու մը համար արտօնուած չէ խօսիլ» (Բ. Կորնթ. 12. 4): Պօղոս կ'ըսէ՝ «որպէսզի չափէն աւելի չպանծամ յայտնութիւններուն գերազանցութեամբ», իրեն տրուած էր անձանօթ «մարմինի փուշ մը» (Հմ. 7), որպէսզի զինք խոնարհ պահէ եւ ապաւինի Աստուծոյ: Իրեն ըսուած էր. «Իմ շնորհքս կը բաւէ քեզի, որովհետեւ իմ զօրութիւնս կ'իրագործուի տկարութեան մէջ»: (Հմ. 9):

Որքա՛ն շատ հասկնանք Աստուծոյ մասին, այնքան աւելի կը հասկնանք, թէ որքա՛ն անհնար է բառերով պատկերացնել թէ ո՞վ է Ինք: Սակայն մեր տկարութիւններով եւ չգիտնալով մեր ըսելիքը, Քրիստոսի շնորհքն ու գեղեցկութիւնը՝ յստակ կերպով կը փայլի:

Աղօթք - Աստուած, շնորհակալ եմ քեզի՝ Զու գեղեցկութեանդ համար եւ է ինչպէ՛ս ան կը փոխէ զիս: Կը խնդրեմ՝ օգնէ ինծի խոնարհաբար հանգստանելու Զու մէջդ: Ամէն:

Թէեւ չգտնենք բառեր արտայայտելու Աստուծոյ հետ մեր ունեցած փորձառութիւնները, գիտենք թէ ինչպէ՛ս անոնք փոխած են մեզ:

Աստուծոյ Որդիին՝ Յիսուս Զրիստոսի աւետարանին սկիզբը:
[Մարկ. 1. 1]

ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՆ

Վերջերս եղբայրս՝ Սքոթ (Scott), ձեռք բերաւ մեր հօր՝ զինուորական ծառայութեան գրառումները՝ Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ժամանակ: Երբ կ'ուսումնասիրէի էջերը, ո՛չ մէկ ապշեցուցիչ կամ ցնցիչ բան կար՝ ո՛չ մէկ բան իր մասին, թէ ո՞վ էր մեր Հայրը: Կային ուղղակի փաստեր: Տուեալներ: Հետաքրքրական էր կարդալը, բայց ի վերջոյ՝ գոհացուցիչ չէ՛ր, որովհետեւ չի զգացի, որ նոր բան իմացայ Հայրիկին մասին:

Բարեբախտաբար, Յիսուսի կեանքին եւ աշխատանքին մասին արձանագրութիւններ տալով, չորս աւետարանները շատ աւելի են, քան պարզապէս տուեալները: Աստուծոյ նկարագրութիւններ են, որոնք կը բացայայտեն, թէ ո՞վ էր Յիսուս այս երկրի վրայ իր ժամանակներուն մէջ, ինչպէս նաեւ ա՛յն, ինչ որ Ան ըրաւ եւ ըսաւ: Մարկոսի աւետարանին մէջ՝ այդ գրառումը՝ նպատակ ունէր ապացուցանելու՝ Մարկոսի ճառին յայտարարութիւնը. «Աստուծոյ Որդիին՝ Յիսուս Քրիստոսի աւետարանին սկիզբը» (1. 1): Անմիջապէս՝ Մարկոս կը պատմէ մեզի, թէ ինչպէ՛ս Յովհաննէս Մկրտիչ վկայեց այս Մեսիային մասին: Յովհաննէս ըսաւ. «Ինձմէ հզօրը կու գայ իմ ետեւէս: Ես արժանի չեմ ծռելու եւ անոր կօշիկներուն կապերը քակելու» (Հմ. 7): Մարկոսի խօսքերէն՝ պարզ կը դառնայ, որ Յիսուս՝ Աստուծոյ Որդին է, ինչպէս Յովհաննէս աշակերտը կ'աւելցնէ Յիսուսի կեանքին մասին՝ իր իսկ պատմածին մէջ. «Բայց աստուծոյ գրուեցան, որպէսզի հաւատաք թէ Յիսուս՝ Քրիստոսն է, Աստուծոյ Որդին, եւ հաւատալով կեանք ունենաք՝ անոր անունով» (Յովհ. 20. 31):

Յիսուսի կեանքի ապացոյցները շատ են: Այս հարցումները կը մնան. Ի՞նչ կը նշանակէ քեզի: Ինչպէ՞ս Ան փոխած է քու կեանքդ:

Աղօթք - Հայր, շնորհակալ եմ՝ Զու Որդիիդ կեանքին յստակ արձանագրութեան համար: Ամէն:
Ի՞նչ կը խորհիս Յիսուսի կեանքին, մահուան եւ յարութեան ապացոյցներուն մասին: Ինչպէ՞ս կրնաս ուրե մեկուն պատմել քու հաւատքիդ մասին:

Չա՛յն ճանչցիր քու բոլոր ճամբաներուդ մէջ, եւ ինք պիտի շտկէ քու ուղիներդ: [Առ. 3. 6]

ԱՍՏՈՒԾՈՅ ԴԵՏԵԻԼ

Քանի մը տարիներ առաջ Փարիզ այցելութեանս ընթացքին՝ ազատ օրս որոշ ժամանակ մը ունէի մինակ շրջելու յայտնի քաղաքին մէջ, նախ քան ընթրելու ընկերոջս հետ՝ Էյֆէլ (Eiffel) Աշտարակին մօտ: Ամէն բան լաւ էր, մինչեւ որ բլիճային հեռախօսիս պաթարիան (battery) մեռաւ: Քարտէս չունէի, ուստի վստահ չէի՝ թէ ուր կ'երթայի, բայց խուճապի չի՛ մատնուեցայ: Պարզապէս շարունակեցի քալել Սէյն (Seine) Գետի երկայնքով եւ հայեացքս յառեցի Էյֆէլ Աշտարակին վրայ: Ծրագիրս գործեց այնքան ժամանակ, մինչեւ մօտեցայ այն տեսարժան վայրին, ուր կերպով մը աշտարակը անհետացաւ շրջակայ շէնքերուն ետեւը:

Չարմացա՛յ, որ այդքան մեծ կառոյց մը՝ կրնար թաքնուած ըլլալ պարզ տեսադաշտին մէջ: Վերջապէս հասկցայ, որ օգնութեան պէտք ունիմ, ուստի ուղղութիւն խնդրեցի եւ գտայ ընկերոջս:

Կեանքը կրնայ այնքա՛ն աննախատեսելի ըլլալ: Երբ մեր կեանքին մէջ դիմազբաւենք խոչընդոտներ ու մարտահրաւէրներ, մենք կրնանք խնդրել Աստուծոյ օգնութիւնն ու ուղղութիւնը: Իրեն խնդրելը՝ կ'օգնէ մեզի չմոլորիլ մեր ճամբորդութեան ընթացքին կամ փորձուիլ շրջանցելու կամ հրաժարելու: Յատկապէս, երբ կեանքը դժուար կամ շփոթեցնող կը թուի ըլլալ, մենք կրնանք դիմել Աստուծոյ՝ առաջնորդութեան համար:

Առակաց 3. 5-6-ին մէջ՝ Սողոմոն կը քաջալերէ իր ընթերցողներուն ըսելով անոնց. «Տէրո՛ջ վստահէ ամբողջ սիրտովդ, ու քու խելքիդ մի՛ ապաւինիր. զա՛յն ճանչցիր քու բոլոր ճամբաներուդ մէջ, եւ ինք պիտի շտկէ քու ուղիներդ»:

Երբ մենք կը փնտռենք Աստուծոյ իմաստութիւնը աղօթելու եւ Աստուածաշունչ կարդալու միջոցով, Ան կ'առաջնորդէ մեզ: Եկէ՛ք շարունակենք վստահիլ Անոր եւ հետեւիլ Իր առաջնորդութեան:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ քեզի՝ զիս առաջնորդելուդ եւ ուղղելուդ համար: Ամէն:

Երբեմն կրնայ դժուար թուիլ Աստուծոյ հետեւիլը, սակայն կարելի է աւելի լաւ կապուած ըլլալ Իրեն:

Աստուած ըսաւ. «Երկիրը դալար արտադրէ, նաեւ սերմ կրող բոյս, ու իր տեսակին համեմատ պտուղ տուող պտղաբեր ծառ, որ իր մէջ իր սերմը ունենայ երկրի վրայ: [Ծն. 1. 11]

ԱՍՏՈՒԾՈՅ ՇՆՈՐՀԱԼԻ ԱՌԱՏՈՒԹԻՒՆԸ

Յիսուսնմէկ տարեկանին, Յինէս Մէքսիա (*Ynes Mexia*) (1870-1938), որոշեց սորվիլ բուսաբանութիւն՝ ընդունուելով բարձրագոյն ուսման գոլէճի առաջին դասարանը: Իր տասն երեք տարիներու աշխատանքի ընթացքին, ան ճամբորդեց Կեղրոնական եւ Հարաւային Ամերիկայի շրջանները՝ յայտնաբերելով հինգ հարիւր նոր տեսակի բոյսեր: Ան մինակ չէ՝ իր որոնումներուն մէջ: Գիտնականները՝ ամէն տարի կը յայտնաբերեն՝ մօտ երկու հազար նոր բոյսեր:

Ծննդոց 1-ին մէջ Աստուած առաւ անձեւ, դատարկ եւ մութ երկիր մը (Հմ. 2) եւ ստեղծեց առատութեամբ լի տեղ մը: Երրորդ օրը՝ Աստուած բաժնեց ջուրերը՝ ստեղծելու ցամաքը եւ սկսաւ երկիրը հիւրընկալ դարձնել մարդոց համար՝ որ «դալար արտադրէ, նաեւ սերմ կրող բոյս, ու իր տեսակին համեմատ պտուղ տուող պտղաբեր ծառ» (Հմ. 11): Ասոնք սերմնատու բոյսեր եւ պտղատու ծառեր էին, որոնցմէ մենք կրնանք ուտել: Աստուած միայն մէկ տեսակի պտղատու ծառ չի՝ ստեղծեց, ա՛յլ շատ:

Աստուած ո՛չ միայն Արարիչն է (Հմ. 1). Ան նաեւ ստեղծագործն է: Ան հաճոյքով կը պատրաստէ տարբեր տեսակի բոյսեր եւ կենդանիներ եւ աստղեր: Եթէ Աստուած ուզէր միայն մեզի ուտելիք տալ, Ան կրնար ստեղծել՝ միայն մէկ տեսակի սերմացու բոյս: Բայց Աստուած շուայլ է եւ երբէ՛ք իր գործերը կէս չափով չըններ:

Աստուծոյ առատութիւնը չի սահմանափակուիր իր ստեղծագործութեամբ: Ան նաեւ առատաձեռն է՝ իր շնորհքով: Ինչպէս Պօղոս ըսաւ. «Մեր Տէրով շնորհքը յորդեցաւ ինծի հանդէպ՝ հաւատքով ու սիրով, որ Քրիստոս Յիսուսով է» (Ա. Տիմ. 1. 14): Ինչպէս Աստուծոյ արարչագործութեան պարագային, Անոր շնորհքը աւելի է՝ քան մեր կարիքը, եւ առաջարկուած է մեզ ի մտի ունենալով:

Աղօթք - Հայր, շնորհակալութիւն՝ գեղեցիկ աշխարհ մը ստեղծելուդ համար: Ամէն:

Ստեղծագործութիւնը Աստուծոյ բարի եւ առատ շնորհքի ցուցադրութիւնն է. ուստի՝ մեզի կը մնայ՝ կիսել զայն ուրիշներու հետ:



Եթե իյևան, մեկը ընկերակիցը կը վերցնէ: [Ժո. 4. 10]

ԱԲԵԼԻ ԼԱԲ՝ ՄԻԱՍԻՆ

Մակիի տասը տարիներու թմրանիւթի գործածութիւնը՝ պահեց զինք բանտին մէջ եւ բանտէն դուրս: Առանց կեանքի փոփոխութեան, ան շուտով պիտի վերադառնար բանտ: Ապա, ան հանդիպեցաւ Հանսին (Hans)՝ նախապէս թմրամոլ մը, որ գրեթէ կորսնցուցած էր իր ձեռքը, երբ երակը պատրուեցաւ՝ իր թմրանիւթ չարաշահելուն պատճառով: Հանսը սաւ. «Ա՛յդ առաջին անգամն էր, որ ես աղաղկեցի Աստուծոյ»: Աստուծոյ պատասխանը պատրաստեց զինք ըլլալու օգնական մասնագէտ մը՝ կազմակերպութեան մը մէջ, որ կը համակարգէր բանտարկուածներու ապաքինում:

«Քարէ Ապուր» կոչուած ծրագիրը՝ կ'օգնէ Ամերիկայի բանտի մը, որ աջակցութիւն կը հայթայթէ նախապէս բանտարկուած մարդոց՝ վերադառնալու իրենց համայնքներուն: Այս ծրագիրին միջոցով՝ Մակին փոխադրուեցաւ թմրանիւթէ հրաժարելու տուն մը եւ մնաց հրաժարուած թմրանիւթի գործածութենէ: Հանս՝ հիմա կ'օգնէ իրեն եւ ուրիշներու՝ աշխատանքի կարելիութիւն ստեղծելով, կրթութիւն ստանալու տարբերակներ, բուժում եւ ընտանեկան օգնութեան աղբիւրներու համակարգուած մօտեցում:

Աստուածաշունչը կը նկարագրէ իմաստուն գործընկերութեան ուժը: «Երկուքը մէկէն լաւ է, որովհետեւ իրենց աշխատանքը լաւ վարձք ունի, քանի որ եթէ իյնան, մէկը ընկերակիցը կը վերցնէ» (Ժող. 4. 9-10): Բայց «վա՛յ ինկող մէկուն՝ որ զինք վերցնող երկրորդ մը չունի» (Հմ. 10):

Ինչպէ՛ս «Քարէ Ապուր» ժողովրդական հեքիաթը, Աստուածաշունչը կը հաստատէ, որ մենք միասին աւելի ուժեղ եւ աւելի լաւ ենք (Հմ. 12): Աստուծոյ ծրագիրն է, որ մենք ապրինք համայնքին մէջ՝ օգնելով ուրիշներուն եւ ի պատասխան՝ օգնութիւն ստանալով: Ա՛յդ հեքիաթ չէ՛. ա՛յդ ճշմարտութիւն է կեանքի համար:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի, որ միանամ ուրիշներուն՝ լաւ ձեւով օգնելու համար: Ամէն:

Աւելի լաւ ծառայելու համար, կարելի է մեր ունեցած կարելիութիւնները միաւորել եւ տա՛լ՝ այն ինչ որ պետք է «Քարէ Ապուր» պատրաստելու համար:

Մի՛ վախևար, քանի որ ես քեզի հետ եմ: [Ես. 41. 10]

ՎՇՏԱՅԱՐ ԱՍՏՈՒԱԾ

2023 Փետրուարին՝ Թուրքիոյ մէջ տեղի ունեցած աւերիչ երկրաշարժէն յետոյ, լուրերու ցանցին մէջ՝ յայտնուեցաւ սարսափելի լուսանկար մը. հայր մը նստած էր աւերակներու մէջ եւ բռնած էր փլատակներուն տակէն երկարած ձեռք մը իր դուստրին ձեռքը: Մենք կը տեսնենք նկարին մէջ՝ անկողինին ծայրը, ուր քնացած էր անոր դուստրը ու անոր անկենդան մատները: Բռնած անոր ձեռքը՝ հօրը դէմքը մռայլ է ու վիշտը խոր:

Այս հօր մռայլ դէմքին մէջ՝ ես կը տեսնեմ մեր Երկնաւոր Հօր նմանութիւնը: Ծննդոցը մեզի կ'ըսէ, որ Աստուած տրտմեցաւ իր ստեղծագործութեան մէջ մեղքին կործանարար գործին համար: «Տէրը երկիրին վրայ մարդը ստեղծելուն համար զղջաց ու սիրտին մէջ վշտացաւ» (6. 6): Եսայի խօսելով ապագայ Մեսիային մասին, կ'ըսէ. «Անիկա կոտտանքի մարդ եղաւ եւ կսկիծներու տեղեակ» (53. 3): Աստուած կը տրտմի մեզի համար եւ մեզի հետ. կը նստի մեր կեանքի փլատակներուն քով եւ մեզի ձեռք կ'երկարէ. «Արդարեւ ես եմ Տէրը՝ քու Աստուածդ, որ քու աջ ձեռքէդ կը բռնեմ» (41. 13):

Ինչպիսի աւերածութիւն ալ դուն կը դիմագրաւես. ողբերգական իրավիճակ, սիրելիի կորուստ կամ գուցէ նո՛յնիսկ քու գործած մեղքիդ հետեւանքը, իմացի՛ր, որ Աստուած կը վշտանայ քեզի հետ: Ի՛նչ երկրաշարժ ալ որ ցնցած է քու կեանքդ, տե՛ս թէ Աստուած իր ձեռքը երկարած է քեզի: Ի՛նչ ալ որ ըլլայ քու ներկայի վիշտդ, լսէ՛ սիրոյ Աստուծոյ, որ կ'ըսէ քեզի. «Մի՛ վախնար, ես քեզի պիտի օգնեմ» (Հմ. 13):

Աղօթք - Դայր Աստուած, որ կը վշտանա՛ս ինծի համար, շնորհակալ եմ՝ ձեռքս բռնող քու «արդար աջիդ» համար: Ամէն: **Երբ մեր կեանքը՝ ներկայ թէ անցեալ՝ կը ցնցուի մինչեւ հիմքը, յիշենք թէ Աստուած կը վշտանայ մեզի համար:**



Գաղթականը մի՛ տանջեր, որովհետև դուք գիտեք գաղթականին սիրտին վիճակը: [Ել. 23. 9]

ՍԻՐԵԼ ՕՏԱՐԱԿԱՆԸ

Ընկերոջ մը կիներ՝ վարպետ դերձակուհի մը, նախ քան երկար հիւանդութենէ մահանալը սիրալիր ծրագիր մը մշակեց: Ան իր ամբողջ կարի սարգաւորումները նուիրեց մեր քաղաքի կարի ընկերութեան՝ տրամադրելով կարի մեքենաներ, կտաւ կտրելու սեղան եւ շատ աւելին՝ նոր ժամանած գաղթականներուն ուսուցանող դասարաններուն համար: Իր ամուսինը ըսաւ. «Ես միայն քսան ութը տուփ կտաւներ հաշուեցի: Վեց կիներ եկան՝ ամէն ինչ վերցնելու համար: Անոնց ուսանողները աշխատասէր են՝ հմտութիւն սորվելու ցանկութեամբ»:

Ուրիշներ նման նորեկներուն կը նկարագրեն՝ ո՛չ այնքան հաճոյախօսութեամբ: Գաղթականներու վիճակը դարձած էր պառակտող խնդիր:

Մովսէս, սակայն, արտայայտեց Աստուծոյ տեսակէտը. «Գաղթականը մի՛ տանջեր, որովհետեւ դուք գիտէք գաղթականին սիրտին վիճակը» (Ել. 23. 9): Ան նաեւ կիսուեցաւ օտարականներու վերաբերեալ Աստուծոյ հրամանները: «Երբ ձեր երկրին հունձքը հնձէք, ... այգիդ ճռաքաղ մի՛ ըներ, այսինքն այգիիդ մէջ մնացած ողկոյզները մի՛ քաղեր. զանոնք թո՛ղ դժբախտին եւ գաղթականին. ես եմ Տէրը՝ ձեր Աստուածը» (Ղեւ. 19. 9-10):

Աստուած նաեւ յայտարարեց. «Եթէ գաղթական մը ձեր քով պանթխտանայ՝ մի՛ կեղեքէք զայն: Ձեր քով պանդխտացող գաղթականը՝ բնիկին պէս թող ըլլայ ձեզի, եւ սիրէ՛ զայն քեզի պէս, որովհետեւ դուք ալ Եգիպտոսի երկրին մէջ պանդուխտ էիք. ես եմ Տէրը՝ ձեր Աստուածը» (Հս. 33-34):

Աստուած սահմանեց չափանիշը: Թո՛ղ Ան օրհնէ մեր սիրտերը՝ սէր ցուցաբերելու մեր մէջ գտնուող օտարականներուն հանդէպ:

Աղօթք - Սիրելի Հայր, կը խնդրե՛մ՝ տո՛ւր ինձի սիրտ, որ կ'ողջունէ ուրիշները: Ամէն:

Տարբեր ազգերէ եւ մշակոյթներէ մարդիկ կրնան ըլլալ մեր եկեղեցիներուն մէջ եւ շուրջ, մեզի կը մնայ գտնել հնարաւորութիւններ օգնելու անոնց՝ հոգալով անոնց կարիքները:

Ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինձի համար, պիտի գտնէ զայն:
[Մատթ. 16. 25]

ՄԵՐ ԿԵԱՆՔԻՆ ԱՐԺԱՆԻ ՄԵՐ

Ուիլյըմ Թէմփըլ (*William Temple*)՝ տասն իններորդ դարու Անգլիացի եպիսկոպոս մը, անգամ մը Օքսֆորտի (*Oxford*) ուսանողներուն ուղղուած քարոզ մը աւարտեց՝ «Երբ Այն խաչին ես կը Նայիմ» հոգեւոր երգին բառերով: Բայց ան զգուշացուց երգին անլուրջ վերաբերելու մասին: Թէմփըլ ըսած է. «Եթէ դուք կը հաստատէք երգին բառերը՝ ամբողջ սիրտով, երգեցէ՛ք զայն որքա՛ն որ կրնաք բարձր ձայնով: Եթէ ընդհանրապէս դուք զանոնք չէք հաստատեր, լո՛ւր կեցէ՛ք: Եթէ դուք՝ նոյնիսկ քիչ մը կը հաստատէք եւ կ'ուզէք աւելի շատ հաստատել, երգեցէ՛ք շատ մեղմ»: Ամբողջ լռեց, քանի որ բոլորը ուշադրութիւն դարձուցին երգին խօսքերուն: Դանդաղ հազարաւոր ձայներ սկսան փսփսայով երգել, ծանրակշիռ արտաբերելով վերջին տողերը. «Ասանկ Տէրոջ անհուն սիրոյն, արժան է տալ իմ կեանքս ողջոյն»:

Օքսֆորտի այդ ուսանողները՝ հասկցան իրականութիւնը, որ Յիսուսի հաւատալն ու հետեւիլը՝ լուրջ ընտրութիւն է, քանի որ այդ կը նշանակէ՝ այո՛՛ ըսել արմատական սիրոյն, որ ամէն ինչ կը պահանջէ մեզմէ: Քրիստոսի հետեւիլը կը պահանջէ մեր ողջ կեանքը, մեր ողջ էութիւնը: Ա՛ն պարզ ըսաւ Իր աշակերտներուն. «Եթէ մէկը ուզէ գալ իմ ետեւէս, թող ուրանայ ինքզինք, վերցնէ իր խաչը, ու հետեւի ինձի» (Մատթ. 16. 24): Ո՛չ ոք՝ պէտք է այս ընտրութիւնը կատարէ անխոհեմաբար:

Տակաւին, Յիսուսի հետեւիլը՝ նաեւ մեր խոր ուրախութեան ճանապարհն է: Անոր հետ կեանքը՝ պիտի բացայայտէ այն կեանքը, որ մենք իսկապէս կը ցանկանք ունենալ: Այդ կը թուի ըլլալ մե՛ծ տարաբանութիւն: Սակայն՝ եթէ պատասխանենք Աստուծոյ սիրոյն, հաւատանք Քրիստոսի եւ հրաժարինք մեր եսասիրական, անհեռատես պահանջներէն, մենք կը գտնենք այն կեանքը, որ մեր հոգին կը փափաքի ունենալ (Հմ. 25):

Աղօթք - Սիրելի Աստուած, Քեզի հետեւիլը հեշտ է, բայց ես կ'ուզեմ տալ իմ կեանքս եւ իմ ամբողջ Եութիւնս: Ամէն:
Ի՛նչ պիտի արժէ մեզի Յիսուսի հաւատալ ու հետեւիլ եւ ի՛նչ կը շահինք:

Անոնք կը կորսուին, քակի որ չընդունեցին ճշմարտութեան սերը՝ որպէսզի փրկուին: [Բ. Թես. 2. 10]

ՍԻՐԵԼ ԵՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Ճէքը (Jack) կ'ատէ դպրոցը: Գրահաշիւի, քերականութեան եւ պարբերական համակարգի մասին դասախօսութիւնները կը ձանձրացնեն զինք: Բայց կը սիրէ տունը կառուցել: Իր հայրը կը տանի զինք աշխատանքի՝ ամուսն ընթացքին, եւ ձէք չի յագենար: Ան ընդամէնը տասն վեց տարեկան է, բայց գիտէ շաղախի, կաւարի (shingle) եւ պատը շրջանակելու մասին: Ի՞նչ է տարբերութիւնը դպրոցի եւ շինարարութեան միջեւ: Մէ'ր: Ձէք կը սիրէ մէկը եւ ո՛չ միւսը: Անոր սէրը կը սնուցանէ գիտելիք:

Որպէս Յիսուսի հաւատացողներ, մենք պէտք է «սիրենք ճշմարտութիւնը» (Բ. Թես. 2. 10): Պօղոս առաքեալ կ'ըսէ, որ սատանայական կերպարը կ'օգտագործէ «նշաններ եւ սուտ սքանչելիքներ» (Հմ. 9)՝ խաբելու անոնք, որոնք «կը կորսուին» (Հմ. 10): Ինչո՞ւ անոնք կը կորսուին: «Քանի որ չընդունեցին ճշմարտութեան սէրը՝ որպէսզի փրկուին» (Հմ. 10): Ըշմարտութիւնը չսիրելը, կը կուրցնէ անոնց աչքերը ու չեն տեսներ զայն: Անոնք կը խաբուին (Հմ. 11):

Ի՞նչ գիտենք մենք: Այդ կարեւոր հարցը կախուած է աւելի հիմնական հարցէն՝ ի՞նչ կը սիրենք մենք: Մեր կիրքերը կը հակեն մեր սիրտը եւ կ'ողզեն մեր միտքը: Մենք կը փայփայենք՝ ինչ որ կը սիրենք: Կը պաշտպանենք զայն եւ աւելի շատ կը փնտռենք: Եթէ մենք կը սիրենք ճշմարտութիւնն ու իմաստութիւնը, մենք կը փնտռենք ատոնք՝ որպէս թանկարժէք ոսկի (Առ. 3. 13-14, 4. 7-9): Ատոնք կը պաշտպանեն մեզ: «Մի՛ լքեր զայն, եւ ան քեզ պիտի պահէ. սիրէ՛ զայն, եւ ան քեզ պիտի պաշտպանէ» (4. 6):

Ի՞նչ է իսկական իմաստութիւնը: Յիսուս կ'ըսէ թէ Ինք է իմաստութիւնը: «Ես եմ ճամբան, ճշմարտութիւնն ու կեանքը» (Յովհ. 14. 6): Մեր ամենակարեւոր հարցը ա՛յն է, թէ որո՞ւ մենք կը սիրենք: Սիրէ՛ Յիսուսի եւ դուն կը սորվիս ճամբան:

Աղօթք - Սիրելի Հայր, կը խնդրեմ՝ լեցո՛ւր սիրտս սիրով Զեզի հանդէպ եւ այն՝ ինչ որ ճշմարիտ է: Ամէն:

Կարեւոր է սիրել ճշմարտութիւնը, որովհետեւ Յիսուս կ'ըսէ՝ թէ Ինք է ճշմարտութիւնը:

Հաւատքը՝ յուսացուած բաներուն խարիսխն է, եւ անտեսանելի բաներուն ապացոյցը: [Եբ. 11. 1]

ՀԱՒԱՏՔԻ ՈՍՏՈՒՄ ՄԸ

Մօտ եօթը հարիւր կայսր փէնկուէններ (*emperor penguin*) Արեւմտեան Անդարքդիքայի (*West Antarctica*) մէջ, ընդամէնը վեց ամսական, միասին սարսափած դիզուած էին սառուցեալ ջուրէն՝ յիսուն ոտնաչափ բարձրութեան վրայ գտնուող ժայռի մը եզրին: Ի վերջոյ, փէնկուէն մը առաջ թեքուեցաւ եւ «հաւատքի ոստում մը» առնելով, նետուեցաւ եւ սուզուեցաւ պաղ ջուրին մէջ եւ լողալով հեռացաւ: Շուտով բազմաթիւ փէնկուէններ ցատկեցին նոյնը ընելով:

Երիտասարդ փէնկուէնները սովորաբար՝ կը ցատկեն ընդամենը քանի մը ոտնաչափ ջուրի մէջ, իրենց առաջին լողալու փորձը ընելու համար: Այս խումբին մահ սպառնացող ոստումը՝ առաջինն էր, որ նկարուեցաւ տեսախցիկի վրայ:

Ոմանք կ'ըսեն, որ այդ փէնկուէններուն կոյր ոստումը դէպի անյայտութիւն, նման է անոր՝ ինչ որ կը պատահի, երբ մարդ կ'ապաւինի Յիսուսի՝ փրկութեան համար: Սակայն Անոր հանդէպ հաւատքը՝ ճիշդ հակառակն է: Եբրայեցիներու նամակին հեղինակը ըսաւ. «Հաւատքը՝ յուսացուած բաներուն խարիսխն է, եւ անտեսանելի բաներուն ապացոյցը» (Եբ. 11. 1):

Ենովքի հաւատքը՝ հաճելի թուաց Աստուծոյ. «Առանց հաւատքի անկարելի է հաճելի ըլլալ Աստուծոյ» (Հմ. 6): Աշխարհը մեծ ջրհեղեղին նման ոչինչ տեսած էր, եւ տակաւին՝ Նոյ «երկիւղածութեամբ կերտեց տապան մը՝ իր ընտանիքին փրկութեան համար» (Հմ. 7), որովհետեւ ան հաւատքով ապաւինեցաւ Աստուծոյ, «մեկնեցաւ առանց գիտնալու թէ ուր կ'երթար» (Հմ. 8):

Երբ առաջին անգամ կը վստահինք Յիսուսի, այդ հաւատքով է: Երբ կը շարունակենք հետեւիլ Անոր եւ մեր հաւատքը փորձութեան կ'ենթարկուի, կրնանք յիշել, թէ ինչպէս Աստուած եկաւ՝ այս մարդոց համար: Նոյնիսկ երբ մենք չենք գիտեր ինչ ո՞ւր եւ ինչպէ՞ս, կրնանք Աստուծոյ վստահիլ՝ արդիւնքին համար:

Այոթը - Տէր, շնորհակալ եմ Թեզի՝ հաւատարիմ ըլլալուդ համար: Ամէն: Մեր հաւատքը կը դնէ մեզ Աստուծոյ պաշտանութեան ձեռքին մէջ ու կը տեսնենք թէ Աստուած ինչպէ՞ս կը գործէ մեր կեանքին մէջ, իրեն հանդէպ մեր ունեցած հաւատքին պատճառով:



Խրատեցէ՛ք անկարգները, սփոփեցէ՛ք թուլասիրտները, ձեռնտո՛ւ եղէք տկարներուն, համբերատա՛ր եղէք բոլորին հանդէպ: [Ա. Թես. 5. 14]

ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԱԾ ՅՈՅՍ

Թիան (*Thia*) տարակուսած էր: Ինչո՞ւ է իր տասնութ տարեկան որդին այս օրերուն այդքան ժամանակ կ'անցնէր գրադարանին մէջ: Իր որդին, որ օթիսթիք (*autistic*) էր եւ հազուադէպ կը խօսէր ոեւէ մէկու հետ, սովորաբար դասերէն ետք՝ անմիջապէս տուն կը վերադառնար: Ի՞նչ փոխուեցաւ: Երբ ստիպեց՝ ան վերջապէս պատասխանեց. «Նաւինի (*Navin*) հետ կը սորվիմ»:

Պարզուեցաւ, թէ՛ Նաւինը՝ դասընկեր էր, որ նկատած էր որ Թիայի որդին՝ դժուարութիւն կ'ունենայ դասարանին մէջ եւ հրաւիրեց անոր՝ միասի՛ն սորվելու: Այս բողբոջող բարեկամութիւնը, առաջին տասն ութ տարիներու ընթացքին, մեծապէս քաջալերեց յուսահատ հօրը, որ իր յոյսը կտրած էր թէ իր որդին երբեւէ ընկեր մը կ'ունենայ:

Յոյսը վերականգնուեցաւ, քանի որ մարդ մը բաւականաչափ հոգ տարաւ միւսին կողքին գալու համար, որ օգնութեան կարիքը ունէր: Առաջին դարու եկեղեցիին մէջ Պօղոսի ծառայութեան ժամանակ ան գիտէր, որ այդ կը վերաբերէր նաեւ մեր փրկութեան յոյսին: Որպէսզի Յիսուսի հաւատացողները «արթուն եւ զգաստ ըլլան» (Ա. Թես. 5. 6), ապրելով Անոր վերադարձին յոյսով, անոնք պէտք էր օգնէին զիրար (հմ. 11), յատկապէս անոնց, որոնք կը պայքարէին:

Ահա՛ թէ ինչու, թէեւ այս հաւատացեալները սիրով կ'ապրէին, որը հաճելի էր Աստուծոյ (4. 1, 10), Պօղոս յիշեցուց անոնց ըսելով՝ «Խրատեցէ՛ք անկարգները, սփոփեցէ՛ք թուլասիրտները» (5. 14): Երբ մենք կը նկատենք Քրիստոսի հաւատացողներուն, որոնք վախկոտ, անհանգիստ կամ յուսահատած են, եւ մենք կու գանք անոնց կողքին՝ ըլլալ՝ լսելու, բարի խօսք մը ըսելու, թէ լուռ միասին նստելու համար. Աստուած կրնայ գործածել մեզ՝ անոնց ուժ եւ քաջութիւն տալու՝ կառչելու Յիսուսի վրայ իրենց յոյսին:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի որ հոգ տանիմ վատածներուն եւ թոյլերուն, որպէսզի անոնց յոյսը վերանորոգուի Յիսուսի հանդէպ: Ամէն:

Որո՞ւ կրնաս մօտենալ այս շաբաթ եւ ի՞նչ կրնաս ընել անոր՝ հոգատարութիւն եւ ուշադրութիւն դարձնելու համար:

Ո՛վ Աստուած, նո՛ր երգ պիտի երգեմ քեզի: [Սաղմ. 144. 9]

ՉԱՐԱՂԵՏ ՍՈՒՐԵՆ

Սապին Հաւրրտի (*Sabin Howard*) Զինուորի Մը ձամբորդութիւնը՝ ուշագրաւ քանդակը, կը շնչէ կենսունակութեամբ եւ տառապանքով: Երեսուն ութ պղինձէ քանդակները, առաջ թեքուած են՝ յիսուն ութ ոտնաչափ բարձրութեան վրայ գտնուող հաստատ հիմնաքարի մը վրայ, որ կը ներկայացնէ Առաջին Համաշխարհային Պատերազմի զինուորներու կեանքը: Աւարտած 2024-ին՝ համայնապատկերը կը սկսի ընտանիքին սրտագին հրաժեշտ տալով, մեզ կը տանի մեկնելու միամիտ ցնծութեան միջոցով եւ կը շարժի դէպի ճակատամարտի սարսափները: Վերջապէս, քանդակը մեզ կը վերադարձնէ տուն, ուր վեթերանին դուստրը՝ կը նայի անոր արդիականցած սաղաւարտին՝ միայն Երկրորդ Համաշխարհային Պատերազմը կանխատեսելու համար:

Հաւրրտ կը ձգտէր «գտնել այն կարքը, որ կ'անցնի մարդկութեան մէջէն, որ պէսզի մարդիկ կարենան հասնիլ մեծ բարձունքներու եւ կարենան սուզուիլ կենդանիի մակարդակին»: Սաղմոսերգու Դաւիթ լաւ գիտէր պատերազմի արիւնալի հետեւանքները: Գիտակցելով չարին դիմակալելու ողբերգական անհրաժեշտութիւնը՝ ան փառաբանեց Աստուծոյ, Ան որ «ձեռքերը կը վարժեցնէ պայքարի» (Սաղմ. 144. 1): Տակաւին՝ ան նոյնպէս յետ մղուեցաւ պատերազմէն՝ աղօթելով. «Ազատէ չարաղէտ սուրէն» (Հմ. 10-11): Դաւիթ առաջ նայեցաւ այն ժամանակին, երբ երիտասարդները պիտի չմեռնին պատերազմի մէջ, բայց որդիները «իրենց մանկութեան մէջ մեծցող տունկերու պէս ըլլան» ու աղջիկները՝ «պալատի շէնքին համար քանդակուած անկիւնաքարերու պէս ըլլան» (Հմ. 12): Ա՛յդ օրը «բռնութեամբ մտնել՝ կամ դուրս հանել չըլլայ, ո՛չ ալ աղաղակ մեր հրապարակներուն մէջ» (Հմ. 14):

Ետ նայելով, կը յիշենք անոնց, որոնք ինկած են պատերազմներու մէջ: Առաջ նայելով, Դաւիթի հետ կ'երգենք. «Ո՛վ Աստուած, նո՛ր երգ պիտի երգեմ քեզի» (Հմ. 9):

Աղօթք - Դայր, կը յիշենք պատերազմի մէջ զոհուածները: Մենք կը տենչանք Քու յարատեւ խաղաղութիւնը: Ամէն:

Պատերազմները կ'ազդեն մեր վրայ, սակայն խորհիւնք թէ ի՞նչ աշխատանք կրնանք ընել խաղաղութեան համար:

Ահա՛ ՍողոմոնԷ մեծ մեկը կայ հոս: [Ղուկ. 11. 31]

ՈՒՎՈՒ! (WOW!)

Ուա՛ու-ը մեր խումբի անդամներուն արտայայտութիւնն էր, որոնք շրջեցան Համագումարի կեդրոն մը, որ սուղ գինով ձեռք բեռած էին՝ անձի մը կողմէ, որ ցանկութիւնը ունէր թարմացնել եւ քաջալերել ծառայութեան մէջ եղող մարդոց: Մենք հիացանք երկյարկանի՝ մեծ չափով (queen size) մահճակալներուն եւ ննջասենեակներուն՝ աւելի մեծ չափի (king size) անկողիններով: Կատարելապէս կահաւորուած խոհանոցը եւ ճաշասրահը՝ նոյնպէս մեծ հաճոյք պատճառեց: Ու այն ժամանակ՝ երբ խորհեցանք, թէ տեսած ենք ամենը, աւելի շատ անակնկալներ կային, անոնց մէջ ըլլալով պասքէթպօլի լայնածաւալ դաշտը: Իւրաքանչիւր « Ուա՛ու » երաշխաւորուած էր:

Շաբաթի թագուհին՝ նման « Ուա՛ու » արտայայտութիւն ունեցաւ, երբ այցելեց Սողոմոն թագաւորին՝ Հին Երուսաղէմի մէջ: Երբ ան «տեսաւ Սողոմոնի ամբողջ իմաստութիւնը, անոր կառուցած տունը, ... խելքը գլուխէն գնաց» (Գ. Թագ. 10. 4-5): Դարեր ետք՝ Դաւիթի մէկ այլ թագաւորական որդին՝ Յիսուս, յայտնուեցաւ եւ զարմացուց մարդոց՝ ա՛յլ ձեւերով: Ամէն տեղ՝ ուր որ Ան գնաց, մարդիկ ճանչցան Անոր իմաստութեան եւ գործերուն հրաշքը (Ղուկ. 4. 36), եւ Ան յորդորեց անոնց տեսնել, որ «Սողոմոնէն մեծ մէկը» յայտնուած է ասպարէզին մէջ (11. 31): Յիսուսի ապշեցուցիչ ծառայութիւնը՝ մեղքի թողութիւն կը շնորհէ, որ ծախու առնուած է՝ մե՛ծ գինով, Իր մահով: Ան կ'ողջունէ իւրաքանչիւրին, որ կու գայ Իր մօտ: Եւ անոնք, որոնք իրեն կու գան, կը զգան գեղեցկութիւնն ու շնորհքը եւ կ'երգեն Անոր գովասանանքները այժմ եւ ամբողջ յաւիտենականութեան ընթացքին: Ուա՛ու!

Աղօթք - Սիրելի Յիսուս, կը խնդրե՛մ՝ շարունակէ բանալ իմ աչքերս ու սիրտս, որպէսզի տեսնեմ՝ թէ որքա՛ն հիանալի ես Դուս: Ամէն:

Ի՛նչ բանի համար Յիսուս կը ստիպէ քեզի՝ Ուա՛ու ըսելու: Եթէ դո՛ւն տակաւին չես զգացած Աստուծոյ բարութիւնը Յիսուսի միջոցով, ի՛նչը կը խանգարէ քեզ ճանչնալու զԻնք:



Ուրեմն մի՛ ամչնար մեր Տերոջ վկայութեան համար, ... հապա մասնակցե՛ անտարանիս չարչարանքներուն: [Բ. Տիմ. 1. 8]

ԳՆԱ՛ ԵՒ ՊԱՏՍԷ՛

Էլիյըթ (Eliot) կը սիրէր ուրիշներուն պատմել՝ Յիսուսի մասին: Հարաւ Ասիական երկիրի մը եկեղեցական առաջնորդներու համար, Բ. Տիմոթէոսի նամակէն ուսուցանած մէկ շաբթուան ընթացքին՝ յիշեցուց անոնց՝ Պօղոսի տուած հրամաններն մասին՝ Տիմոթէոսին: Ան յորդորեց անոնց չամչնալ բարի լուրէն, այլ փոխարէնը՝ ընդունիլ տառապանքն ու հալածանքը՝ յանուն աւետարանին, ինչպէ՛ս Պօղոս ըրաւ (1. 8-9): Քանի մը օր ետք՝ էլիյըթ իմացաւ, որ այդ երկրին մէջ արգելուած է աւետարանչութիւնը եւ Քրիստոնեայ դարձը: Անոնց բարօրութեան համար խոր մտահոգուած՝ աղօթեց այդ առաջնորդներուն համար, որ համբերեն եւ համարձակ ու հրատապութեամբ շարունակեն հռչակել աւետարանը:

Պօղոս կը հասկնար՝ բարի լուրը հռչակելուն բնորոշ վտանգը: Ան ժամանակ անցուց բանտին մէջ (Հմ. 8, 16) եւ շատ այլ կերպերով տառապած էր ուսուցումին պատճառով (Հմ. 11-12), անոնց մէջ ըլլալով՝ ծեծի ենթարկուիլ, մտրակուիլ եւ քարկոծուիլ (տե՛ս Բ. Կորնթ. 11. 23-29): Բայց ոչինչ չէր խանգարեր Պօղոսին ուրիշներուն պատմելու Յիսուսի մասին: Անոր փիլիսոփայութի՛ւնը: «Որովհետեւ ինծի համար՝ ապրիլը Քրիստոս է, ու մեռնիլը՝ շահ» (Փիլ. 1. 21): Ան ապրեցաւ, որպէսզի ուրիշներուն պատմէր Քրիստոսի մասին, բայց գիտէր, որ եթէ մեռնէր, Յիսուսի հետ կ'ըլլար: Պօղոս յիշեցուց Տիմոթէոսի, որ Սուրբ Հոգին կը զօրացնէ զինք (Բ. Տիմ. 1. 7):

Աստուած կը կանչէ մեզ բոլորիս, որոնք կը հաւատան, ուր որ ալ ըլլանք՝ տունը թէ դուրսը, ուրիշներու պատմելու Յիսուսի մասին: Մենք կրնանք տառապիլ, բայց Ան ճիշդ հո՛ն՝ մեզի հետ է:

Աղօթք - Սիրելի Աստուած, կ'ուզեմ, որ ուրիշներ ճաչնան քեզ ա՛յնպէս, ինչպէս ես: Կը խնդրե՛մ՝ զօրացուր զիս՝ Զու Սուրբ Հոգիիդ միջոցով, որ յայտնեմ անոնց Զու մասիդ եղած մեծ լուրը: Ամէն:

Ի՛նչը քեզի կ'օգնէ ուրիշներու պատմելու՝ Յիսուսի մասին:
Ինչպէ՛ս տառապած ես՝ ոեւէ մէկուն բարի լուրը յայտնելուդ համար:

Սուրբ Հոգին ձեր վրայ եկած ատենը՝ զօրութիւն պիտի ստանաք, եւ ինծի համար վկաներ պիտի ըլլաք ... մինչեւ երկրի ծայրերը: [Գործք 1. 8]

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵԾ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Մեր քաղաքը՝ գրեթէ մթնցաւ՝ սառույցի մեծ փոթորիկէն ետք, որ խլեց քիլօմեթրներ երկարող ելեկտրական հոսանքի գիծերը, ձգելով մեր ընկերներէն շատերը՝ առանց ելեկտրականութեան հոսանքի, ջերմացնելու իրենց տուները՝ ցուրտ ձմռան եղանակին: Ընտանիքներ կը յուսային տեսնել նորոգող բեռնակարգեր իրենց շրջանին մէջ, որոնք կ'աշխատէին ելեկտրականութեան հոսանքի վերականգնումին համար: Յետոյ իմացայ, որ եկեղեցիին ինքնաշարժներու կայանատեղը՝ ծառայած էր՝ որպէս ժամանակաւոր հսկողութեան կեդրոն այն մեքենաներուն համար, որոնք դրկուած են կարիքաւորներուն օգնելու համար:

Լսելով վերանորոգման բեռնատարներու մասին, յիշեցի Յիսուսի տուած պատուիրանը աշակերտներուն՝ Գործք Առաքելոց գիրքին մէջ: Իր յարութենէն քառասուն օր ետք, Քրիստոս երեւցաւ իր աշակերտներուն՝ քաջալերելու եւ ուսուցանելու անոնց Աստուծոյ արքայութեան մասին (Գործք 1. 3): Մինչ Յիսուսի երկինք վերադառնալը, Ան անոնց տուաւ վերջին խոստումը. «Սուրբ Հոգին ձեր վրայ եկած ատենը՝ զօրութիւն պիտի ստանաք» (Հմ. 8):

Քրիստոս խոստացաւ, որ Աստուծոյ անհամեմատ մեծ զօրութիւնը՝ հիանալի կ'ըլլայ աշակերտներուն՝ իր Հոգիին միջոցով: Բայց իշխանութիւն ունենալու նպատակը՝ այդ իրենց մէջ պահել չէր: Այլ, աշակերտները թոյլ տուին Աստուծոյ զօրացնելու զիրենք՝ ուրիշներուն պատմելու առաքելութեան մէջ, եւ թէ ինչպէ՞ս եւս մէկ անգամ կրնան զգալ կապը Աստուծոյ զօրութեան սիրոյ հետ, որ խզուած էր՝ մեղքին պատճառով:

Երբ մենք դուրս կու գանք մեր համայնքներէն, ունինք նոյն ուժն ու կոչումը: Աստուծոյ Հոգիով զօրացած՝ մենք կրնանք հոգ տանիլ անոնց, որոնք կը տառապին եւ կիսուելի թէ ինչպէս անոնք նոյնպէս կրնան օգտուել Աստուծոյ զօրութենէն:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալութիւն Զեզի՝ Զու զօրութեան եւ սիրոյ պարգեւին համար: Ամէն:

Եթէ զգացած ես Աստուծոյ Հոգիին զօրութիւնը՝ քեզի օգնելու համար, ինչպէ՞ս կրնաս կիսուել այդ պատգամը ուրիշներու հետ:

Չուրերուն հոսանքը զիս թող չընկղմե, ... եւ ջրհորը իր բերանը վրաս թող չգոցե: [Սաղմ. 69. 15]

ԽՈՐՈՒՆԿ ՏԵՂԵՐՈՒ ՄԷՋ

Սէն Ֆոլթուոսո Էպպին (*San Fruttuoso Abbey*) կը գտնուի Իտալիոյ Հիւսիս-արեւմտեան ծովափին: Հասանելի է միայն նաւով կամ ոտքով. այդ մէկուսի գոհար մըն է: Բայց աւելի շատ գանձեր թաքնուած են անոր ծոցին մէջ: Երբ սուզորդները կ'իջնեն յիսուն ոտնաչափ ջուրին խորքը, մարդու մը կերպարանքը կը սկսի երեւնալ: Սա՛ Անդունդի Քրիստոսն է. աշխարհի առաջին ջուրին յատակը եղող արձանն է, որ տեղադրուած է 1954 թուականին: Պղնձի պատկերը կը ներկայացնէ Յիսուսը՝ խորունկ տեղին մէջ, իր ձեռքերը դէպի երկինք բարձրացուցած:

Խորքերը: Գուցէ՛ դուն զգացած ես զանոնք: Սաղմոս 69-ն կ'ըսէ. «Չուրերուն խորքը մտայ, ու հոսանքները զիս ընկղմեցին: Գոչելէն յոգնեցայ» (Հմ. 2-3): Ծաղրուելով իր թշնամիներուն կողմէ եւ օտարացած իր ընտանիքէն (Հմ. 4, 7-12), Սաղմոսերգուն ուրիշներու մէջ մխիթարութիւն չգտաւ (Հմ. 20) եւ վախցաւ, որ իր դժբախտութիւնը «կը կլլէ զինք» (Հմ. 15): Անկախ անկէ, թէ մեղքը կամ տխրութիւնը մեզ կը տեսնէ՝ այնտեղ, խորքերը՝ կեանքի մուտք յուսահատութեան պահերն են:

Բարեբախտաբար, սա խորութեան վերջին խօսքը չէ՛: Քանի որ երբ տակաւին անոնք պաղ են ու միայնակ, կա՛յ մէկը՝ որ կարելի է գտնել իրենց մէջ (139. 8): Եւ Ան կ'ազատէ մեզ անոնց պաղ ջուրերէն: «Ո՛վ Տէր, կը բարձրացնեմ քեզ, որովհետեւ զիս ազատեցիր» (30. 1):

Ինչպէ՛ս կը յիշեցնէ այդ քանդակը, թէ երբ մենք կը սուզուինք աշխարհի ծանրութեան տակ, մենք մինակ չենք: Յիսուս՝ իր Հոգիով այնտեղ է, խորքերուն մէջ, Անոր ձեռքերը վեր բարձրացած են՝ պատարաստ հանդիպելու մեզի եւ ժամանակին դուրս հանելու:

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, շնորհակալութիւն, որ հանդիպեցար ինծի՛ խո՛ր տեղերը: Կը ինդրե՛մ, բարձրացուր զիս՝ Զու սիրովդ՝ շնորհքովդ եւ զօրութիւնովդ: Ամէն:

Ինչպէ՛ս զգացած ես «խորունկ տեղերը» անցեալին: Ինչպէ՛ս կրնայ Սաղմոս 69. 153-ը առանցքային ըլլալ անոնց մէջէն անցնելու համար:

Իմ ճամբաներս ձեր ճամբաներէն բարձր են: [Ես. 55. 9]

ԱՍՏՈՒԲԾ ԼԱԲԱԳՈՅՆԸ ԳԻՏԷ

Անհանգիստ՝ իմ անչափահաս զարմուհիիս ունեցած առողջական խնդիրէն՝ թեթեւցայ, երբ լսեցի խոստումնալից բնական դեղամիջոցի մասին: Քոյրս, սակայն՝ զգաց, որ այդ կրնայ առաջացնել կողմնակի բարդութիւններ՝ հիմնուելով իր դուստրին բժշկական պատմութեան վրայ: Կ'ուզէի վիճիլ իր հետ, բայց գերծ մնացի: Անկախ անկէ, թէ որքան մտահոգ էի զարմուհիս համար, ես ստիպուած էի անսալ իր մօր հեղինակութեան:

Աւելի ուշ՝ բժիշկ մը մեզի ըսաւ. «Այդ բնական միջոցը՝ ուժեղ դիւրազգացուցիչն է հակազգեցուցիչն կ'առաջացնէ»: Երբ խօսքը կը վերաբերի զարմուհիիս բարեկեցութեան, իր մայրը՝ իսկապէ՛ս գիտէ, թէ ի՛նչն է լաւագոյնը իրեն համար, այնպէ՛ս, ինչպէ՛ս ես չեմ գիտեր: Ես կը յիշեմ այս դէպքը, երբ կ'անհանգստանամ միւս սիրելիներուն համար, կը խնդրեմ Աստուծմէ, որ օգնէ անոնց՝ այնպէս, ինչպէս կը կարծեմ, որ անոնց պէտք է օգնել: Կը յիշեմ, թէ Աստուած, որ կը սիրէ անոնց եւ գիտէ անոնց շատ աւելի լաւ՝ քան ես, ամենէն լաւ գիտէ:

Եսայի 55. 9-ին մէջ Աստուած կ'ըսէ. «Որչափ որ երկինքը երկրէն բարձր է, այնքան իմ ճամբաներս ձեր ճամբաներէն բարձր են»: Եբրայէրէն «ճամբաներ» բառը (derek) կը վերաբերի Աստուծոյ բարոյական արարքներուն եւ վարքագիծին, որոնք կը հակադրուին չար մարդոց: Աստուծոյ իմաստութիւնն ու արդար ճամբաները՝ շատ աւելի բարձր են մեր ճամբաներէն: Այն՝ ինչ որ տեղի կ'ունենայ սիրելիի մը կեանքին մէջ, կրնայ ըլլալ այն, ինչ որ մենք չենք ուզէր, բայց մենք կրնանք վստահիլ Անոր, որ աշխատի անոնց կեանքներուն մէջ՝ այնպէ՛ս, ինչպէ՛ս Ան է որ լաւագոյնը կը տեսնէ:

Եկէ՛ք շարունակենք վստահիլ Աստուծոյ՝ անոնք, որ կը սիրենք, ներկայացնելով «մեր խնդրանքները Աստուծոյ» (Փիլ. 4. 6): Միայն Ան կատարեալ է սիրոյ, ողորմութեան, իմաստութեան եւ գերիշխանութեան մէջ (Ես. 55. 3, 7-11):

Աղօթք - Սիրելի Աստուած, իմ սիրելիներս կը վստահիմ Քու խնամքիդ: Դո՛ւն միայն գիտես, թէ ի՞նչն է անոնց համար լաւագոյնը: Ամէն: Վստահ մտահոգութիւններ ունիք մեր սիրելիներուն համար: Եկէ՛ք գիրենք վստահիք Աստուծոյ հոգածութեան, խնամքին եւ իմաստութեան:

Լպաստաւոր չէ՞, քանի որ իմ օրերուս մէջ խաղաղութիւն եւ ապահովութիւն պիտի ըլլայ: [Գ. Թագ. 20. 19]

ՄԵՐ ՄՏԱԽՈՐ ԱՍՏՈՒԱԾԸ

«Կ'ուզե՞ս տեսնել՝ սպիս»։ Ըսաւ ընկերս՝ Պիլլը (Bill), որ տարիներ առաջ սանդուղիէն իյնալով, անդամաւոյժ էր կուրծքէն վար եւ հիմա հիւանդանոցն էր, վիրահատութեան ժամանակ իր ունեցած ծանր վարակումին պատճառով: Երբ մենք կը քննարկէինք՝ իր մարտահրաւէրները, ան բարձրացուց իր վերմակը ցոյց տալու ինծի, իր վարակը բուժելու համար եղած հատուածը: «Կը ցաւի՞»: Հարցուցի ու ան պատասխանեց. «Ես ընդհանրապէս չե՛մ զգար զանիկա»:

Երբ ան ըսաւ այդ խօսքը, ես ինծի դատապարտուած զգացի: Այդ բոլոր տարիներու ընթացքին, երբ կը ճանչնայի զինք՝ որպէս ընկեր, չէի գիտեր, որ անոր վնասուածքը կը խանգարէր իր շարժելու եւ զգալու կարողութիւնը: Կ'ամչնայի, աւելի շատ կարեկցանք չունէի իր եւ իր ունեցած վնասուածքին հանդէպ, որպէսզի աւելի լաւ հասկնայի, թէ ինչի հետ՝ ան բախումներ կ'ունենայ:

Ընկերոջս մասին մտախոհ չըլլալը ինծի կը յիշեցնէ Յուդայի Եզեկիա թագաւորի ըրածը: Երբ Եսայի մարգարէն ըսաւ անոր, որ իր պալատին մէջ ամէն ինչ՝ օր մը «Բաբելոն պիտի տարուին» եւ իր սերունդները «պիտի տեղափոխուին» (Գ. Թագ. 20. 17-18), Եզեկիա գոհացաւ: Ինքնիրեն կ'ըսէր. «Նպաստաւոր չէ՞, քանի որ իմ օրերուս մէջ խաղաղութիւն եւ ապահովութիւն պիտի ըլլայ» (Հմ. 19): Թէեւ ան լաւ թագաւոր էր, Եզեկիա աւելի շատ կեդրոնացած էր իր վրայ, քան ա՛յն՝ ի՞նչ որ կը սպասուի ուրիշներէն:

Որքա՛ն տարբեր է Աստուած: «Սա՛ է սէրը», գրեց Յովհաննէս, «ո՛չ թէ մենք սիրեցինք Աստուած, հապա ա՛ն սիրեց մեզ եւ դրկեց իր Որդին, մեզ փրկելու համար» (Ա. Յովհ. 4. 10): Աստուած այնքա՛ն կը հոգայ մեր մասին, որ չարչարուեցաւ մեզի համար, որպէսզի մենք կարենանք ապրիլ Իր սիրոյն մէջ՝ յաւիտեան:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ կը մտածես իմ մասիս: Կը խնդրե՛մ, թո՛յլ տուր, որ Քու սերդ հոսի իմ միջոցով՝ դէպի ուրիշներուն: Ամեն:

Ի՞նչ կը նշանակէ Աստուծոյ մտախոհութիւնը քեզի համար: Ինչպէ՞ս կրնաս այսօր մտածել ուրիշներու մասին:

Ա՛յնպէս վագեցեք՝ որ ստանաք մրցանակը: [Ա. Կորնթ. 9. 24]

ՇԱՅԻԼ՝ ՎՆԱՍԵԼՈՎ

Չյաղթելը՝ իրականութեան մէջ՝ աւելի հզօր է, քան յաղթելը» կը պնդէ Փրոֆէսօր Մօնիքա Ուատհուա (Monica Wadhwa): Անոր հետազօտութիւնը, ցոյց կու տայ, որ մարդիկ հակումը ունին՝ ամենէն եռանդուն եւ մղուած ըլլալ՝ ո՛չ թէ երբ կը յաղթեն, այլ երբ գրեթէ՛ կը յաղթեն: Մէկու մը փառասիրութենէն քիչ մը պակաս ըլլալը՝ մարդոց մղումը կու տայ՝ շարունակ աճելու եւ ձգտելու: Միւս կողմէ՛ հե՛շտ յաթանակները, հակումը ունին՝ անդամալուծելու ու ժականութիւնը եւ մղումը:

Ուատուահի տեսակէտը՝ թարմ պատկերացում մը կու տայ՝ Պօղոսի վերաբանութեան մասին, որ գործածուած է երկու հատուածներու մէջ, որոնք կը համեմատեն Քրիստոսի հետեւիլը՝ մրցավագքի հետ, Ա. Կորնթացիս 9. 24-27 եւ Փիլիպեցիս 3. 12-14: Երկու դէպքերուն ալ՝ Պօղոս կ'ընդգծէ, որ հաւտացեալները պէտք է ամէն ինչ տան Քրիստոսի եւ աւետարանին հետապնդումին համար՝ «դիմելով առջեւ եղածներուն» (Փիլ. 3. 13) եւ վագելով «ա՛յնպէս՝ որ ստանան մրցանակը» (Ա. Կորնթ. 9. 24):

Տարաբանական ճշմարտութիւնը ա՛յն է, թէ ի՛նչ որ մենք կը ձգտինք՝ հաւատարմօրէն կիսուելով աւետարանը (Հմ. 23) եւ ճանչնալով Քրիստոսին (Փիլ. 3.8), այն բաները չեն, որոնց համար մենք երբեւէ կրնանք ըսել՝ թէ հասա՛ծ ենք: Մենք միշտ կը թերանանք: Մենք երբէ՛ք պիտի չկարենա՛նք ըսել, որ «արդեն ստացած եմ» (Հմ. 12):

Բայց ա՛յդ լաւ է, քանի որ կարելոր է Քրիստոսի աւելի ու աւելի մօտենալու փորձառութիւնը: Միայն Անոր ուժն է, որ կը զօրացնէ ու կը մղէ մեզ՝ մեր ամբողջ սիրտով՝ զինք հետապնդելու համար, Ա՛ն որ օր մը մեզի պիտի տանի յաղթանակի:

Աղօթք - Սիրող Աստուա՛ծ, շնորհակալ եմ Զեզի, որ ես պետք չունիմ վախնալու թերի գտնուելու, որովհետեւ՝ Դո՛ւն կ'օգտագործես այս պահերը՝ զի՛ս անընդհատ աւելի մօտեցնելու Զեզի: Ամէն **Ինչպէ՞ս աճումի զգացումը ունեցած ես՝ թերացումի պատճառով:**
Ինչպէ՞ս թերացումը կրնայ խրախուսել քեզ՝ ապաւինելու Զրիստոսի:

Որովհետեւ իՆք է մեր Աստուածը, ու մենք անոր արօտիկ
ժողովուրդը եւ անոր ձեռքին առաջնորդած ոչխարներն ենք:
[Սաղմ. 95. 7]

ԱՆՆԱՆՏ ՅԱՒԱՅԲ

Երբ Տայան Տօգգօ Գիմ (Dianne Dokko Kim) եւ իր ամուսինը
իմացան, որ իրենց որդիին ախտորոշումը օթիզմ (autism)
է, Տայան պայքարեցաւ այն իրականութեան հետ, որ իր
ճանաչողական հաշմանդամութիւն ունեցող որդին՝ կրնայ աւելի
երկար ապրիլ՝ քան ինք: Ան ազադակեց Աստուծոյ. «Ի՞նչ
պիտի ընէ ան առանց իմ հոգատարութեան»: Աստուած զինք,
չըջապատեց՝ հաշմանդամութիւն ունեցող երեխաներ մեծցնող
այլ մեծահասակներու աջակցութեան համակարգով: Ան
գօրացուց Տայանին՝ վստահելու Իրեն՝ իր յաճախ անբացատրելի
մեղքը՝ անբաւարարութեան զգացումը եւ վախը: Ի վերջոյ, իր
գրած Անխախտ Հաւատք կոչուած գիրքին մէջ, ան «հոգեւոր
վերականգման» յոյս յայտնեց՝ հաշմանդամութիւն ունեցող
երեխաներ մեծցնող մեծահասակներուն: Երբ իր որդին կը դառնար
չափահաս, Տայանի հաւատքը կը մնայ անձեռնմխելի: Ան վստահ
է, որ Աստուած միշտ հոգ կը տանի իրեն եւ իր որդիին համար:

Կեանքի մէջ անորոշութիւնները կրնան կարծրացնել մեր
սիրտերը Աստուծոյ հանդէպ: Մենք կրնանք փորձուիլ դնելու
մեր հաւատքը ուրիշ բաներու կամ մարդոց վրայ, ի միջի այլոց՝
մեր անձերուն: Սակայն՝ կրնանք կախեալ ըլլալ «մեր փրկութեան
Վէմէն» (Սաղմ. 95. 1)՝ որ ցոյց կու տայ Աստուծոյ նկարագրին
վստահելիութիւնը: «Անոր ձեռքին մէջ են երկրի խորունկ
տեղերը, եւ անորն են լեռներուն գագաթները: Ի՛րն է ծովը, ի՛նք
ստեղծեց գայն. Ի՛ր ձեռքերը ձեւակերպեցին ցամաքը» (Հմ. 4-5):

Մենք կրնանք ապրիլ անխախտ հաւատքով՝ երկրպագելով
մեր «Ստեղծող Տէրոջ» (Հմ. 6): Մենք կրնանք վստահիլ Անոր,
որ կ'ըլլայ մեզի եւ անոնց հետ, որոնց կը սիրէ, քանի որ մե՛նք
«իր ձեռքին առաջնորդած ոչխարներն ենք» (Հմ. 7):

Աղօթք - Մեծ Աստուած, շնորհակալ եմ քեզի, որ խոստացած ես
հոգ տանիլ ինծի համար: Ամէն:

**Ինչպէ՞ս Աստուած ցոյց տուած է, որ կը հոգայ քեզ եւ քու
սիրելիներդ, երբ դուն քեզ անօգնական կը զգաս: Ինչպէ՞ս Իր
նկարագրի հաւատարմութիւնը իմանալը՝ կ'օգնէ քեզի վստահիլ
Իրեն՝ որպէս խոստում պահող Աստուածը:**

Աբրահամ Սառայի համար հեծեծելու եւ լալու եկաւ: [Շն. 23. 2]

ՍԱՐՍԱՓԵԼԻ ԲԱՆ ՍՆՆ Է

«Սարսափելի բան է՝ սիրե՛լ ա՛յն, ինչ որ մա՛հը կրնայ խլել»: Այդ տողով կը սկսի բանաստեղծութիւն մը, որ գրած է հազար տարիներ առաջ՝ Հրեայ բանաստեղծ Յուդա Հալէվի (Judah Halevi), որ թարգմանուած է քսաներորդ դարուն: Բանաստեղծութիւնը կը պարզաբանէ, թէ ինչ կայ վախին ետեւ. «Սիրել ... / Եւ ո՛հ, կորսնցնել»:

Ծննդոց գիրքին մէջ, զգացումներու հեղեղ մը տեղի ունեցաւ, երբ Սառա մահացաւ, «Աբրահամ Սառայի համար հեծեծելու եւ լալու եկաւ» (23. 2): Գլուխը կը բանայ՝ Սուրբ Գիրքի ամենայիշատակելի պատմութիւններէն մէկը՝ Սառայի Աբրահամի հաւատարիմ կնոջ կորուստի՝ գեղեցիկ, ծանր վիշտի պատմութիւնը, այդ ծեր կնոջ, որ խնդաց այն լուրին համար, որ ինք մայր պիտի դառնայ (18. 11-12), բայց լացաւ ցաւի մէջ, երբ Իսահակ իր ճամբան բռնեց դէպի աշխարհ:

Մենք՝ Յովհաննէսի աւետարանին պարզ՝ մարդկայնութեամբ հարուստ հատուածին մէջ, շատ բան կը տեսնենք, ուր Յովհաննէս գրեց սա՛ խօսքը. «Յիսուս լացաւ» (Յովհ. 11. 35): Մեսիային արցունքները՝ Ղազարոսի գերեզմանին մօտ՝ ընդգծեցին Յիսուսի կորուստը: Սիրելը, իսկապէս սարսափելի է: Բանաստեղծ Հալէվի, զայն կ'անուանէ «յիմարներու բան», սակայն նաեւ կ'անուանէ՝ «սուրբ բան մը», որ յատկապէս անոնց համար է, որոնց հաւատքը «թաքնուած է Քրիստոսի հետ՝ Աստուծոյ մէջ» (Կող. 3. 3):

Մենք կը սիրենք եւ կը կորսնցնենք՝ ամէն ինչ, սկսելով կողակիցներէն՝ մինչեւ զաւակներ, ծնողներ, հարազատներ, ընկերներ եւ ընտանի կենդանիներ, կ'ողբանք «ցաւոտ ուրախութեամբ», որ շատ մարդկային է: Սակայն Յիսուսի հաւատացողին համար մեր լացը կը տեւէ միայն մէ՛կ գիշեր: Ինչպէ՛ս գրած է Դաւիթ. «Իրիկունը լաց կայ, բայց առտուն՝ ցնծութիւն» (Սաղմ. 30. 5): Մեր Հայրը՝ մեզ յոյսէն յե՛տ չի թողուր:

Աղօթք - Սիրելի Յայր, կը խնդրե՛մ՝ ինծի քաջութիւն տո՛ւր: Ամէն: Ի՞նչ բան ազդած է քեզի սիրելու կարողութեան վրայ: Ո՞վ է վերջին անձը, որու համար լացած ես եւ ինչո՞ւ:



հրաքանչիւրը թող տայ՝ ... ո՛չ թէ տրտմութեամբ կամ հարկադրաբար. որովհետեւ Աստուած կը սիրէ ցնծութեամբ տուողը: [Բ. Կորնթ. 9. 7]

SԱԼՈՒ ՊԱՐԳԵԻԸ

2024 թուականին՝ երկիրլիոնատէր գործարար Ռապրըթ Հէյլ Կրտսեր (Robert Hale Jr.) ըսաւ՝ 1200 համալսարանի շրջանաւարտներու. «Ա՛յս դժուար ժամանակները լուսարցակի տակ դրած են՝ կիսուելու, հոգալու եւ նուիրուելու անհրաժեշտութիւնը: Կինս ու ես, կ'ուզենք ձեզի տալ երկու նուէրներ: Առաջինը՝ մեր նուէրն է ձեզի ու երկրորդը՝ տալու պարգեւն է»: Իր խօսքերուն յաջորդեց երկու պահարաններու ցրուումը՝ իւրաքանչիւր շրջանաւարտի. հինգ հարիւր տոլար պահելու եւ հինգ հարիւր տոլար տալու՝ ուրիշի մը, որ կարիքը ունի:

Թէեւ Ռապրըթ Հէյլի հարստութիւնը թոյլ տուած էր իրեն՝ մէկէ աւելի առիթներով կիսել ա՛յսպէս, առատաձեռնութիւնը վերապահուած է՝ միայն մեծ միջոցներ ունեցողներուն: Հին Մակեդոնիայի մէջ եղող Յիսուսի հաւատացողներ՝ իրենց աղքատութենէն տուին, որպէսզի Երուսաղէմի հաւատացեալներու կարիքները հոգացուին: Պօղոս ըսաւ անոնց մասին. «Տառապանքի մեծ փորձի մը մէջ՝ իրենց առատ ուրախութիւնը եւ իրենց ծանր աղքատութիւնը ճոխացան իրենց հարուստ առատաձեռնութեամբ» (Բ. Կորնթ. 8. 2): Պօղոս կը գովէ անոնց, քանի որ «իրենց կարողութեան համեմատ ու կարողութենէն ալ աւելի յօժարակամ ըլլալով, շատ պնդումով կ'ազերսէին մեզի՝ որ ընդունինք շնորհքը եւ սուրբերուն համար եղած սպասարկութեան հաղորդակցութիւնը» (3-4):

Անոնք, որոնք կը գիտակցին՝ թէ իրենց շատ շնորհք տրուած է Աստուծմէ՝ Յիսուսի միջոցով, կրնան առատաձեռն ձեռքերով տալ ուրիշներու կարիքներուն:

Աստուծոյ օգնութեամբ՝ եկէ՛ք տա՛նք անոր օրինակով, որ ըսաւ. «Աւելի՛ երանելի է տա՛լը՝ քան ստանալը»: (Գործք 20. 35):

Աղօթք - Երկնաւոր Յայր, կը խնդրե՛մ օգնէ ինծի առաձեռնութեամբ տալու ուրիշներուն: Ամէն:
Ի՞նչ կրնաս տալ ուրիշին առատաձեռնութեամբ: Ինչպե՞ս եղած ես ուրիշէն առատաձեռն օժանդակութիւն ստացողը:

Տերը ըսաւ. «Արդարեւ տեսայ ժողովուրդիս տառապանքը ... անոնց կոտտանքը գիտեմ»: [Ել. 3. 7]

Ո՛Չ ՄԵԿ ՎԱՏՆՈՒՄԾ ՑԱԻ

Ան նայեցաւ աչքերուս մէջ եւ ըսաւ. «Մի՛ վատներ քու ցաւդ»: Անմիջապէս յիշեցի երբ տարիներ առաջ առաջնորդեցի իր պատանի որդիին յիշատակի պաշտառուքը, որու կեանքը խլուեցաւ ինքնաշարժի արկածով: Ան գիտէ՞ր թէ ինչի մասին կը խօսի: Ան գիտէ՞ր ցաւը: Բայց ան նաեւ գիտէ՞ր, թէ ինչպէ՞ս Աստուած կրնար զայն օգտագործել՝ ինքզինք պատուելու եւ ուրիշներուն օգնելու համար, ինչ որ այս ընկերուհին շատ լաւ ձեւով ըրած էր: Լսեցի անոր խօսքերը, եւ ատոնք մխիթարեցին ու քաջալերեցին զիս, երբ դիմակալեցի քաղցկեղի լուրջ ախտորոշում: Ան կը յիշեցնէր ինձի, որ Աստուած լսեց իմ լացս ու ողբս եւ Ան ինձի հետ էր իմ ցաւիս մէջ եւ կրնար օգտագործել զայն՝ ուրիշներու օգնելու համար՝ նոր ձեւով:

Մովսէս նաեւ իմացաւ, որ Աստուած իր ժողովուրդին հետ էր՝ անոնց ցաւերուն մէջ: Ան ըսաւ. «Արդարեւ տեսայ Եգիպտոսի մէջ եղող իմ ժողովուրդիս տառապանքը եւ լսեցի անոնց բարձրացուցած աղաղակը. որովհետեւ անոնց կոտտանքը գիտեմ» (Ել. 3. 7): Իսրայէլացիները, ինչպէ՞ս մենք, երբեմն իրենց ցաւին մէջ միմակ կը զգային: Բայց Աստուած վստահեցուց անոնց, որ Ան «փրկելու» ծրագիր ունէր եւ թէ անոնց սիրտերուն «աղաղակը» լսեց (Հմ. 8-9): Ան, ի վերջոյ, կ'օգտագործէր անոնց ցաւը՝ աճեցնելու անոնց հաւատքը, յաղթելու իրենց թշնամիներուն եւ պատիւ բերելու իրեն:

Սաղմոս 90-ին մէջ, որ Մովսէսի վերագրուող միակ Սաղմոսն է, ան յայտարարեց, որ թէեւ «Մեր կեանքի տարիները եթէ զօրութեամբ ութսուն ալ ըլլայ, տակաւին անոնց հպարտանքը տաժանք եւ ունայնութիւն է» (Հմ. 10): Աստուծոյ «հաստատուն սէրը» մեզի հետ է «մինչեւ աշխարհի վերջը»: Ան սիրով չի վատնէր մեր ցաւը, եւ ո՛չ ալ մենք:

Աղօթք - Սիրող Աստուած, շնորհակալ եմ քեզի՝ իմ աղաղակներս լսելուդ եւ իմ ցաւս օգտագործելուդ համար՝ ուրիշներուն օգնելու նպատակով: Ամէն:

Ի՞նչ կը նշանակէ գիտնալ, որ Աստուած կը լսէ քու աղաղակդ: Ինչպէ՞ս Ան կ'օգտագործէ՝ քու ցաւդ՝ ուրիշներուն օգնելու համար:

Ընթանալը Տերոշ արժանավայել կերպով՝ հաճեցնելով զինք ամեն բանի մէջ, պտղաբեր ըլլալով ամեն տեսակ բարի գործով, եւ աճելով Աստուծոյ ճանաչումով: [Կող. 1. 10]

ՈՒՐԱՆՈՒԹԻՒՆ ՅԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԷՉ

Երկու տարեկան Բիթրըրը (*Peter*)՝ նստեցաւ բարձր աթոռին վրայ եւ մատներով՝ ուրախ կը լափեր իր ճաշը: Յետոյ՝ իր մեծ մայրը՝ ըսաւ: «Ան պէտք է սկսի դպալով ուսել իր ճաշը: Դուն պիտի չուզես՝ որ ան աւարտէ միջնակարգ դպրոցը եւ տակաւին չգիտնայ, ինչպէ՞ս օգտագործել արծաթեղէն իրերը»:

Տայէն (*Diane*) վիրաւորուած զգաց, կարծես իր կարողութիւնները՝ որպէս մայր կասկածի տակ կը դրուէր: «Անշուշտ՝ ան կ'օգտագործէ արծաթեղէն իրերը, անկէ շատ առաջ: Երբեմն գոքանչը՝ Լոիս (*Lois*), կը թուէր ըլլալ քննադատական:

Ժամանակ պահանջեց, բայց անցնող տարիներուն եւ շատ աղօթքով Տայան սորվեցաւ սիրել Լոիսին, այնպէս՝ ինչպէս Պօղոս նկարագրեց Կողոսացիներու ուղղած իր նամակին մէջ (1. 9-10): Ան սորվեցաւ, որ համբերութեամբ զիրար սիրելը, հոգեւոր հասունութեան նշան է (Հմ. 11): Մինչ ան աւելի լաւ ճանչցաւ Լոիսին՝ որպէս անձ եւ որպէս Աստուծոյ զաւակ, Տայան՝ նոյնպէս պէտք էր ներէր անոր՝ իր անկեղծութեան համար, ինչպէս որ Աստուած ներած էր իրեն (Հմ. 14): Եւ երբ ան հասունցաւ, Տայան սկսաւ աւելի լաւ հասկնալ եւ ուրախանալ Լոիսով:

Լոիսի մահէն առաջ՝ իրենց միասին անցուցած վերջին քանի մը տարիներու ընթացքին, երկուքը զրուցեցին եւ ծիծաղեցան եւ ստեղծեցին շատ նոր հրաշալի յիշատակներ, որոնք Տայան կը շարունակէ վայելել:

Մեր կեանքին մէջ ուրիշներու սիրել սորվելը՝ կրնայ դժուար ըլլալ: Երբեմն անձնաւորութիւնները՝ բախում կ'ունենան կամ ուրիշներ կրնան չմտածուած բաներ ըսել: Բայց յիշելով Աստուծոյ ունեցած համբերութիւնը մեզի հանդէպ եւ թէ Ան ներած է մեզի, կ'օգնէ՝ որ նոյնը ընենք:

Աղօթք - Աստուած, շնորհակալ եմ, որ Զու շնորհքով՝ կրնամ ուրիշներու հետ յարաբերութիւններ ունենալ: Ամեն:

Կեանքիդ մէջ՝ ո՞ր յարաբերութիւններուն համար՝ ժամանակ պահանջուեցաւ աճումի եւ ծաղկման համար: Ի՞նչը՝ օգնած է քեզի՝ քու յարաբերութիւններուդ մէջ:

Բոլորն ալ լեցուեցան Սուրբ Յոզիով եւ սկսան խօսիլ ուրիշ լեզուներով, ինչպէս Յոզիս իրենց խօսիլ կու տար: [Գործք 2. 4]

ՍԻՐՈՅ ԼԵՉՈՒՄ

Mon Dieu: Lieber Gott: Drahý Bože: Αγαπητέ Θεέ: Dear God: *Եւ Անգլերէն աղօթքներ, որոնք կ'արձագանքէին Աթէնքի կեդրոնական եկեղեցիին մէջ, երբ մենք միաձայն կ'աղօթէինք մեր մայրենի լեզուներով, որպէսզի մեր երկիրներու մէջ ապրող մարդեր լսեն Աստուծոյ սիրոյ մասին: Հաւաքին գեղեցկութիւնը մեծցաւ, երբ հասկցա՛նք, որ մեր հաւաքը տեղի կ'ուենայ Պենտեկոստէի Օրը:*

Հին Կիտակարանին մէջ, Պենտեկոստէն բերքի տօն է, որ կը նշուի Պասէքի տօնէն յիսուն օրեր ետք (Ղեւ. 23. 15-21): Տէր Յիսուսի մահէն եւ յարութենէն յետոյ, առաջին Պենտեկոստէի օրը՝ հաւատացեալները հաւաքուեցա՛ն Երուսաղէմի մէջ: Յանկարծ լսուեցաւ «սաստկաշունչ հովի» նման ձայն մը ու յայտնուեցաւ «որպէս թէ կրակէ լեզուներ, երբ բոլորն ալ լեցուեցան Սուրբ Հոգիով եւ սկսան խօսիլ ուրիշ լեզուներով, ինչպէս Հոգին իրենց խօսիլ կու տար» (Գործք 2. 2-4): Այլ ազգերէ այցելուներ՝ լսեցին «Աստուծոյ մեծամեծ գործերուն մասին» իրենց լեզուներով (Հմ. 11): Յետոյ, Պետրոս խօսեցաւ ժողովուրդին (Հմ. 14). շատեր հաւատացին՝ այդ պատգամին, որ Յիսուս խաչուեցաւ եւ յարութիւն առաւ՝ ներում շնորհելու համար (Հմ. 22-24):

Աթէնքի մէջ հաւաքուած առաջնորդներուն բազմալեզու աղօթքները յիշեցուցին ինձի, որ Պենտեկոստէին լսուած Պետրոսի պատգամը՝ կը շարունակուի տարածուիլ ամբողջ աշխարհի մէջ եւ մարդիկ տակաւին կը պատասխանէն հաւատքով:

Եկէ՛ք աղօթենք, որ Հոգին զօրացնէ մեզ՝ ինչպէս Յիսուսի վաղեմի հաւատացողները Պենտեկոստէի ժամանակ պատմեցին Աստուծոյ սիրոյն մասին: Եւ եկէ՛ք աղօթենք, որ պատգամը լսուի ամբողջ աշխարհի մէջ՝ խօսուող իւրաքանչիւր լեզուով:

Աղօթք - Սուրբ Յոզի, կը խնդրեմ՝ զօրացուր զիս, որ կիսեմ Աստուծոյ սերը: Ամէն:

Ե՞րբ առաջին անգամ լսեցիր Աստուծոյ սիրոյն մասին: Ինչպէ՞ս կրնաս աղօթել, որպէսզի ուրիշներ ալ լսեն:

Ձեզի նոր սիրտ պիտի տամ, եւ ձեր ներսը նոր հոգի պիտի դնեմ:
[Եզ. 36. 26]

ՍԻՐՏԻ ՎԻՐԱՅԱՏՈՒԹԻՒՆ

Քանի մը տարիներ առաջ, բուռն խօսքեր փոխանակելէ ետք, Գարօլինը (*Carolyn*) եւ ես՝ լուծեցինք մեր հակամարտութիւնն ու տարակարծութիւնը՝ իրարու հանդէպ սիրոյ կարեկցութեան եւ միջոցով: Ես՝ խոստովանեցայ իմ մեղքս եւ ան աղօթեց ինծի համար՝ մէջբերելով Եզեկիէլ 36. 26-ը. «Ձեզի նոր սիրտ պիտի տամ, եւ ձեր ներսը նոր հոգի պիտի դնեմ. ձեր մարմիններէն քարեղէն սիրտը պիտի հանեմ ու ձեզի մարմնեղէն սիրտ պիտի տամ»: Զգացի ես, որ Աստուած հոգեւոր սիրտի վիրահատութիւն կ'ընէր իմ վրաս՝ հեռացնելով իմ վախերս ու դառնութիւնս, երբ Ան պարուրեց զիս իր սիրով:

Աստուած կ'ուրախանայ, որ մենք կը զբաղինք Սուրբ Գրութիւններով, ինչպէ՛ս՝ ես ըրի ա՛յն ատեն, բայց կարեւոր է նշել հատուածին սկզբնական բնագիրը: Եզեկիէլ Աստուծոյ անուկով խօսեցաւ իր ժողովուրդին հետ խոստանալով, որ Ան պիտի մաքրէ զիրենք: Ինչո՞ւ: «Ձեր սիրոյն համար չէ որ կ'ընեմ ասիկա, ... հապա իմ սուրբ անունիս համար» (Հմ. 22): Աստուած կը կատարէ իր մաքրագործող աշխատանքը՝ իր ժողովուրդին մէջ, որպէսզի բոլոր ազգերը յարգեն Անոր եւ գիտնան, որ Ան՝ Աստուած է:

Աստուած կ'իրականացնէ իր նպատակները մեր կեանքերուն մէջ՝ ո՛չ միայն օգնելու մեզ՝ ծաղկեցնելու եւ աճեցնելու համար, այլ մենք իրեն պատիւ կը բերենք: Ինչպէ՛ս որ Ան տուաւ Իսրայէլացիներուն՝ նո՛ր սիրտի եւ նո՛ր հոգիի խոստումը, այնպէ՛ս ալ Սուրբ Հոգիին ներքին աշխատանքին միջով՝ Աստուած մեր պաղ ու կարծրացած սիրտերը կը փոխանակէ անոնցմով, որոնք կ'ընդունին եւ կը բաժնեկցին Անոր սէրն ու կեանքը:

Աղօթք - Ամբողջ կեանքի Աստուա՛ծը, շնորհակալ եմ՝ որ փոխեցիր զիս ու ձեւաւորեցիր իմ մէջս նոր ես մը, որ արմատաւորուած է Զո՛ւ մէջդ: Կը խնդրեմ՝ թափէ Զու սերդ իմ վրաս այսօր: Ամէն:

Ինչպէ՞ս զգացած ես Աստուծոյ «սիրտի վիրահատութիւնը»:
Ինչպէ՞ս ուրիշներ նկատած են ա՛յն փոփոխութիւնները, որոնք Ան ըրած է քու կեանքիդ մէջ:

Խորագետը իր քայլերուն ուշադրութիւն կը դարձնէ: [Առ. 14. 15]

ԽՈՐԱԳԻՏՈՒԹԵԱՄԲ ԾՐԱԳՐԵԼ

Փ որը քաղաքի մը բժիշկ՝ Էզտանը (*Ezdan*)՝ մեծ երազանք մը փայտաբան էր իր փոքր դուստրին՝ Էլիանօրին (*Eleanor*) համար: Էլիանօր՝ ուղեղի աճման համախտանիշ (*Down Syndrome*) ունէր եւ Էզտան՝ յոյս ունէր առեւտրական գործ մը սկսիլ՝ անոր ապագային համար վճարովի աշխատանք ապահովելու: Իր երազանքին իրականացումին համար «սարսափած» զգալով՝ ան առցանց դասընթացքի մը հետեւեցաւ, թէ ինչպէս սկսիլ առեւտրական գործ մը: Յետոյ ան եւ իր կինը՝ Ուայօմինկի (*Wyoming*) մէջ հիմնեցին՝ ընտանեկան հացատուն մը եւ այդ կ'ուսումնասիրէր: Էզտան ըսաւ. «Ատիկա՝ իսկական առեւտրականութիւն դարձած է՝ լման աշխատակազմով»: Էլիանօր այժմ մեծցած է, կը գործ դրամի արկղին վրայ ու կը կապուի առցանց հաճախորդներու հետ: Էզտան կ'ըսէ. «Քաղաքի բոլոր բնակիչները գիտեն թէ ո՞վ է ան»: Էլիանօրի ապագան ծրագրելու համար, Էզտանի հաւատքի ուսուցումը՝ կ'արտացոլայ՝ խորագէտ ըլլալու ընտրութիւնը:

Խորագիտութիւնը կամ խոհեմութիւնը դասական Աստուածաշնչական առաքինութիւն մըն է: Խորագիտութիւնը՝ իմաստութեան տարր է, որ Աստուած կը սահմանէ մեր ընթացիկ եւ ապագայ ծրագրումին համար: Առակաց 14. 8-ն կ'ըսէ. «Խորագէտ մարդուն իմաստութիւնը իր ճամբան հասկնալն է. բայց անմիտներուն յիմարութիւնը խաբէութիւն է»: Ապագայի մասին անհանգստանալու, խորագէտ մարդիկ իմաստութիւն կը փնտռեն Աստուծոմէ՛ ծրագրելու համար:

Խորագիտութիւնը՝ կու գայ Լատիներէն *prudentia* բառէն, որ կը նշանակէ «հեռատեսութիւն»: «Միամիտ մարդը ամէն խօսքի կը հաւատայ, բայց խորագէտը իր քայլերուն ուշադրութիւն կը դարձնէ» (Հմ. 15): Անոնք իմաստութեամբ կ'աշխատին անվտանգութեան ցանց մը կառուցելու՝ գործողութիւններու ուժեղ ուղի մը իմաստուններու համար:

Աղօթք - Յայր, շնորհակալ եմ, որ ոգեշնչեցիր զիս՝ խոհեմութիւնով ծրագրելու: Ամէն:

Աստուած ցոյց կու տայ մեզի, թէ ինչպէ՛ս ծրագրենք՝ զինք պատուելու համար: Եկե՛ք հաւատքով ծրագրենք՝ իմաստուն ապագայ մը:



Պատիւ կը համարենք ընդունելի ըլլալ անոր: [Բ. Կորնթ. 5. 9]

ՊԱՏՐԱՍ ԿԵՅԻՐ

Պէթին (Betty) պատրաստ է: Ան սկսաւ հետեւիլ Յիսուսի՝ դեռահաս տարիքին մէջ եւ ամբողջ իր կեանքի ընթացքին օգտագործած է ամէն հնարաւորութիւն՝ ծառայելու եւ հաճեցնելու զինք: Կը յաճախէ Սուրբ Գիրքի սերտողութիւններու, պաշտամունքներու եւ աղօթքի հանդիպումներու: Պէթի առաջնորդած է սերտողութիւններ, այցելած է միսիոնարական դաշտեր, աշխատած է մանկապարտէզներու մէջ, ծառայած է իր հովիւ ամուսինին կողքին եւ կը սիրէ ըլլալ Աստուծոյ ժողովուրդին հետ՝ երբ առիթը ստեղծուի: Զարմանալի է, որ ան 102 տարեկան է ու տակաւին պատրաստ է ընել՝ այն, ինչ որ Աստուած կը հաճեցնէ: Ան ներշնչու՞մ է շատերու համար, որոնք երբեմն չեն ցանկար հաւաքուիլ հաւատացեալներու հետ: Յետոյ կը յիշեն, «Պէթի հոն կ'ըլլայ: Ե՛ս ի հարկէ, կրնամ հասնիլ հոն»: Պէթին այժմ կ'ըսէ, որ կը ցանկայ հասնիլ դրախտ՝ իր Փրկիչին հետ ըլլալու համար: Ան կ'ըսէ. «Պատրաստ եմ տեսնելու Յիսուսի. շատ կը սիրեմ զինք»:

Պօղոս առաքեալ ըսաւ, որ «կ'ուզենք հեռանալ մարմինէն ու մօտ ըլլալ Տէրոջ» (Բ. Կորնթ. 5. 8): Բայց գիտէր, որ Աստուած գործ ունէր իրեն համար, որպէսզի խրախուսէ հաւատացեալներուն՝ շատ եկեղեցիներու մէջ (Փիլ. 1. 23-24): Այսպիսով, ան շարունակեց ծառայել եւ ապրիլ «հաւատքով» եւ «տեսողութեամբ» (Բ. Կորնթ. 5. 7): Պօղոս պատրաստ մնաց եւ շարունակեց ծառայել Աստուծոյ ուղղութեան ներքեւ:

Ինչ ալ ըլլայ մեր տարիքը եւ կեանքի հանգրուանը, եկէ՛ք խնդրենք Աստուծոյ, որ օգնէ մեզի՝ մեր սիրտի փափաքը դարձնել «ընդունելի ըլլալ անոր (Քրիստոսի)» (Հմ. 9) եւ պատրաստ մնալ: Պէթին պատարաստ է: Եւ եթէ օր մը ան պատարաստ չէ՛, այդ այն պատճառով է, որ ան կը տեսնէ Յիսուսի՝ դէմ առ դէմ:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը սիրեմ Զե՛զ՝ իմ ամբողջ սիրտովս եւ կ'ուզեմ Զե՛զ հաճեցնել այն ամէն բաներով, ինչ որ Դուս կ'ուզես:

Ամսհամբեր կը սպասեմ շուտով Զե՛զ տեսնելու: Ամէն:

Ինչպե՞ս կրնանք սորվիլ պատասխանել երկինքէն Աստուծոյ տուած ծառայութեան կոչին:

Մի՛ մոռնաք բարեգործութիւնն ու կարօտեալներուն հաղորդակցութիւնը: [Եբ. 13. 16]

ԱՌԱՏԱԶԵՈՒ ՍԻՐՏ

Երբ Սէնէկայի ֆութբոլի աստղ՝ Սատիօ Մանէն (Sadio Mane) կը խաղար Լիվըրփուլ (Liverpool) խումբին համար՝ Անգլիոյ Առաջնակարգ Լիկայի մրցաշարքին, ան աշխարհի ամէնէն բարձր վարձատրուող Ափրիկեցի խաղացողներէն մէկն էր՝ տարեկան միլիոնաւոր տոլարներ վաստակելով: Խանդավառողները նկատեցին Մանէի նկարը՝ ճաթած ապակիով բջիջային i-phone հեռախօս մը իր ձեռքին ու կատակեց իր մասին, որ կը գործածէր վնասուած սարք մը: Իր պատասխանը՝ առանց շփոթելու էր՝ երբ հարցուց. «Ինչո՞ւ ես կ'ուզեմ ունենալ տասը Ֆէրրարիներ (Ferrari), քսան ադամանդէ ժամացոյցներ եւ երկու շարժակով ինքնաթիռներ: Ես սովամահ եղայ, աշխատեցայ դաշտերուն մէջ, դպրոց չեմ յաճախած: Հիմա ես կրնամ օգնել մարդոց: Ես կը նախընտրեմ դպրոցներ կառուցել եւ աղքատներուն ուտելիք եւ հագուստ տալ: ... Տո՛ւր՝ մաս մը, ինչ որ կեանքը տուած է ինծի»:

Մանէն շատ լաւ գիտէր, թէ որքա՛ն անձնասէր կրնայ ըլլալ կուտակել իր ամբողջ բարգաւաճումները, երբ իր հարեւաններէն շատերը կը պայքարէին՝ ճնշիչ պայմաններու մէջ: Եբրայեցիներու նամակը կը յիշեցնէ մեզի, որ այս առատաձեռն ապրելակերպը բոլորիս համար է, ո՛չ միայն անոնց համար, որոնք հարուստ են: Հեղինակը կ'ըսէ. «Բայց մի՛ մոռնաք բարեգործութիւնն ու կարօտեալներուն հաղորդակցութիւնը, քանի որ այդպիսի՛ գոհեր հաճելի են Աստուծոյ» (13. 16): Առատաձեռն սիրտ զարգացնելը, ո՛չ միայն ճիշդ բան մըն է, այլ՝ ըստ Սուրբ Գիրքին, առատաձեռնութիւնը նաեւ ժպիտ մը կու տա՛յ Աստուծոյ: Ո՞վ չուզեր Աստուած հաճեցնել:

Առատաձեռնութիւնը չի՛ սահմանուիր անով, թէ որքա՛ն մենք կու տանք: Առատաձեռնութիւնը կը վերաբերի մեր սիրտին կեցուածքին: Բանանք մեր ձեռքերը եւ կիսուինք ա՛յն, ինչ որ ունինք:

Աղօթք - Տէր, շնորհակալ եմ այն մեծահոգի սիրտին համար, որ ցոյց տուիր ինծի: Կը խնդրեմ, օգնէ ինծի նոյնպէս ըլլալ առատաձեռն: Ամէն: **Ինչպէ՞ս ցոյց կու տաս առատաձեռնութիւն: Ի՞նչ բանը քեզի կրնայ օգնել առատաձեռն սիրտ զարգացնելու համար:**

Ձեր ոսոխը՝ Չարախօսը՝ կը շրջի մռնչող առիւծի պէս, փնտռելով թէ ո՛վ կ'լլէ: Դիմադրեցէ՛ք անոր: [Ա. Պետ. 5. 8-9]

ՀԱՍՏԱՏ ԿԵՆԱԼ՝ ՀԱՒԱՏՔԻ ՄԷՉ

Քանի մը տարիներ առաջ՝ աշխատանքի երթալու համար, դէպի գնացքի կայանը քալելու ատեն, տեսայ կին մը՝ կատաղի երեւոյթով շունի մը հետ, որ կու գար դէպի իմ կողս: Ես մեծցած եմ՝ ընտանի շուներով չըջապատուած, ուստի սովորաբար չեմ վախնար մուշտակով ընկերներէ, բայց այս մէկը՝ սպառնալի տեսք մը ունէր: Երբ շունը մօտեցաւ, հաջեց իմ վրաս: Ես փորձեցի ծիծաղել: Բայց ան վրաս յարձակեցաւ ու ես գոռացի: Բարեբախտաբար՝ շունը չի կրցաւ վնասել, քանի որ չի կրցաւ հասնիլ ինծի: Անոր տէրը ամուր բռնած էր փոկը:

Այդ սարսափելի հանդիպումը, ինծի յիշեցուց, որ որպէս Յիսուսի հաւատացողներ, Սատանան՝ նոյնպէս «փոկով կապուած է», բայց կը սպասէ յարձակելու, եթէ մենք իրեն հնարաւորութիւնը տանք: Ա. Պետրոսի նամակին մէջ, Պետրոս առաքեալ կը զգուշացնէ մեզ. «Ձեր ոսոխը՝ Չարախօսը՝ կը շրջի մռնչող առիւծի պէս, փնտռելով թէ ո՛վ կ'լլէ: Դիմադրեցէ՛ք անոր» (Հմ. 8): Ան կը մռնչէ, կը մռմռայ եւ կը հարուածէ, բայց մենք կրնանք ամուր կանգնիլ մեր հաւատքին մէջ եւ «դիմադրել անոր» (Հմ. 9):

Երբ զգաս, որ թշնամին կը ծաղրէ կամ կը փորձէ քեզ, յիշէ՛ սա՛. ան համահաւասար չէ՛ Յիսուսի: Մենք կրնանք աղաղակել Անոր, եւ Ան կ'օգնէ մեզի: Ան «քեզ կատարեալ կ'ընէ, կ'ամրացնէ, կ'ուժովցնէ եւ անսասան հիմերու վրայ կը դնէ» (Հմ. 10):

Երբ մենք հոգեւոր յարձակումի ենթարկուինք, կրնանք ընտրել հաւատքը՝ վախի փոխարէն, քանի որ Յիսուս մի՛շտ մեզի հետ է:

Աղօթք - Սիրելի Յիսո՛ւս, շնորհակալ եմ, որ մի՛շտ կողքիս ես՝ նոյնիսկ ամենածանր փորձութիւններու ժամանակ: Ամէն:
Երբ թշնամին կը ծաղրէ ու կը փորձէ քե՛զ, ինչպե՛ս կը պատասխանես: Ինչպե՛ս կրնաս կեդրոնանալ Քրիստոսի վրայ՝ հոգեւոր մարտերու ժամանակ:

Դուք ստացաք որդեգրութեան Յոգին: [Յոմ. 8. 15]

ԻՆՉ ԿՈՒՉԷ ՁԵՐ ՀԱՅՐԸ

Սթիվ (Steve) վերցուց իր շղթայասղոցը (chainsaw) եւ գնաց դէպի անտառ: Այդ պահուն՝ ան լսեց իր հինգ տարեկան որդին՝ Օգոստոսին. «Սպասէ՛ ինձի, հայրիկ: Ես կ'ուզեմ հետդ գալ»: Վերցնելով իր խաղալիքէ շղթայասղոցը, աշխատանքի ձեռնոցները եւ ականջակալները, Օգոստոս հետեւեցաւ Սթիվին՝ դռնէն դուրս: Սթիվ քանի մը գերաններ դրաւ ապահով հեռաւորութեան վրայ: Տասը վայրկեաններ ետք, Օգոստոս արդէն մաշած ու յոգնած էր: Կեղծ սղոցով գերաններ կտրելը՝ դժուար աշխատանք է: Բայց ան ուրախ էր «օգնելու» իր հայրիկին, իսկ հայրը՝ ուրախ էր որդիին հետ ժամանակ անցընելով:

Այսպէ՛ս չէ՞ մեր երկնաւոր Հայրը: Կ'ենթադրենք, որ կ'օգնենք: «Սպասէ ինձի, Հայրիկ: Պէտք է առնեմ իմ շղթայասղոցս»: Բայց մեր շղթայասղոցը՝ մեզի համար ամենաքիչն է: Մենք չենք օգներ ա՛յնքան, որքա՛ն կը կարծենք: Աստուած շատ աւելին կը մտածէ առաջին բաժնին մասին. «Սպասէ՛ ինձի, Հայրիկ»: Ան մեր աշխատանքի արդիւնքին կարիքը չունի:

Եթէ դո՛ւն կը սիրես իր որդին՝ Յիսուսը, Աստուած որդեգրած է քեզ՝ իր ընտանիքին մէջ եւ տուած է իր Հոգին: «Քանի որ դուք չստացաք ստրկութեան հոգին՝ դարձեալ վախնալու համար, հապա ստացաք որդեգրութեա՛ն Հոգին» (Հմ. 15): Դո՛ւն ծառայ մը չես, որ իր տեղը կը վաստկի՝ քրտնաջան աշխատանքով: Դուն երեխայ մըն ես, որու կը սիրէ Հայրը, անկախ ամէն ինչէ: «Տեսէ՛ք թէ Հայրը ինչպիսի՛ սէր շնորհեց մեզի, որպէսզի մենք Աստուծոյ գաւակներ կոչուինք» (Ա. Յովհ. 3. 1):

Մեր երկնաւոր Հայրը կ'ուրախանայ, երբ մենք կը ծառայենք իրեն: Բայց Ան մեր կարիքը չունի: Ան պարզապէ՛ս կ'ուզէ մեզ:

Աղօթք - Երկնաւոր Հայր, շնորհակալ եմ Զեզի, որ զիս որդեգրեցիր Զու ընտանիքիդ մէջ, որպէս Զու գաւակ: Ամէն: **ԻՆչի մասին կը մտածես, երբ նկատի առնես՝ թէ ինչ կ'ուզէ Աստուած քեզմէ: Ինչպե՞ս այսօր ժամանակ պիտի անցընես իր հետ:**

Ցնձա՛, ո՛վ երկինք, որովհետև Տերը ըրաւ ասիկա: ... Տերը փրկեց Յակոբը: [Ես. 44. 23]

ԱՆՅՈՅԱ ԽՆԴԻՐՆԵՐ

Իրավիճակը անյոյս էր՝ էյմիի (Amy) եւ Ալընին (Alan) նորածին աղջկան՝ ձէմի (Jem) համար: Ծնած ըլլալով trisomy-18 ախտով, կ'ակնկալուէր՝ որ ան կը մեռնի քանի մը օրէն կամ շաբաթէն: Բժիշկը պաղարիւն ըսաւ. «Իմաստ չկայ՝ զինք թարմանելու»: Սակայն, մայրը ըսաւ. «Ես իրեն համար աւելի մեծ երազներ ունիմ »: Անոնք ձէմին տուն տարին ու սիրեցին եւ անոնք աղօթեցին:

Վեց տարիներ ետք, ձէմ պէտք ունեցաւ վիրահատութեան, յայտնաբերուած մեծ ուռը հանելու համար: Յետոյ՝ նոյն բժիշկը միջամտեց ու ըսաւ: «Գիտեմ թէ ի՛նչ կը մտածէք, բայց ես կը խնդրեմ ձեզմէ՛ երկրորդ առիթ մը»: Ան ընդունեց թէ ինք սխալած էր ձէմի մասին: Ան ըսաւ. «Կ'ուզեմ ուենալ երկրորդ առիթ մը փրկութեան հնարաւորութեան»: Էյմի եւ Ալըն կրնային ըսել՝ ո՛չ: Բայց հասկցան Աստուծոյ ներուժին գորութիւնը:

Հին Կտակարանի մարգարէները, յաճախ կը բերէին Աստուծոյ դատապարտութեան պատգամը: Սակայն՝ այս պատգամին մէջ հիւսուած կա՛ր՝ Աստուծոյ սիրոյն, ներուժին եւ փրկութեան անգուսպ նիւթերը: Եսայի մատնաշեց՝ Յուզայի մեղքերը (44. 6-20), բայց յանկարծ շեղեց իր ուշադրութիւնը: Խօսելով Աստուծոյ խօսքը, ան ըսաւ. «Վերադարձի՛ր ինձի, որովհետեւ քեզ փրկեցի» (Հմ. 22): Աստուծոյ նկարագրերը թոյլ պիտի չի տայ Զինք, որ լքէ Իր ժողովուրդը: Ան ըսաւ. «Ես ստեղծեցի քեզ, ... ինձմէ՛ պիտի չմոռցուիս» (Հմ. 21): Եզրակացութիւնը. «Ցնձա՛, ո՛վ երկինք, որովհետեւ Տէրը ըրաւ ասիկա: ... Տէրը փրկեց Յակոբը» (Հմ. 23):

Ձէմի վիրահատութիւնը ուռ չգտաւ: «Բժիշկը ըսաւ. «Հրա՛շք մը»: Աղօթքի գորութիւնը: Մեզ փրկող Աստուծոյ գորութիւնը:

Աղօթք - Երկնաւոր Դայր, շնորհակալ եմ՝ այն Աստուածը ըլլալուդ համար, որ կը հրաւիրէ զիս՝ վերադառնալու Զեզի: Ամէն: Ի՞նչ «անյոյս» խնդիր գիտես: Ինչպէ՛ս տեսած ես Աստուծոյ փրկութիւնը՝ գործնական գետնի վրայ՝ քու կեանքիդ մէջ:

Մենք ... կը փոխուինք նոյն պատկերին՝ փառքէ փառք, որպէս թէ Տէրոջ Դոգիին միջոցով: [Բ. Կորնթ. 3. 18]

ՓՈՒՆՈՒԱԾ ԶՈԳԻՈՎ

Երբ Նիլլ Տակլըս (*Neil Douglas*) բարձրացաւ դէպի Իրլանտա գացող իր թռիչքը, տեսաւ թէ իրեն վերապահուած աթոռին վրայ ուրիշ ճամբորդ մը նստած էր, ուստի՝ սկսաւ զրոյց մը, որպէսզի լուծէ ստեղծուած հարցը: Երբ ճամբորդը բարձրացուց իր գլուխը՝ պատասխանելու համար, Նիլլ դէմ առ դէմ ելաւ իր նմանակին: Նայող ճամբորդները՝ կը ծիծաղէին անոնց նմանութեան վրայ, մինչ անոնք ինքնանկար (*selfie-սելֆի*) կ'առնէին: Աւելի ուշ՝ անոնք դարձեալ իրարու հանդիպեցան, երբ տեղաւորուած էին նոյն հիւրանոցին մէջ: Իսկ երրորդ անգամ՝ տեղւոյն սրճարանին մէջ: Յաջորդ առաւօտ՝ անոնք յայտնաբերեցին, որ իրենց ինքնանկարը վարակիչ դարձած էր ընկերային համացանցին վրայ, իրենց ապշեցուցիչ դէմքի նմանութեան պատճառով:

Ուրիշ մարդու մը հետ նմանութիւն ունենալը՝ անակնկալ է մեզմէ անոնց համար, որոնք չունին կենսաբանական երկւորեակներ, բայց Աստուածաշունչը կ'ըսէ, որ մենք կը սկսինք աւելի նմանիլ Աստուծոյ, երբ հետեւինք Իրեն: Հին Կտակարանին մէջ Մովսէսի դէմքը փոխուեցաւ՝ Աստուծոյ հետ իր երես առ երես հանդիպումէն, այնքա՛ն, որ «Իսրայէլի որդիները չէին կրնար ակնապիշ նայիլ Մովսէսի երեսին՝ անոր դէմքին պայծառութեան պատճառով» (Բ. Կորնթ. 3. 7, տե՛ս Ել. 34. 33-35):

Այսօր մենք կը տեսնենք Յիսուսի փառքը՝ բացայայտուած այն մարդոց մէջ, որոնք «կը փոխուին նոյն պատկերին» Հոգիին ծառայութեան միջոցով (Բ. Կորնթ. 3. 18, տե՛ս 3. 8): Աստուծոյ հանդէպ մեր աճող գիտելիքը եւ սէրը կը հագեցնեն բարոյական եւ հոգեւոր վերափոխումներու, որոնք տեսանելի են ինչպէս ներքին՝ նոյնպէս ալ արտաքին: Երբ Աստուած «կը փոխէ» մեր սիրտերն ու մտքերը, այդ ակնյայտ է մեզի հետ ճանապարհող ճամբորդներուն համար՝ այս կեանքի ճամբորդութեան ժամանակ:

Աղօթք - Աստուա՛ծ, շնորհակալ եմ՝ որ կը շարունակես կերպարանափոխել զի՛ս՝ Զու նմանութեան մէջ: Ամէն:
Ինչպէ՛ս Յիսուսի ճանչնալը՝ փոխած է քեզ: Ի՞նչ բան Ան կ'աճեցնէ այսօր քու մէջը:

Իմ ճամբաներս ձեր ճամբաներեն բարձր են, եւ իմ մտածումներս՝
ձեր մտածումներեն: [Ես. 55. 9]

ԿԱՌՉԻՆԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՍՏՈՒՄՆԵՐՈՒՆ

Ուենտին (*Wendy*)՝ քիչ մը ինքզինք դուրս կը զգար: Ծաշի
ընդմիջումի ժամանակ՝ իր գործատէրը տուրմեր ձգած էր
բոլորին գրասեղաններուն վրայ, բացի իր: Շփոթուած՝ ան
ողբաց ընկերոջ՝ ըսելով. «Ինչո՞ւ զի՛ս դուրս ձգեց»:

Երբ հարցուցի՛ն, գործատէրը բացատրեց. «Այդ տուրմերը՝
տակաւին լաւ են, սակայն ատոնք արդէն որոշ ժամանակէ մը ի վեր
կան: Ուենտին՝ յղի է, ո՛ւր տի ես պարզապէս կ'ուզէի աւելի զգուշ
ըլլալ»: Յետոյ ան խնդաց: «Ի՞նչ կը վերաբերի մնացածին ...»:

Գրասենակի այդ փոքրիկ միջադէպը՝ կատակի դարձաւ,
բայց ստիպեց գիտ մտածելու այն մասին, թէ ինչպէ՛ս մենք սխալ
կը կարդանք Աստուծոյ մտադրութիւնները մեր սահմանափակ
հասկացողութեան եւ ընկալման պատճառով: Մենք նոյնի՛սկ
կրնանք հաւատալ, որ անարդար վերաբարձումներ զո՛հ դարձած
ենք՝ մոռնալով, որ Աստուած մի՛շտ մեր լաւագոյն շահերը կը
մտածէ: Մի՛շտ:

Եսայի 55. 8-9-ն կը յիշեցնէ մեզի, որ չնայած թէ կրնանք
լիովին չհասկնալ Աստուծոյ խորհուրդները ու ճամբաները,
մենք կրնանք վստահ ըլլալ, որ ատոնք «աւելի բարձր են, քան
մեր ճամբաները» (Հմ. 9): Մեր խորհուրդները յաճախ ազդուած
են եսասիրական ցանկութիւններէ. Իրը՝ կատարեալ է, կարեկից
եւ արդար: Այսպիսով, նոյնի՛սկ այն ժամանակ, երբ ամէն ինչ
լաւ չի թուիր ըլլալ, մենք կրնանք վստահ ըլլալ, որ Աստուած
կը տրամադրէ այն, ինչ որ մեզի իսկապէ՛ս անհրաժեշտ է (Հմ.
1-2), քանի որ Ան սիրառատ է եւ հաւատարիմ՝ Իր սեփական
յաւիտենական խոստումին մէջ (Հմ. 3): Եկէ՛ք «գոչե՛նք Անոր,
քանի որ մօտ է» (Հմ. 6), գիտնալով, որ Ան երբէ՛ք չի լքեր մեզ:

Աղօթք - Հաւատարիմ Աստուած, Դուն գիտես՝ երբեմն ինձ
ամա՛սն կը զգամ Քու օրհնութիւններուդ եւ կը կասկածիմ Քու
սիրոյդ հանդէպ: Կը խնդրե՛մ, օգնէ ինձի վստահելու Քեզի եւ
ամուր կառչելու Քու յաւիտենական խոստումներուդ: Ամէն:
**Աստուծոյ տուած խոստումներուն կարգի՛նք, երբ կեանքը
անարդար կը թուի ըլլալ: Աստուած կու տայ մեզի մխիթարութիւն
եւ վստահութիւն:**

Յիշեցո՛ւր անոնց՝ որ ... ըլլան ազնիւ, բոլորովին հեզութիւն ցոյց տալով ամէն մարդու: [Տիր. 3. 1-2]

Ո՛Չ ՍՈՎՈՐԱԿԱՆ ՄԱՐԴԵՐ

Իմ դրամատանս պատին վրայ դրուած յայտարարութիւնը կ'ըսէ, որ ընկերակցական սկզբունքները կարելի է ամփոփել մէկ բառով՝ քաղաքավարութիւն: Եւ որքա՛ն լաւ էր՝ քաղաքավարութիւն գտնել ծառայողին մօտ, որ օգնեց ինծի:

Դաժան եւ անբարիացակամ աշխարհի մէջ՝ քաղաքավարութեամբ առաջնորդուելը՝ մեծ գաղափար է: Այս գաղափարը մենք կը գտնենք Պօղոս առաքեալի՝ իր ընկերոջ Տիտոսին ուղղած նամակին մէջ: Ան յանձնարարեց Տիտոսին, յիշեցնելու իր ժողովուրդին՝ որ «ո՛չ մէկուն հայհոյեմ, ըլլան ո՛չ թէ կռուազան, հապա՛ ազնիւ, բոլորովին հեզութիւն ցոյց տալով ամէն մարդու» (Տիր. 3. 2): Քաղաքավարութեան այս գաղափարը նաեւ կը թարգմանուի որպէս՝ «խաղաղասէր եւ հոգատար» կամ «ցոյց տալով ամէն նկատառում»:

Ուրիշներու մեր վերաբերմունքը ցոյց կու տայ՝ թէ արդե֞ք անոնց կը տեսնենք որպէս Աստուծոյ պատկերը կրողներ, թէ ո՛չ: Գ. Ս. Լուիս (C. S. Lewis) իր «Փառքին Ծանրութիւնը» (The Weight of Glory) գիրքին մէջ կ'ըսէ. «Չկան սովորական մարդեր: Դուք երբէ՛ք չէ՛ք խօսած սովորական մահկանացուներու հետ»: Լուիս ակնկալեց յաւիտենականութիւն, ուր մենք՝ կա՛մ կը վկայենք Աստուծոյ ներկայութիւնը, կա՛մ ընդմիջտ կը վտարուինք Իրմէ: Այսպիսով, ան կը յիշեցնէ մեզի. «Անմահներն են, որոնց հետ մենք կը կատակենք, կ'աշխատինք, կը զուարճանանք, կը նուաստացնենք եւ կը շահագործենք. անմահ սարսափներ կամ յաւիտենական շքեղութիւններ»:

Թո՛ղ որ մենք թոյլ տանք, որ Հոգին հնարաւորութիւն տայ մեզի վերաբերիլ շրջապատողներուն այնպէ՛ս, ինչպէս անոնք իրականութեան մէջ Աստուծոյ պատկերը կրողներն են:

Աղօթք - Սիրելի Աստուած, հեշտ է յուսախաբուիլ մարդոցմէ:

Կը խնդրե՛մ՝ տո՛ւր ինծի համբերատար հո՛գի եւ բարութեան սի՛րտ, որպէսզի կարենամ բոլորին արժանապատիւ կերպով եւ քաղաքավարութեամբ վարուիլ: Ամէն:

Քաղաքավարութեան բացակայութիւնը ժխտական ազդեցութիւն կ'ունենայ: Ուստի միտումնաւոր՝ աւելի քաղաքավար ըլլանք:

Ա՛լ ո՛չ Յրեայ կայ, ո՛չ Յոյն. ո՛չ ստրուկ կայ, ո՛չ ազատ. ո՛չ արուկայ, ո՛չ էգ. որովհետեւ դուք բոլորդ մէկ էք Քրիստոս Յիսուսով: [Գաղ. 3. 28]

ՔՐԻՍՏՈՍՈՎ ՄԷ՛Կ

Տիլիս Ուիթլի (*Philis Wheatley*)՝ առաջին հրապարակուած Ափրիկեցի Ամերիկացի բանաստեղծը, օգտագործեց Աստուածաշունչի նիւթեր՝ Յիսուսի հաւատացողներուն համոզելու, որ ջնջեն ստրկութիւնը: Արեւմտեան Ափրիկէի մէջ՝ 1753 թուականին ծնած՝ Ուիթլին, ընդամէնը եօթ տարեկանին վաճառուած էր ստրկավաճառին: Շատ արագ առանձնանալով որպէս նշանաւոր ուսանողուհի՝ ան վերջապէ՛ս ապահովեց իր ազատագրումը՝ 1773 թուականին: Իր ուսանաւորներուն եւ նամակագրութիւններուն մէջ, Ուիթլին իր ընթերցողներուն կը մղէր՝ ընդունիլ բոլոր մարդկանց հաւասարութեան Սուրբ Գրային հաստատումը: Ան գրեց. «Իւրաքանչիւր մարդու կուրծքին մէջ՝ Աստուած դրած է Սկզբունք մը, որը մենք կ'անուանենք Ազատութեան Սէր. Այդ՝ անհամբեր է ճնշումներու հանդէպ, եւ կը ձգտի Ազատագրումի համար ... նոյն սկզբունքը՝ կ'ապրի մեր մէջ»:

Աստուծոյ առջեւ հաւասարութիւնը՝ ճշմարտութիւն է, ընդգծուած Պօղոսի կողմէ, երբ ան գրեց. «Ա՛լ ո՛չ Հրեայ կայ, ո՛չ Յոյն. ո՛չ ստրուկ կայ, ո՛չ ազատ. ո՛չ արուկայ, ո՛չ էգ. որովհետեւ դուք բոլորդ մէկ էք Քրիստոս Յիսուսով» (Գաղ. 3. 28): Քանի որ մենք «բոլորս Աստուծոյ որդիներ ենք՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատքով» (Հմ. 26), տարբերութիւնները, ինչպիսին են՝ ցեղային, ազգային, սեռային կամ ընկերային կարգավիճակը, պէտք է՛ խորականութեան առաջնորդեն եկեղեցիին մէջ:

Սուրբ Գիրքը կը սորվեցնէ, որ տարբեր ժողովուրդներ, որոնք միաւորուած են Քրիստոսի հանդպ իրենց ունեցած հաւատքին միջոցով, լաւագոյնս կ'արտացոլացնեն Աստուծոյ սիրտը, որ իր ծրագիրն է յաւիտենական կեանքի համար: Այժմ այդ իրականութիւնը կրնայ օգնել մեզի՝ նշելու բազմազանութիւնը մեր հաւատքի համայնքներուն մէջ:

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, օգնէ ինձի սիրելու եղբայրներս եւ քոյրերս՝ այն միասնութեան միջոցով, որ հնարաւոր դարձած է Զեզմով: Ամեն:

Բազմազանութիւնը՝ աւելի լաւ ձեւով կը ներկայացնէ Աստուած, ուստի կ'արժէ ընդունիլ եւ գնահատել զայն:

Նայեցէ՛ք երկինքի թռչուններուն, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն, ո՛չ ալ կը ժողվեն ամբարի մէջ. բայց ձեր երկնաւոր Յայրը կը կերակրէ զանոնք: [Մատթ. 6. 26]

ԵՒ ԱՍՏՈՒԱԾ ՂՐԿԵՑ ... ՑԱՅԳԱԹԻԹԵՈՒ

«Աաա՛», աղջիկս ճչաց: «Հայրիկ: Վեր կա՛ց շուտով եկուր»:

Գիտցայ, թէ ի՛նչ էր եղածը՝ ցայգաթիթեռ: Ամեն գարնան՝ այս փոշոտ միջատներու մեծ խումբ մը՝ կը գաղթեն Նէպրասքայէն (Nebraska) Գոլօրատոյի (Colorado) լեռները, ուր կ'անցընեն ամառը: Ամէն տարի՝ մենք կը նախապատրաստուինք անոնց ժամանումին: Այս տարի՝ յատկապէս՝ վատ էր:

Մարդկանց համար ջրաղաց ցայգաթիթեռը, անցանկալի վնաս հասցնող միջատներն են, որոնք յաճախ կը թռչին երեսիդ: Բայց թռչուններուն համար, այդ խնձոյք է: Փոքր հետազօտութիւն մը ընելով՝ ես իմացայ, որ ատոնք անհաւանական սնունդ կ'ապահովեն՝ տարածաշրջանի ծիծեռնակներուն համար: Որքա՛ն ալ՝ որ ատոնք զայրացնող են, այս միջատները՝ իսկակական «մանանա» են թռչուններուն համար:

Ձե՛մ գիտեր, եթէ Իսրայէլ ցայգաթիթեռ գաղթականներ ունեցած է՝ Յիսուսի օրերուն: Բայց Քրիստոս ուշադրութիւն դարձուց՝ այնտեղի թռչուններուն Աստուծոյ կողմէ տրուած նախատեսութեան համար ըսելով Լերան Քարոզին մէջ. «Նայեցէ՛ք երկինքի թռչուններուն, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն, ո՛չ ալ կը ժողվեն ամբարի մէջ. բայց ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք: Դուք աւելի չէ՞ք արժեր անոնցմէ» (Մատթ. 6. 26):

Այս օրերուն՝ ես ա՛յլ կերպ կը նայիմ ցայգաթիթեռներուն: Ո՛չ թէ որպէս կեղտոտ վնասակար միջատներ, այլ որպէս յիշեցումներ Աստուծոյ՝ Իր ստեղծագործութեան հանդէպ ունեցած նախատեսութեան մասին եւ որպէս կենդանի փոխաբերութիւն Իր նախատեսութեան՝ ինծի համար ալ: Եթէ Աստուած այդքա՛ն առատօրէն կը տրամադրէ ծիծեռնակներուն, որքա՞ն աւելի Ան կը հոգայ մեր մասին:

Աղօթք - Յայր, Զու տրամադրութեանդ գեղեցկութիւնը՝ միշտ կը ցուցադրուի: Շնորհակալ եմ՝ Զու ստեղծագործութեան հարստութեան համար: Կը խնդրե՛մ տո՛ւր ինծի՝ աչքեր, որպէսզի տեսնեմ Զու ձեռքիդ գործը եւ յիշեցնեմ ինծի՝ Զու բարութիւնը: Ամէն:

Դուն մաս կը կազմես Աստուծոյ ստեղծագործութեան մէջ, ուր կ'ապրիս: Թող այս ըլլայ յիշեցում մը, որ Ան կը հոգայ քեզ:

Յիսուս, գիտնալով թէ պիտի գան յափշտակելու զինք՝ որպէսզի թագաւոր ընեն զինք, դարձեալ լեռը գնաց՝ առանձին: [Յովհ. 6. 15]

ԱՆՍԱՍԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԻՆ

1957 թուականին նկարահանուած «Գուէյ Գետին Վրայի Կամուրջը» (*The Bridge on the River Kwai*) պատերազմական ֆիլմը ու այնքա՛ն տարածուեցաւ, որ շատեր հաւաքուեցան Թայլէնտի՝ Գանչանապուրիի (*Kanchanaburi, Thailand*) մէջ, փնտռելու համար իրական երկաթէ կամուրջը: Անոնք գտան կամուրջը, բայց՝ Գուայի վրայ չէր. ֆիլմին մէջ գետին անունը՝ սխալ էր: Շուտով, սակայն, Մէյ Գլօնկ (*Mae Klong*) գետի այդ հատուածը վերանուանուեցաւ Գուաի Եէյ (*Գուէյ*) (*Kwae Yai - Kwai*), որպէսզի համապատասխանէ մարդոց ակնկալութեան:

Յիսուս՝ երբէ՛ք թոյլ չի տուաւ, որ ուրիշներու ակնկալութիւնները ստիպեն զԻնք տատանուելու Իր Աստուածային առաքելութեան մէջ: Մարդիկ հաւաքուեցան տեսնելու զԻնք, որովհետեւ լսեցին Իր կատարած նշաններուն եւ հրաշքներուն մասին (Յովհ. 6. 2): Երբ անոնք գտան զԻնք եւ հաւատացին, որ Ինք է խոստացուած Մեսիան, ուզեցին՝ որ Ան ըլլայ մարտական առաջնորդ, որպէսզի փրկէ զիրենք Հռոմէական իշխանութենէն: Յովհաննէս կ'ըսէ. «Յիսուս, գիտնալով թէ պիտի գան յափշտակելու զինք որպէսզի թագաւոր ընեն զինք, դարձեալ լեռը գնաց՝ առանձին» (Հմ. 15):

Չնայած ճնշումներուն՝ իրենց ուզած ձեւով ազատելու մարդոց, Քրիստոս վճռական հետեւեցաւ Աստուծոյ ծրագիրին՝ ազատելու անոնց այնպէս, ինչպէս անոնք պէտք էր փրկուէին (Կող. 1. 13)՝ ո՛չ թէ երկրային դժուարութիւններէն, այլ «մեղքի եւ մահուան օրէնքէն» (Հռոմ. 8. 2):

Յիսուսի անսասան կամքը՝ ապահովելու ա՛յն, ինչ որ պէտք է մեզի, մենք կրնանք վստահիլ Իրեն՝ ամէն պարագաներու մէջ: Ամէն պարագաներու մէջ, Անոր ծրագիրը միշտ աւելի լաւ է, քանի որ՝ Ան չի տատանիր մեզ փրկելու Իր կամքով:

Աղօթք - Սիրելի Աստուած, որովհետեւ Դուն հաստատակամ եւ անսասան ես փրկելու Քու կամքիդ մէջ, գիտե՛մ թէ կրնամ վստահիլ Քեզի, որ լաւագոյնը պիտի ընես ինձի համար: Ամեն: **Եթէ զգաս ու խորհիս թէ Աստուծոյ տուածները քու ակնկալութեանդ համեմատ չեն, աղօթքով վստահէ Անոր անսասան կամքին:**

Տերը իմ ժայռս, բերդս ու փրկիչս է: Աստուածս իմ վեմս է, ես անոր կ'ապաւիւնիմ: [Մաղմ. 18. 2]

ԱՍՏՈՒԾՈՅ ՄՕՏ ԶԳԷ

Բարձրանալով մագլցելու պատին վրայ՝ Սառան կրնար զգալ, որ խուճապը կ'աւելնար, երբ անոր թուլցած մատները սկսան կորսնցնել իր ուժը՝ բռնելու բռնակները: Ան խորհեցաւ՝ թէ ինչքա՞ն ուժգին պիտի իյնար գետին:

Բայց ցուցմունք տուողը՝ կը շարունակէր վարէն վստահութեան կոչեր հնչեցնել: Երբ պարանը ամրացնողը՝ կապուեցաւ ճախարակի միջոցով Սառայի կապուած պարանին միւս ծայրը, իր ծանրութիւնը պիտի պահէր Սառային, եթէ իյնալու ըլլար: Ան գոռաց. «Ես քեզմէ շատ աւելի ծանր եմ, ձգէ՛ ձեռքդ»:

Սառա այդպէս ըրաւ ու ազատ արձակուեցաւ եւ ապահով կախուած մնաց օդին մէջ:

Այս դէպքը Սառային տուաւ Մաղմոս 18. 2-ին մէջ Աստուծոյ պատկերին նոր տեսանկիւն մը. «Տէրը իմ ժայռս, բերդս ու փրկիչս է: Աստուածս իմ վեմս է, ... իմ ամրոցս է»: Սառա՝ նկատեց. «Աստուած շատ աւելի ծանր է, քան իմ բոլոր խնդիրներս: Ես կրնամ ազատուիլ անհանգստութիւններէս ու վախերէս ու Ան կը բռնէ՛ զիս»:

Դաւիթ թագաւոր՝ երգեց 18-րդ Մաղմոսը, երբ Աստուած ազատեց զինք «յորդառատ» ջուրերէն, ասոնք էին իր «հզօր թշնամիները», որոնք կը ցանկային իրականացնել իրեն համար «աղետալի օրեր» (Հմ. 16-18): Նոյնիսկ եթէ անոր դժուարութիւնները չվերնային, ան գիտէ՛ր, թէ կրնայ վստահիլ իր ամենահզօր Փրկիչին, եւ Աստուած ամուռ բռնած է զինք:

Աղօթք - Սիրելի Հայր, շնորհակալութիւն, որ կրնամ ձգել իմ բոլոր մտահոգութիւններս, վախերս եւ նեղութիւններս՝ իմանալով, որ Դուն լիովին կը վերսկսես իմ կեանքիս, եւ կը պահես զիս իյնալէ: Ամէն:

Ի՞նչ կը նշանակէ գործնական արումով «ձգել» մտահոգութիւնները Աստուծոյ ու յանձնել մեր բոլոր կասկածներն ու վախերը Իրեն:

Թթափե՛նք ամեն ծանրաբեռնում, եւ մեղքը՝ որ դիւրաւ կը պաշարէ մեզ: [Եբ. 12. 1]

ԽՃՃՈՒԱԾ՝ ՊԱՇԱՐՈՒԱԾ

Չմերուկի որթատունկերը՝ պատած էին պարտէզս՝ ամբողջութեամբ: Անոնք օձապտոյտ անցան քարէ արահետներէն, բարձրացան ցանկապատին վրայէն եւ ամենավատը փորձեցին խեղդել իմ սիրելի բանջարեղէններս: Գիտէի, որ պարտէզը պիտի չի բարգավաճի, եթէ քայլեր չառնէի: Ուստի, իրիկուն մը՝ գործի լծուեցայ ցողուններէն ազատ արձակելով՝ ճիւղերն ու տերեւները: Երբ կծիկները նորէն աճեցան, շարունակեցի հեռացնել զանոնք, մինչեւ որ բանջարեղէնի բոյսերը՝ վերջապէս հասունցան եւ տուին լուրիկ ու պղպեղ:

Մեղքերը, ինչպիսին են՝ ազահուլութիւնը, ցանկութիւնը եւ ատելութիւնը, կրնան գրաւել մեր կեանքը, ինչպէս որթատունկները, որոնք փորձեցին տիրել իմ պարտէզիս: Սխալ միտքի սերմը կրնայ զարգանալ, մինչեւ որ հսկէ մեր ցանկութիւններուն եւ արարքներուն, ինչպէս «մեղքը՝ որ դիւրաւ կը պաշարէ մեզ» (Եբ. 12. 1) եւ ետ կը պահէ մեզ՝ հոգեւոր աճումէն:

Եբրայեցիսին հեղինակը՝ կը խրախուսէ մեզ, որ «թօթափե՛նք ամէն ծանրաբեռնութիւն, եւ մեղքը՝ որ դիւրաւ կը պաշարէ մեզ», որպէսզի կարենանք «համբերութեամբ վազել մեզի առաջարկուած մրցարշաւը» (Հմ. 1): Ազատ արձակուելու համար, մենք պէտք է զիտակցինք, որ օգնութեան կարիքը ունինք՝ մեղքին յաղթահարելու համար: Սա՛՛ կրնայ դժուար ըլլալ, եթէ մենք մեզ եւ ուրիշները համոզենք, որ այդ մէկը լուրջ խնդիր է:

Երբ մենք անկեղծութեամբ կ'ընդունինք խնդիրը, Տէր Յիսուս կ'ողջունէ մեր խոստովանութեան աղօթքները եւ անմիջապէս կը ներէ մեզի (Ա. Յովհ. 1. 9): Ան կրնայ ցոյց տալ մեզի, թէ ինչպէ՞ս փոխելու ենք մեր կեանքի օրինաչափութիւնները եւ Սուրբ Հոգիին զօրութեամբ օգնել մեզի՝ յաղթահարելու այն կապանքը, որ կը խանգարէ մեզի ծաղկելէ:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ ներէ՛ ինձի այն արարքները եւ վերաբերմունքները, որոնք կը վշտացնեն Զեզ եւ օգնէ ինձի փոխուիլ այս պահէն սկսած: Ամէն:

Մեղքեր կան՝ որոնք կը ստիպեն մեզ անընդհատ իյնալու եւ սայթաքելու: Սակայն Աստուած կ'ուզէ որ լուծենք այս խնդիրը:

Իմ ոչխարներուս մնացորդը պիտի հաւաքեմ ... եւ զանոնք իրենց արօտավայրը պիտի վերադարձնեմ, ուր պիտի աճին եւ շատնան: [Եր. 23. 3]

ԱԶԱՏՈՂ ԱՍՏՈՒԱԾԸ

Սկովտիայի՝ Պրօրա (Brora) քաղաքի խորտուբորտ ժայռին տակ, ոչխար մը ազատուելու կարիքը ունէր: Թակարդուած՝ հովիտի մը մէջ, որ շրջապատուած էր՝ մէկ կողմէն սեպ եւ հաստատ ժայռով, իսկ միւս կողմէն՝ հսկայ ովկիանոսով, ոչխարը երկու երկար տարիներ մինակ մնացած էր: Չնայած քանի մը ազատելու փորձերուն, ո՛չ ոք կրցած էր հասնիլ անոր, մինչեւ Գէմմի Ուիլսըն (Cammy Wilson) անունով վճռակամ ազարակապան մը եւ իր երեք ընկերները յաջողութեամբ կատարեցին վտանգաւոր ազատագրական արարքը: Խուճախ երեք անգամները զգուշութեամբ իջան ժայռէն մօտ 820 ոտնաչափ վար՝ զայն վերցնելու համար, օգտագործելով ճախարակ եւ մեծ քաջութիւն՝ դուրս բերելու իր ծանր վիճակէն:

Վճրակամ եւ կարեկից ազարակապանը եւ խուճախը՝ կ'արտացոլացնեն մեր սիրող Հօր կարեկցութիւնը, ինչպէս որ նկարագրուած է Երեմիա 23. 1-3-ին մէջ: Մարգարէն դատապարտեց Յուդայի մեղաւոր առաջնորդներուն, որպէս հովիւներ, որոնք «կը ցրուեն եւ կը կորսնցնեն հօտը» (Հմ. 1): Աստուած՝ Երեմիայի միջոցով յայտարարեց, որ իր անօգնական մարդոց հետ վարուելու անողոք ձեւին շնորհիւ՝ Ան պիտի «պատժէ անոնց» (Հմ. 2): Ան տեսաւ իր ցրուած հօտին ծանր վիճակը եւ խորապէս մտահոգուած էր՝ անոնց համար: Աստուած ո՛չ միայն մտահոգուած էր, այլ նաեւ ըսաւ, որ սիրով պիտի հաւաքէ իր ոչխարները աքսորի վայրերէն եւ կը բերէ ապահով եւ առատ տեղ մը (Հմ. 3):

Երբ մենք մեզ կորսուած կը զգանք, թակարդուած կամ մեկուսացած, մեր երկնաւոր Հայրը՝ կը տեսնէ մեր դժուարութիւնները եւ չի ձգեր մեզ արգելափակուած: Ան գործնականապէս կը փորձէ փրկել եւ վերականգնել մեզ:

Աղօթք - Երկնաւոր Հայր, շնորհակալ եմ Զեզի՝ Բարի Հովիւը ըլլալուդ համար: Ամեն:

Դիւրին է մեր հաւատքի ճամբուն վրայ՝ հոգեւորապէս թակարդուիլ: Սակայն ուրախ ըլլալ կ'արժէ, որովհետեւ Աստուած կը քաջալերէ մեզ եւ կը վստահեցնէ, որ Աստուած կը տեսնէ մեր մղած ճանապարհները:

Ճշմարտապես ձե՛ր Աստուածն է ... գաղտնիքները յայտնողը, բանի որ դուև կրցար այս գաղտնիքը յայտնել: [Դան. 2. 47]

ՎԱՐԿԸ ԱՍՏՈՒԾՈՅ

Հարիւրաւոր հիւրեր լեցուցին պարասրահ մը՝ նշելու ո՛չ չափաբեր կազմակարպութեան յիսուն ամեակը եւ յարգելու այս միջոցարումը իրականացնողները, յատկապէս՝ անոնց, որոնք աշխատած են տասնամեակներ: Հիմնադիր անդամ մը երախտագիտութեամբ պատմեց, թէ ինչպէս՝ չնայած հազարաւոր կամաւորներու դրած երկար ժամերուն եւ միլիոնաւոր տոլարներու շնորհումներուն, անոնք յաջողութեան չէին հասնէր՝ առանց Աստուծոյ: Ան կրկնեց, որ կազմակերպութիւնը ծաղկած է, ո՛չ թէ թափուած մարդկային շատ Զանքերու շնորհիւ, այլ որովհետեւ Աստուած հոգացած էր անոնց համար:

Դանիէլ հասկեցաւ կարեւորութիւնը Աստուծոյ վերագրելու բարի պարգեւներու տուչութիւնը: Երբ Նաբուգոդոնոսոր թագաւորը տեսաւ ապագայի համար երազ մը, ան կ'ո՛չ ըրաւ Բաբելոնի բոլոր իմաստուններուն՝ մեկնաբանելու զայն: Վրդովուած՝ անոնք բողոքեցին, որ երկրի վրայ ո՛չ մէկը կրնայ ընել ա՛յն, ինչ որ թագաւորը խնդրեց. այդ՝ կը պահանջէ գերբնական ուժ մը (Դան. 2. 10-11): Դանիէլ համաձայնեցաւ եւ ըսաւ. «Թագաւորին հարցուցած գաղտնիքը իմաստունները, աստղագէտները, մոգերն ու բախտ նայողները չեն կրնար պարզել: Բայց երկինքի մէջ գաղտնիքները յայտնող Աստուած մը կայ» (Հմ. 27-28): Հաւատքով, ան Աստուծոյ խնդրեց, որ երազը բացայայտէ իրեն: Երբ անոր աղօթքը պատասխան ստացաւ, Դանիէլ խոնարհ էր եւ շտապեց մեկնաբանութիւնը վերագրելու՝ ո՛չ թէ իր իմաստութեան ու կարողութեան, այլ իր մեծ Աստուծոյն (Հմ. 30., 45):

Ճիշդ է նշել ձեռքբերումներ, բայց միեւնոյն ժամանակ՝ մենք պէ՛տք է փառքը տանք՝ Աստուծոյ:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ Զեզի, որ Դո՛ւն ես բոլոր բարի բաներ տուողը: Ամէն:

Աստուած է բոլոր բարիքներուն աղբիւրը, ըլլայ ա՛յդ իմաստութիւն թէ մեր կարիքները: Դետեւաբար պատրաստ ըլլանք՝ մեր երախտագիտութիւնը յայտնելու եւ ամբողջ վարկը Իրեն տալու:

Յիսուս ըսաւ. «... Եկած եմ ա՛յս նպատակով»: [Մար. 1. 38]

ՔՐԻՍՏՈՍ՝ ՄԵՐ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹԻՒՆԸ

« Կրնա՞նք հրաւիրել ձեզ՝ ըլլալու գլխաւոր զեկուցողը մեր համազգային եկեղեցիներու առաջնորդներու համաժողովին»: Յօզէ (Jose)՝ կարգալէ ետք յայտնի կազմակերպութեան մը հրաւէրը, պատասխանեց. «Խնդրե՛մ, թոյլ տուէ՛ք՝ որ նախ աղօթեմ այս մասին»: Աւելի ո՛ւշ, երբ ան մերժեց առաջարկը, ըսաւ իր ընկերոջ. «Ես գիտէի, որ Աստուած կը կանչէր զիս՝ խմբագրական աշխատանքի առաքելութեան ծրագիրի մը, եւ համագումարի մը խօսելու յանձնառութիւնը ժամանակ եւ կենսուժ պիտի պահանջէ: Ո՛չ ըսի, որպէսզի կարենամ ընել ա՛յն, ինչ՝ որ Աստուած կ'ուզէ, որ ընեմ»:

Ա՛յն ինչ որ Աստուած կ'ուզէ, որ ես ընեմ. այդ էր Յօզէի առաջնահերթութիւնը եւ ինչ որ որոշեց ընել: Յիսուս նաեւ իր առաջնահերթութիւնը ըրաւ՝ Աստուծոյ նպատակը: Աստուծն՝ Կափառնայուժի մէջ շատերու բժշկելէ ետք, որոնք հիւանդ եւ դիւահար էին, Յիսուս գնաց ամալի տեղ մը աղօթելու (Մարկ. 1. 32-35): Աշակերտները եկան ու ըսին. «Բոլորը կը փնտռեն քեզ» (Հմ. 37): Զինք փնտռողներէն ոմանք՝ շատ հաւանաբար բժշկութիւն պիտի խնդրէին: Սակայն՝ Քրիստոս թոյլ չտուաւ, որ անմիջականութիւնը կամ անսպասելի ժողովրդականութիւնը՝ որոշեն, թէ ինք ի՞նչ ընելու է յետոյ: Ան ըսաւ. «Եկէ՛ք երթանք մերձակայ գիւղաքաղաքը, որպէսզի հոն ալ քարոզեմ, որովհետեւ եկած եմ ա՛յս նպատակով» (Հմ. 38): Յիսուս հետեւեցաւ իր ճշգրտ առաջնահերթութեան. ծառայութիւն մը, որ կ'ընդգրկէր Գալիլիայի մնացած մասը, եւ ծառայութիւն մը, որ կը ներառէր քարոզչութիւն (Հմ. 39):

Ինչպէ՞ս կրնանք իմանալ Աստուծոյ նպատակը: Աղօթքով մօտենանք Իրեն, առաջնորդուելով իր իմաստութեամբ, որ կը գտնուի Սուրբ Գրութիւններուն մէջ եւ խորհուրդ փնտռելով մարդոցմէ, որոնք կը հետեւին իր ճամբաներուն: Եկէ՛ք մեր կեանքը անցընենք ընելով ա՛յն, ինչ որ Աստուած կ'ուզէ, որ ընենք:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրե՛մ՝ ցո՛յց տուր ինձի, թէ ինչ կ'ուզես, որ ես ընեմ: Ամէն:
Եկէ՛ք նպատակադրենք Աստուծոյ դիմելը, որ մեզ առաջնորդէ իր նպատակին համեմատ մեր առնելիք քայլերուն մէջ:



Բռնեցէ՛ք մեզի աղուեսները, այգիները փճացնող պզտիկ աղուեսները: [Երգ. 2. 15]

ԲՈՆԵԼ ՓՈՔՐԻԿ ԱՂՈՒԷՍՆԵՐԸ

Մեծ մայրիկս կ'ըսեր. «Փոքրիկ աղուէսները որթատունկը կը փճացնեն»: Յետոյ՝ մայրս նոյն բանը կրկնեց: Եւ հիմա՛ ես կ'ըսե՛մ իմ զաւակներուս: Բայց ի՞նչ կը նշանակէ՛ զգուշանալ «փոքրիկ աղուէսներէն»:

Խաղողի որթատունկեր տնկելէ ետք, կրնայ քանի մը տարիներ տեւել, մինչեւ որ ատոնք՝ պտուղ տան: Որթատունկները կը պահանջեն՝ մեծ համբերութիւն, խնամել, ջրել, յօտել եւ պաշտպանել: Աղուէսները, թէեւ փոքր են, սակայն կրնան վնաս պատճառել՝ ոչնչացնելով արմատները, ուտելով խաղողը կամ ծամելով ցօղունը:

Երգերուն Երգը բանաստեղծական սիրոյ պատմութեան մէջ, Սողոմոն կը զգուշացնէ. «Բռնեցէ՛ք մեզի աղուէսները, այգիները փճացնող պզտիկ աղուէսները» (2. 15): Որոշ գիտնականներ կը կարծեն, որ սա՛ կը վերաբերի փոքր խնդիրներու կամ վարքագիծի, որոնք կրնան սպառնալ երիտասարդ տղամարդու եւ կնոջ յարաբերութիւններուն, եթէ չի վերստուգուին:

Նմանապէս մեր հոգեւոր ճամբորդութեան համար՝ փոքր բաները, ինչպիսին են՝ դառնութիւնը (Եբ. 12. 15), «վատ խօսքերը» (Եփ. 4. 29) կամ նոյնիսկ ուրիշներու վնասակար ազդեցութիւնը (Ա. Գորնթ. 15. 33), կրնան սպրդել մեր կեանքերուն մէջ եւ հազիւ թէ նշմարուին:

Մեծ մայրս հասկցա՛ւ, որ փոքր բաները կրնան՝ մեծ վնասներ պատճառել, եւ անոր իմաստութիւնը շատ բան կը խօսէր իր թոռներուն համար: Երբ մենք ժամանակ կ'անցընենք աղօթելով եւ կարգալով Աստուածաշունչը, Հոգին կ'օգնէ մեզի «բռնելու փոքրիկ աղուէսներ»՝ փորձութիւններն ու սովորութիւնները, որոնք կրնան փճացնել մեր յարաբերութիւնները ուրիշներու եւ քալալու Քրիստոսի հետ:

Աղօթք - Սիրելի Յայր, կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի զգոն ըլլալու եւ զբաղելու փոքր բաներով, որոնք մեծ վնասներ կը պատճառեն: Ամէն:

Ի՞նչ փոքր բաներ պետք է բռնել՝ նախքան ատոնք վնաս պատճառեն: Ինչպե՞ս կրնանք զգուշացնել ուրիշներու, որ ուշադիր ըլլան «փոքր աղուեսներէն»:

Պօղոս ալ՝ Նեղանալով՝ դարձաւ եւ ըսաւ այդ ոգիին.
«Յիսուս Զրիստոսի անունով կը հրամայեմ քեզի՝ ելի՛ր
անկէ: [Գործք 16. 18]

ԱՆԱԿՆԿԱԼ ԸՆԴՀԱՏՈՒՄ

Մանուէլ՝ ուշացած էր եկեղեցի եւ բռնուած էր կարմիր լոյսին տակ: Մինչ ան անհամբեր կը սպասէր, իր դուստրը նկատեց վարորդ մը, որ կը փորձէր անիւ մը փոխել: «Հայրի՛կ, դուն անիւ փոխելու մէջ՞ շա՛տ լաւ ես»: ըսաւ ան: «Դուն պէ՛տք է օգնես անոր»: Մանուէլ հիմա շատ պիտի ուշանար, բայց ան գիտէր, որ սա՛ Աստուածային նշանակում մըն էր: Ան կա՛նգ առաւ օգնելու, նոյնիսկ միւս վարորդին հրաւիրելով եկեղեցի:

Պօղոս ու Շիղա՝ ընդհատումի մը հանդիպեցան Գործք Առաքելոց 16-ին մէջ: Անոնք հանդիպեցան չար ոգիով աղախինի մը, որ կը շարունակէր աղաղակել (Հմ. 17): Քանի մը օր շարունակ՝ Պօղոս անտեսեց անոր: Ի վերջոյ, ան չափազանց զայրացաւ եւ ըսաւ դեւին. «Յիսուս Քրիստոսի անունով կը հրամայեմ քեզի՝ ելի՛ր անկէ» (Հմ. 18):

Պօղոս գիտակցաբար որոշում կայացուց՝ ծառայելու ուրիշներուն, նոյնիսկ երբ այդ անյարմար ըլլար: Երբ ան ազատեց աղջկան, ամէն ինչ աւելի բարդացաւ: Անոր տէրերը կորսնցուցին իրմէ դրամ վաստկելու միջոցները (Հմ. 19), ուստի «բռնեցին Պօղոսը եւ Շիղան, ու քաշեցին հրապարակը՝ պետերուն առջեւ» (Հմ. 19): Յետոյ անոնց ձեծեցին եւ առանց դատի՝ բանտ նետեցին (Հմ. 22-24):

Քրիստոսի ծառայելը՝ գին ունի: Յիսուս ըսաւ Իր աշակերտներուն, որ անոնք պէտք է վերցնեն իրենց խաչը եւ հետեւին Իրեն (Մատթ. 10. 38): Սա՛ է՝ Յիսուսի ճանապարհը. մենք կ'ընդհատուինք եւ երբեմն կը տանջուինք, ինչպէս մեր Փրկիչը: Ան մեզի կը հրաւիրէ ընդունելու այդ անսպասելի ընդհատումները. Ինչպէ՞ս պիտի պատասխանենք, երբ անոնք գան:

Աղօթք - Սիրելի Հայր, կը խնդրեմ՝ բա՛ց իմ աչքերս այսօր՝ անյարմարութեան պահերուն, երբ Դուն կրնայ ըլլալ, որ ինձի ցոյց կու տաս ուրիշներու ծառայելու հնարաւորութիւնը: Ամէն:
Երբ Աստուած ընդհատէ մեր կեանքն ու գործերը, պատրաստ պիտի ըլլա՞նք հնազանդելու Իր պատուերին եւ ընելու մեր առջեւ դրած պարտականութիւնը:

Առաքինի կիևը՝ գիշերը կը կանգնի ու տան մարդոց՝ կերակուր կու տայ: [Առ. 31. 10, 15]

ՄԵԾ ՄՕՐ ՄԸ՝ ԱՂՕԹՔԸ

Շատ տարիներ առաջ ընտանեկան վերամիաւորման ժամանակ մայրս կիսուեցաւ իր գրած խօսքերէն՝ որո՞չ մաս մը: Ան մեծարեց իր մեծ մայրը, կի՛ն մը, որու ես երբէ՛ք չեմ հանդիպած, բայց յաճախ լսած էի իր մասին, թէ ինչպէ՛ս իր մասին կը խօսէին: Մայրս գրեց, որ կը յիշէ՝ թէ ինչպէ՛ս Մայրիկ Սուզանը (Mama Susan)՝ կ'արթննար «արշալոյսէն առաջ» եւ կ'աղօթէր իր տան բոլոր անդամներուն համար: Ինչպի՛սի շիտակ յիշողութիւն, որ ազգած էր մօրս կեանքին վրայ, որու կը կառչիմ ես նոյնիսկ այսօր՝ թէեւ երբէ՛ք չեմ հանդիպած իմ մեծ մօրս:

Այս նկարագրութիւնը՝ ինծի կը յիշեցնէ Առակաց 31-ին մէջ նկարագրուած կինը: Ան կը հոգար իր ընտանիքին՝ շօշափելի ձեւերով եւ վեր կանգնեցաւ՝ երբ ընտանիքի միւս անդամները տակաւին կը քնանային: Ան շատ ընելիքներ ունէր իր ընտանիքին համար. օրինակ՝ սնունդ ապահովել, հող գնել, խաղողի այգի տնկել, շահաւէտ առեւտուր ընել, հագուստ կարել եւ շատ այլ գործեր աւարտել. բոլորը իր սիրելիներուն հոգ տանելու համար: Եւ ա՛ն նո՛յնիսկ իր հնարամտութիւնը տարածեց «դժբախտին ու ... աղքատին» (Հմ. 20):

Առակաց 31-ը գրելու ժամանակ ընտանիքին հոգատար ըլլալը՝ դիւրին գործ մը չէ՛ր, ինչպէս ցոյց տրուած է այս հատուածին մէջ նկարագրուած պարտականութիւններու երկար ցանկին մէջ: Մեծ մօրս համար ալ՝ հեշտ արարք մը չէր, որ ծնած էր 1800-ական թուականներուն: Սակայն կանուխ առտուն, ինչպէս նաեւ ամբողջ օրուան ընթացքին, այս կիներուն շնջացող աղօթքները՝ պահեցին կեդրոնացած եւ քաջալերուած, քանի որ Աստուած օգնեց անոնց կեանքի կոչելու իրենց ընտանիքին եւ ուրիշներուն համար հոգ տանելու իրենց կոչումը:

Աղօթք - Սուրբ Աստուած, շնորհակալութիւն՝ կիներուն եւ տղամարդոց համար, որոնք հաւատարմօրէն հոգ կը տանին իրենց ընտանիքներուն: Կը խնդրե՛մ, օգնե՛ ինծի, որ նոյնը ես ընեմ: Ամէն:
Երբ մեր գործերն ու պարտականութիւնները կ'աւարտենք՝ կը ոգեւորուինք: Ու երբ ամէն օր կանոնաւոր աղօթենք, մեր գործերը աւելի արդիւնաւոր կ'ըլլան:

Ես պառկեցայ ու քնացայ, արթնցայ, քանի Տերը ինձի նեցուկ եղաւ: [Սաղմ. 3. 5]

ԱՆՔՈՒՆ

Ընկերս վստահեցուց, որ լաւ չի՛ քնանար: Իր անքնութիւնը՝ կապուած էր ընտանեկան ծանր իրավիճակի մը հետ, որ զինք գիշերները կ'արթնցնէ: Պատահեցաւ, որ սա՛ այն օրն էր, երբ ես պատրաստ էի քննարկելու Սաղմոս 3-ը, մեծահասակներու Կիրակնօրեայ Դպրոցի դասարանիս մէջ:

Սաղմոս 3-ին մէջ՝ Դաւիթ թագաւոր նաեւ ընտանեկան խնդիր մը ունէր, որ մեզմէ շատերուն կը տանի անքնութեան: Անոր որդի Աբիսողոմը՝ կը խաթարէր Դաւիթի իշխանութիւնը Իսրայէլի վրայ՝ որպէս զինք տապալելու եւ իր թագը խլելու իր ծրագիրին մէկ մասը:

Դաւիթ յուսահատութեան մէջ էր: Ան փախաւ Երուսաղէմէն, երբ տեղեկաբեր մը րսաւ. «Իսրայէլացիներուն սիրտը Աբիսողոմի դարձաւ» (Բ. Թագ. 15. 13): Սաղմոս 3. 1-ին մէջ, Դաւիթ կը նկարագրէ իր իրավիճակը. «Ո՛վ Տէր, հակառակորդներս ո՛րքան շատցան»:

Բայց ուշադրութիւն դարձնենք, թէ ինչպէ՛ս Դաւիթ խաղաղութիւն գտաւ: Ան յիշեց, որ Աստուած իր պաշտպանութեան վահանն էր, եւ Ան «իր գլուխը կը բարձրացնէ» (Հմ. 3): Ապա՝ եկաւ այն օգնութիւնը, որ մեզ բոլորիս անհրաժեշտ է, երբ կ'անհանգստանանք մեր պարագաներով. Դաւիթ կը րցաւ «Պառկիլ եւ քնանալ»: Ան նկատեց. «Արթնցայ, որովհետեւ Տէրը ինձի նեցուկ եղաւ» (Հմ. 5):

Ընկերոջս համար, որ դժուար ժամանակներու մէջ կ'ապրի, սա՛ հիանալի նորութիւն էր: Եւ բոլորիս համար, որոնք կը դիմակալեն դժուար իրավիճակներ եւ անքուն գիշերներ, մեր Աստուածը մեզ կը պաշտպանէ եւ հանգիստ կու տայ: Երբ մենք կը վստահինք Իրեն, Ան կ'օգնէ մեզի «պառկելու եւ քնանալու» (Հմ. 5):

Աղօթք - Երկնաւոր Յայր, երբեմն Դաւիթի պէս՝ ես ալ կը բացագանչեմ. «Որքա՛ն շատ եմ իմ թշնամիներս»:

Բայց Դուն այնտեղ ես ինձի համար: Կը խնդրեմ, պաշտպանէ գիս, բարձրացուր գլուխս եւ թոյլ տուր ինձի պառկելու եւ քնանալու:
Ամէն:

Երբ դժուարութեան, նեղութեան եւ հալածանքի մէջ եմք, վստահինք Աստուծոյ՝ օգնութեան եւ հանգիստ՝ մեր քունը քաշենք:

ՑԱՆԿ ՆԻԹՈՑ

Աղօթք.....	Ապ. 4, Մայ. 1, 14, Յուն 23, 26, 29
Առատաձեռնություն.....	Ապ. 6, 10, 14, Մայ. 13, Յուն. 12
Աստուծոյ Նկարագիրը.....	Ապ. 2, 25, Մայ. 3, 4, 13, 15, 31, Յուն. 1, 6, 8, 15, 17, 22, 24, 30
Աստուծոյ Սերն ու Հոգատարությունը ..	Ապ. 3, 22, 27, 29, 30, Մայ. 8, 10, 18, 20, 30, Յուն. 3, 8, 20, 25
Աստուծոյ Վստահիլ.....	Ապ. 3, 29, 30, Մայ. 10, 11, 14, 17, 24, 30, 31, Յուն. 3, 20, 21, 26
Ապաշխարություն.....	Յուն. 15
Աւետարանչություն.....	Ապ. 14, Մայ. 28, 29, Յուն. 8
Բազմամշակոյթ/Յեղ.....	Մայ. 13, Յուն. 19
Գուրթ.....	Մայ. 7
Դրախտ.....	Մայ. 26
Իմաստություն.....	Ապ. 16, 26, Մայ. 23, 31, Յուն. 10
Խորհրդատուություն.....	Ապ. 28
Ծառայել Ուրիշներու.....	Ապ. 6, 22, Մայ. 21, Յուն. 11, 29
Ծերանալ.....	Ապ. 7
Համայնք.....	Մայ. 19, 21, Յուն. 18
Համբերություն.....	Ապ. 25
Հանգիստ.....	Յուն. 30
Հաշտություն.....	Ապ. 2, 9, 23
Հեղություն.....	Մայ. 5, 6
Հիւանդութեան Դեմ Պայքարիլ.....	Ապ. 27
Հնազանդություն.....	Յուն. 14, 26
Հոգեկան Աճում.....	Մայ. 23, Յուն. 2, 6, 9, 16, 23
Հոգեկան Կարգապահություն.....	Ապ. 5
Հոգեկան Մարտ.....	Յուն. 13
Մահ.....	Ապ. 17
Մատակարարություն.....	Յուն. 5, 29
Մեղք.....	Ապ. 19, Յուն. 23, 27
Մեղքերու Թողություն.....	Ապ. 2, 9, 14, 19, Յուն. 15
Մոլություն.....	Մայ. 19
Մտահոգություն.....	Մայ. 11,

Յարաբերութիւններ	Մայ. 12
Յոյս	Ապ. 27, Մայ. 3, 14, Յուն. 6, 11, 17, 24
Յուսահատութիւն	Ապ. 29
Ներել Ուրիշներու	Ապ. 2, 9, 16, 23
Որոշում կայացնել	Ապ. 26
Ուրախութիւն	Մայ. 4
Ուրիշ Հաւատացեալներու Հետ Ապրիլ	Յուն. 7
Զքմեղական	Մայ. 2, 9, 16, 23
Պատերազմ	Մայ. 26
Սիրել Ուրիշները	Ապ. 1, 6, 8, 10, 11, 14, 15, 22, Մայ. 2, 7, 9, 21, Յուն. 4, 29
Սուրբ Գիրքի Սերտողութիւն	Ապ. 12, Մայ 1
Սուրբ Հոգի	Ապ. 12, Մայ. 1, 17, 29, Յուն. 8
Ստեղծագործութիւն	Մայ. 18
Վաւերականութիւն	Յուն. 6
վիշտ	Ապ. 11, Յուն. 4
Տառապանք	Ապ. 25, 27, 30, Մայ. 3, 4, 10, 11, 14, 20, 30, Յուն. 6, 11, 17, 24
Տօնակատարութիւն	Ապ. 13
Յեղապաշտութիւն	Յուն. 19
Փորձութիւն	Ապ. 27
Փրկութիւն	Ապ. 19, 21, 24, Մայ. 9, 16, 27, 30, Յուն. 9, 22
Բաջալերութիւն	Մայ. 7, 25,
Բաւութիւն	Ապ. 21, Մայ. 30
Երիստոսի Անձը/Գործ	Ապ. 13, 18, Մայ. 9, 16, 27
Երիստոսի Աստուածութիւնը	Մայ. 14, 16
Երիստոսի Համար Ապրիլ	Ապ. 5, 17, Մայ. 8, Յուն. 14, 28
Երիստոսի Հետ Միութիւն	Ապ. 26, Մայ. 1, 8, 15, 22, Յուն. 28
Երիստոսի Մահը	Ապ. 18, 19, 20
Երիստոսի Յարութիւնը	Ապ. 20
Երիստոսի Նկարագիրը	Յուն. 21, 28
Երիստոսի Նման Ապրիլ	Ապ. 8, 28, Մայ. 2, 12, Յուն. 14

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Եթէ կը ճանչնաք անձեր, որոնք պիտի փափաքին այս գրքոյկին յաջորդ թիւերը ունենալ կրնաք անոնց անունները ու հասցէները գրել վարի կտրոնին վրայ եւ ղրկել հետեւեալ հասցէներէն մէկուն.–

Սփիւռքի հասցէ՝
Armenian Missionary Association
31 West Century Road
Paramus, NJ 07652
Tel. 201.265.2607 - E-mail: info@amaa.org

Հայաստան եւ Կովկասեան երկիրներ դիմել՝
Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն
Բաղրամեան Փողոց, Թիւ 18
Երեւան, Հայաստան
հեռ. (374-10) 54-35-76

Name/Անուն.....

Address/Հասցէ.....
.....

Tel./Հեռ.....
.....

Name/Անուն.....

Address/Հասցէ.....
.....

Tel./Հեռ.....